



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 127 2022

ՀՀ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՒԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Վերոգ Քաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Վերոգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 12.02.2022թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4.5 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հայկ Մկրտչյան Ծանր վիրավորանքը և դրա քրեաիրավական որակումը	3
Հայկ Ավետյան Օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում՝ որպես քրեական իրավունքի կարևոր սկզբունք...	7

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նաիրա Շահինյան Ապացուցողական չափորոշիչների առանձնահատկությունները սկզբնական և շարունակվող կայանքը սահմանելիս	14
--	----

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գոռ Հովհաննիսյան Խնդիր. Նախարարի դողդողոցը.....	20
---	----

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Նազարեթյան Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման կարգը ..	31
Արման Հակոբջանյան «COVID-19» Կորոնավիրուսային հիվանդության մարտահրավերը Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային արդարադատության համակարգին	38

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Инна Персесян Гайд-парки как места реализации права на свободу собраний	44
Եղիշե Բազդյան Խորհրդարանական ընդդիմության գործունեության ինստիտուցիոնալ կարգավորման անհրաժեշտությունը.....	48

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայկ Շահբազյան Սուբյեկտիվ իրավունքի խորհրդային իրավական դոկտրինը	56
--	----

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լեոնիդ Նահապետյան Զինվորական հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը	61
---	----

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անուշ Մովսիսյան Հանրային ծառայության տեսակները և դրանց առանձնահատկությունները	66
---	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	72
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	84
--	----

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՈՒՄԸ

Մարդու պատիվն ու արժանապատվությունը հանդիսանում են նրա անքակտելի իրավունքը, որը ենթադրում է նաև պաշտպանություն ցանկացած տիպի ոտնձգությունից: Սակայն այդ իրավունքն անխուսափելիորեն զուգակցվում է նաև այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների հետ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք¹: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Նույնաբովանդակ երաշխիքներ սահմանում են նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Միջազգային փաստաթղթերում ամրագրումները լոկ հոչակագրային չեն: Այդ նորմերը գործնական արտացոլում պիտի ստանան իրավակիրառ պրակտիկայում, ըստ էության բացառելով կարծիքներ ու գաղափարներ ստանալու ու դրանք տարածելու համար որևէ արհեստական խոչընդոտ կամ հետապնդում: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները, ուղղված էին հենց այս նպատակների իրագործմանը: Տարբեր պետություններ զրպարտության կամ վիրավորանքի քրեականացումը տարիներ ի վեր օգտագործել են ավտորիտար ռեժիմներ հաստատելու համար:

Իրականացված փոփոխությունների արդյունքում քրեական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածները ճանաչվեցին ուժը կորցրած և իրենց արտահայտումը գտան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում²:

Ապաքրեականացված հոդվածը բնութագրում էր ծանր վիրավորանքը, որպես ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը:

Տեսական ընկալումներում ծանր վիրավորանքը, որպես իրավական եզրույթ ունի ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեաիրավական բնորոշումներ, որոնց համար սահմանված չափորոշիչները տարբեր են: Սակայն, մեզ հետաքրքրում է քննարկվող խնդիրը քրեական օրենսդրության համատեքստում: Քննարկման արդիականությունը պայմանավորված է օրենսդրի կողմից կատարված փոփոխություններով, որոնց արդյունքում քրեական օրենսդրություն վերադարձվեց ծանր վիրավորանքը, որպես հանցակազմ:

Քաղաքացիական օրենսդրությամբ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է³: ՀՀ Վճռաբեկ դատարանը քաղաքացիական գործերով իր նախադեպային որոշումներում արտահայտել է հետևյալ դիրքորոշումը: Վիրավորվանքը կարող է դրսևորվել խոսքով, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր, պատկերների միջոցով (նկարներ, տարածական պատկերներ), ձայնի (ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ տարբեր հնչերանգների կիրառումը), նշանների միջոցով (ժեստիկուլյացիաներ, սիմվոլներ): Նշված

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրության 2015 թվականի խմբագրությամբ, ՀՀՊՏ 2015.12.21:
² Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 2010.06.23:
³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մաս., ՀՀՊՏ 1998.08.10:

ցանկը սպառիչ չէ, և ինչպես նշել է Վճռաբեկ դատարանը այն կարող է դրսևորվել տարբեր եղանակներով⁴:

Վճռաբեկ դատարանը ևս փաստել է, որ նախորդ իրավակարգավորմամբ ևս առաջանում էր խնդիր կապված տվյալ արարքի որակման և մեկնաբանման հետ, որն էլ հանգեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածի ապաքրեականացմանը:

Անդրադառնանք ծանր վիրավորանքի ներկայիս կարգավորմանը: ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածի համաձայն՝ անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայիոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը: Տվյալ իրավակարգավորման պարագայում ի հայտ են գալիս բազմաթիվ հակասություններ և բացեր: Ստացվում է, որ (խոսքը գնում է քրեական օրենսդրության մասին) օրենսդիրը հնարավորություն է տվել մեկնաբանել և կիրառել 137.1 հոդվածը, որպես գնահատողական կատեգորիա, քանի որ քրեական օրենսդրության մեջ անալոգիայի կիրառումը արգելվում է: Այստեղ փաստացի ամբողջ բեռը ընկնում է վարույթ իրականացնող մարմնի կամ դատարանի վրա, որն էլ ըստ էության պետք է որոշի ծանր վիրավորանք լինելու փաստը, ինչն էլ կարող է հանգեցնել այլակարծության, խսքի ազատության անհիմն սահմանափակմանը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի՝ **հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ**⁵:

Չպետք է նաև բացառել այս իրավանորմի կիրառումը քաղաքական դրդապատճառներից ելնելով, քննադատությունը բացառելու

միտումով⁶: Գտնում ենք, որ պետք է հնարավորին չափ նվազեցնել կամայական և սուբյեկտիվ կիրառման տեսակարար կշիռը տվյալ հանցակազմում:

Վերջերս նշված խնդրի հետ կապված իր մտահոգությունն է հայտնել Freedom House միջազգային իրավապահ կազմակերպությունը: Մասնավորապես այն կապված է իրավապահ մարմինների կողմից սոցիալական կայքերում պաշտոնատար անձանց լուսանկարի տակ վիրավորական մեկնաբանության գրելու կապակցությամբ և ձեռնամուխ են եղել պարզելու գրառման հեղինակի ինքնությունը նրան քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Կազմակերպությունը այդ կապակցությամբ հայտնել է, որ դա պայմանավորված է ՀՀ խորհրդարանի կողմից օրենսդրական փոփոխություններ կատարելու հետ, որով քրեականացվել է պաշտոնյաներին «ծանր վիրավորանք» հասցնելը: Կազմակերպությունը մեծ հետընթաց է համարել այս քայլը և նշել, որ ժողովրդավարական հասարակությունը պետք է հնարավորություն ունենա քննադատելու պետական պաշտոնյաներին և իշխանավորներին, չհամաձայնվել նրանց հետ և անել դա հրապարակայնորեն⁷:

Գիտական գրականության մեջ այս հարցի վերաբերյալ կան բազմաթիվ տեսակետեր: Մասնավորապես՝ Ի.Դ. Կովալչենկոն նշում է, որ ցանակացած սերունդ ի վիճակի է ծայրահեղականորեն փոխել առկա հասարակական հարաբերություններն և ցանկացած նոր սերունդ զարգացման տարբեր փուլերում փոխում և առաջ է քաշում իր ընկալումները: Սակայն այն կարող է գործել միայն հենվելով պատմական ժառանգության վրա, այն հոգևոր և նյութական ներուժի, որը նրանց է հասել նախորդ դարաշրջաններից⁸:

Հայտնի կրիմինալիստ գիտնական՝ Ն. Դ. Սերգեևսկին նշում է՝ «Ուսումնասիրելով որևէ ինստիտուտ կամ իրավակարգավորում, մենք

⁴ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ՝ ԵԿԴ/2293/02/10 էջ 8-9, ԼԴ/0749/02/10 էջ 8-9, և ԱՎԴ/0179/02/13 էջ 9 որոշումներ:

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն 2015թ. խմբագրությամբ, 79-րդ հոդված.:

⁶ Մինչ այս պահը հարուցված 9 քրեական գործերից բոլորը վերաբերում են քաղաքական գործիչներին ուղղված խոսքին:

⁷ Տե՛ս <https://www.coe.int/en/web/freedom-expression/internet-users-rights> կայք էջ

⁸ Տե՛ս Ковальченко И.Д. Методы исторического исследования (Монография)/ И.Д. Ковальченко; Отделение историко-филологических наук, 2-е изд., доп.М; Наука, 2003.-486 с.: ил.

բացահայտում ենք այն պայմանները և պատճառները, որոնք հիմք են հանդիսացել դրա առաջացման և զարգացման համար: Սա իմանալով մենք ի վիճակի ենք գնահատել դրա ժամանակակից իմաստը, այլ կերպ ասած մենք հնարավորություն ենք ձեռք բերում որոշելու արդյոք անհրաժեշտ է տվյալ իրակարգավորման պահպանումը, թե անհրաժեշտություն է առաջացել, որպեսզի այն իր տեղը զիջի, որպես իր կենսական կարևոր նշանակությունը կորցրած, որոնք կապված են նոր ի հայտ եկած հանգամանքներով: Ինչպիսին պետք է լինի այդ նոր իրավակարգավորումը: Այս հարցի լուծման համար կրկին իր զգալի տեղն է զբաղեցնում անցած ժամանակաշրջանների արդյունքում ձեռք բերած պատմական փորձը: Ամփոփելով ասվածը, որպեսզի հասկանալ, քննադատել կամ գնահատել քրեական օրենսդրությունը անհրաժեշտ է իմանալ դրա պատմությունը, հակառակ դեպքում բոլոր մեր դատողությունները կլինեն հիմնազուրկ և թույլ փաստարկված⁹»: Վերլուծելով նշված տեսակետները պետք է ենթադրել, որ ցանկացած իրավահարաբերության կարգավորում՝ հատկապես քրեաիրավական հարաբերությունների պահանջում է խորը և հիմնավորված վերլուծություն, որպեսզի ձևավորվի իրապես կայացած իրավական համակարգ, որում առաջնային է ոչ թե մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը, այլ դրանց արդյունավետ պաշտպանությունը, ինչու չէ նաև հանցավորի նկատմամբ արդարացի պատժի նշանակման համար:

Կարծես թե ազգային քրեական օրենսդրությունը գտել էր այդ երկույթի դեմ պայքարը: Խոսքը գնում է խուլիգանության հանցակազմի մասին: Այսպես՝ ուսումնասիրելով խուլիգանության օբյեկտիվ կողմը մենք տեսնում ենք, որ այն կարող է դրսևորվել մի քանի եղանակներով՝ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և հասարակական կարգի կոպիտ խախտման մեջ:

Հասարակական կարգի կոպիտ խախտումը կարող է դրսևորվել հասարակ խուլիգանության հանցակազմով, օրինակ՝ անպարկեշտ

արտահայտություններ անելով.....¹⁰: Այստեղ պետք է համեմատական անցկացնել ծանր վիրավորանքի և խուլիգանության հանցակազմերի միջև: Նախ երկուսն էլ ըստ էության ենթադրում է, որ պետք է լինի բացահայտ հրապարակայնորեն, երկուսն էլ ըստ էության խախտում են հասարակության մեջ ձևավորված բարոյական նորմերը, բայց, եթե խուլիգանության դեպքում կարելի է հստակ տարբերել դրա տարրերը և հատկանիշները, ապա ծանր վիրավորանքի դեպքում, որևէ հստակություն իրավանորմի մեկնաբանման տեսանկյունից բացառված է: Հնարավոր չէ հստակ որոշել ծանր վիրավորանքի հանցակազմի տարրերը, իսկ եթե փորձ է արվում մեկնաբանել, ապա այն նույնականացվում է խուլիգանության հանցակազմի տարրերին, այսինքն խուլիգանության հանցակազմը կորցնում է իր քրեաիրավական նշանակությունը: Հարկ է նշել, որ օրենքի նախագծի հիմնավորման մեջ, որևէ խոսք չկա, թե ինչպես պետք է սահմանազատում դնել այս երկու հանցակազմերի միջև: Խնդրահարույց է նաև հանցագործության սուբյեկտի տարիքի հարցը: Ըստ էության ծանր վիրավորանքն ընդգրկված է անձի պատվի, արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունների շարքին, ինչը ենթադրում է, որ այս հանցագործության սուբյեկտի տարիքն ընդհանուր է: Այնուամենայնիվ կարծում ենք, որ պարզապես փորձ է արվել հնարավորին չափ խուսափել այն խուլիգանության հետ նույնացնելուց, ինչը մեր կարծիքով այդքան էլ միանշանակ չէ, քանի որ այս երկու հանցակազմերն ուղղված են հասարակական կարգի դեմ, որովհետև երկուսն էլ պետք է դրսևորվեն հրապարակային: Այդ պարագայում անձը նաև անհարգալից վերաբերմունք է դրսևորում հասարակության հանդեպ և հասարակության մեջ ձևավորված մշակութային և բարոյական արժեքների դեմ: Համեմատելով ներկա և նախորդ կարգավորումները, ապա անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ թե նոր և թե նախկին խմբագրությամբ հղվածները տարածական մեկնաբանման տեղիք էին տալիս: Դրանք հնարավորություն չէին ընձեռում հստակ իրավական կողմնորոշիչներ

⁹ Сѣн Сергеевский Н.Д. Русское уголовное право. Общая часть. Пособие к лекциям, 7-е издание- Санкт-Петербург, Тип. М. М. Стасюлевича, СПб., 1908. Объем страниц 391.
¹⁰ Сѣн << քրեական իրավունք դասագիրք. Եր., Երևանի համալ.իրատ.: 6-րդ հրատ.՝ 2012թ.:

սահմանագծել; Նախկին ապաքրեականացման գործընթացի հիմնավորում ծառայել էր նաև այս հանգամանքը, ինչպես նաև այդ հոդվածի հակասումը միջազգային ժողովրդավարական չափանիշներին:

Դրա մասին է նաև վկայում վերջերս Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիմումի ներկայացումը Սահմանադրական դատարան կապված այդ իրավանորմի Սահմանադրությանը համապատասխանության հարցի քննարկումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածի համաձայն՝ անձին ծանր վիրավորանք հասցնելը բնորոշվում է՝ հայհոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելու մեջ:

Հոդվածը պարունակում է հետևյալ բացերը՝

1. տվյալ իրավակարգավորումն ոչ ամբողջական է ուսումնասիրված և ընդունված է հապճեպ, քանի որ վիրավորանքը գնահատողական կատեգորիա է, և, եթե ուսումնասիրենք լեզվական մշակույթն ու անվանի հեղինակների գրական երկերը կտեսնենք այնպիսի բառերի կիրառում, որոնք տարբեր համատեքստերում ունեն բովանդակային տարատեսակ ընկալումներ: Օրինակ՝ եթե անձը ընդունում է, որ վերջինս գող է կամ մարդասպան, կամ փաստերի համադրումը և անձի խոստովանությունը կատարած հանցանքի՝ դավաճանության, մարմնավաճառության կամ կաշառքի դեպքում արդյոք վիրավորանք է:
2. Հստակ սահմանված չէ այն արտահայ-

տությունների կամ բառերի ցանկը կամ դրանց բնույթը նկարագրող որևէ կարգավորում, որոնց միջոցով հնարավոր կլիներ հստակ տարբերել ծանր վիրավորանքը, հայհոյանքը կամ արժանապատվությունը նվաստացնող այլ ծայրահեղ անպարկեշտ եզրույթները:

3. Չկա հստակ տարբերակում կապված ծանր վիրավորանքի և խուլիգանության հանցակազմերի տարրերի միջև:
4. Առկա կարգավորումը հակասում է ժողովրդավարական սկզբունքներին և միջազգային ընդունված պրակտիկային:
5. Հակասության մեջ է մտնում Սահմանադրության դրույթների հետ, մասնավորապես նորմի որոշակիության և մարդու հիմնարար իրավունքների ու ազատություններին:
6. Ոչ լիարժեք է ուսումնասիրված հանցագործության սուբյեկտի հարցը, դրա համար առանց լրացուցիչ հիմնավորումների սահմանելով ընդհանուր պայմանները:

Ամփոփելով գտնում ենք, քրեաիրավական օրենսդրության վերոգրյալ փոփոխությունների իրական նպատակները համարժեք չեն քրեական իրավունքի նպատակներին: Իրականացված հապճեպության հետևանքով փոփոխությունները կարող են իրավակիրառ պրակտիկայում հանգեցնել լուրջ խնդիրների: Կարծում ենք, որ քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուն պես, օրենսդիրը չի նախաձեռնի համանման փոփոխություն նաև այդ օրենքում, այդպիսով խաթարելով նաև նոր օրենսդրության տրամաբանությունը:



ՀԱՅԿ ԱՎԵՏՅԱԼ

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, Գրախոս՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Գաբրույան

ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԵՎՈՐ ՍԿԶԲՈՒՆՔ

I. Ներածություն

Քրեական իրավունքը խարսխված է մի շարք առանցքային սկզբունքների վրա, որոնց շարքում՝ իբրև անձանց իրավաչափ ակնակիլիքի և որոշակիության երաշխիք հանդես է գալիս ժամանակի ընթացքում օրենքի գործողության սկզբունքը:

Այս սկզբունքի կարևորությունն ու դերն ընդգծելու համար անհրաժեշտ է նշել, որ անտիկ ժամանակներում՝ հանցագործությունների հստակ սահմանումների բացակայության պայմաններում՝ անձինք ենթարկվում էին քրեական պատասխանատվության զուտ իշխողի կամ արքայի կամքով: Այդպիսի իրավիճակն առաջացնում էր անարդարության և կամայականության քառասյին իրադրություն, երբ մարդիկ ապրում էին «ստրկացած»՝ իշխողի քմահաճույքի ճիրաններում: Աստիճանաբար, անձի՝ սեփական անհատականության և կարևորության գիտակցմանը զուգընթաց առաջ եկավ միայն օրենքի հիման վրա քրեական պատասխանատվության ենթարկվելու սկզբունքը՝ **“nullum crimen, nulla poena sine lege”** - «չկա հանցանք, չկա պատիժ՝ առանց օրենքի»:

Որոշ հեղինակների պնդմամբ այս սկզբունքն առաջին անգամ արտացոլվել է 1215 թվականի անգլիական «Ազատությունների մեծ խարտիայում»,¹ որի 39-րդ հոդվածը ամ-

րագրում էր, որ ոչ մի ազատ մարդ չի կարող ձերբակալվել, դատապարտվել առանց բարոնների օրինական դատի կամ առանց օրենքի:² Մյուս հեղինակների կարծիքով սկզբունքն իր ժամանակակից իմաստով ծագում է ֆրանսիական մեծ հեղափոխությունից, որը հաստատեց անհատի գերակայությունը սոցիումի նկատմամբ:³

Համաձայն վերոգրյալ սկզբունքի՝ անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն, եթե իր արարքը համարվում է հանցանք՝ գրված օրենքով:

Քննարկվող սկզբունքն առաջին անգամ օրենսդրորեն ամրագրվեց 1787 թվականին Ավստրիայում:⁴ Ներկայումս այն միջազգային և ներպետական մի շարք հիմնարար իրավական փաստաթղթերի անքակտելի մասն է:

II. Օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում

1. Ընդհանուր կանոնը

“Nullum crimen sine lege” սկզբունքն ամրագրված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի

¹ Stefan G., Journal of Comparative Legislation and International Law, Vol.24, No.1, Cambridge University Press, 1942, p. 29.
² Ավետյան Հ., Օրենքի հետադարձ ուժի արգելքը “Nullum Crimen Sine Lege” սկզբունքի համատեքստում, «Օրինականություն», Երևան, 2019, էջ 25:
³ Գաբրույան Ա., Հանցագործության հասկացությունն ու հատկանիշները, (Առաքելյան, Գաբրույան և այլք), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012թ, էջ 83:
⁴ Ավետյան Հ., Օրենքի հետադարձ ուժի արգելքը “Nullum Crimen Sine Lege” սկզբունքի համատեքստում, «Օրինականություն», Երևան, 2019, էջ 25:

համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»:

Համանման ձևակերպմամբ այս սկզբունքն ամրագրված է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասում և «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 11-րդ հոդվածի 2-րդ մասում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի, «ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի եղել»:

ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածում նշված է, որ «արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով»:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ յուրաքանչյուր անձ կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն քրեական այն օրենքով, որը գործել է նրա կողմից հանցանքը կատարելու ժամանակ: Եվ հակառակը՝ անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե արարքը չի համարվել հանցագործություն այն կատարելու ժամանակ գործող օրենքով:⁵

Այսպիսով, որոշելու համար, թե կոնկրետ դեպքում ո՞ր օրենքն է ենթակա կիրառման՝ անհրաժեշտ է հստակեցնել 2 հարց՝

- ո՞րն է քրեական օրենքի գործողության ժամանակը,
- ո՞րն է հանցագործության կատարման ժամանակը:

a) քրեական օրենքի գործողության ժամանակը

Իրավանորմերի ստեղծումը պետք է տարանջատել դրանց՝ ուժի մեջ մտնելուց: Իրավանորմերը ստեղծվում են իրավաստեղծման

գործընթացում:⁶ Հետևաբար նորմը գոյություն ունի, երբ ավարտվել է դրա ստեղծման համար անհրաժեշտ գործընթացը:⁷ Իրավաստեղծման գործընթացն ավարտվում է իրավական ակտը դրա հրապարակման համար նախատեսված պաշտոնական պարբերականում հրապարակման պահից, քանի որ այդ գործողությամբ ավարտվում է իրավաստեղծման գործընթացի բոլոր մասնակիցների գործունեությունը:⁸

Նորմի ուժի մեջ մտնելը, սակայն, նրա գոյության համար անհրաժեշտ չէ:⁹

Այս տարանջատումը կարևոր է օրենքի գործողության հստակ պահն ամրագրելու համար: Հաճախ, օրենքներն ուժի մեջ են մտնում ոչ թե հրապարակման պահից, այլ այդ օրենքում նշված՝ ուժի մեջ մտնելու պահից և հենց այդ պահից էլ այդ օրենքի կոնկրետ իրավանորմերը սկսում են գործել և կիրառվել: **Հետևաբար, քրեական օրենքի գործողության ժամանակն այդ օրենքի ուժի մեջ մտնելու պահն է:**

Մինչև 2020 թվականի հուլիսի 1-ն ընդունված նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումն իրականացվում էր համապատասխան տեղեկագրում («ՀՀ պաշտոնական տեղեկագիր» և «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր») պարբերական հրատարակությունների միջոցով (նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասություն): 2020 թվականի հուլիսի 1-ից հետո ընդունված նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակումն իրականացվում է արդարադատության նախարարության կողմից վարվող նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում հրապարակելու միջոցով (նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մաս):

Քրեական օրենքը կորցնում է իր ուժը և նրա գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում.

1. Քրեական օրենքի վերացումը: քրեա-

⁵ **Ղազինյան Գ.**, Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում, (Առաքելյան, Գաբուզյան և այլք), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012թ, էջ 46:

⁶ **Հովհաննիսյան Գ.**, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, Երևան 2020, էջ 156:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս նույն տեղում:

կան օրենքը վերացվում է օրենսդիր մարմնի, ՀՀ ազգային ժողովի կողմից:¹⁰

2. Քրեական օրենքի փոխարինումը քրեական նոր օրենքով: Այդպիսի փոխարինումը կարող է տեղի ունենալ 2 ձևով՝ ա) քրեական նոր օրենքում նշելով նախկին օրենքի վերացման մասին, բ) առանց այդ մասին նշելու: Վերջին դեպքում քրեական նոր օրենքը ուժի մեջ մտնելու պահից նախկին օրենքը դադարեցնում է իր գործողությունը և կորցնում ուժը:¹¹

3. Քրեական օրենքում նշված այն ժամկետն անցնելը, որի ընթացքում պետք է գործեր այդ քրեական օրենքը: Քրեական օրենքը կարող է ընդունվել որոշակի ժամանակահատվածի համար, պետությունում տեղի ունեցող որոշակի արտակարգ հանգամանքներով պայմանավորված:¹²

4. Սահմանադրական դատարանի կողմից քրեական օրենքի որևէ նորմի հակասահմանադրական ճանաչելը: Այս դեպքում կոնկրետ նորմը, որը սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Սահմանադրությանը հակասող, ուժը կորցնում է:

բ) Հանցագործության կատարման ժամանակը

Ինչպես արդեն նշվեց, արարքի հանցավորությունն ու պատժելիությունը որոշվում են այն կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, հետևաբար պետք է պարզել, թե որն է արարքը կատարելու ժամանակը:

Ձևական հանցակազմերի պարագայում, երբ վտանգավոր հետևանքների առաջացումը հանցակազմի պարտադիր հատկանիշ է, կամ նյութական հանցակազմերի դեպքում, երբ արարքի և վտանգավոր հետևանքի միջև ժամանակային խզում չկա կամ այն չնչին է (օրինակ՝ երբ հանցանք կատարող անձը հրազենով կրակում է տուժողին, և վերջինս տեղում մահանում է), հանցանքի կատարման պահի հետ կապված որևէ խնդիր չի ծագում: Սակայն, երբ արարքի և վտանգավոր հետևանքի

միջև որոշակի ժամանակահատված է անցնում (օրինակ՝ երբ հանցանք կատարող անձը հրազենով կրակում է տուժողին, սակայն վերջինս մահանում է հիվանդանոցում, մի քանի օր անց), հանցանքի կատարման պահի հետ կապված գիտնականներն ունեն տարբերվող կարծիքներ:

Մասնավորապես, իրավականական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Դուրմանովը նշում էր, որ նյութական հանցակազմերի դեպքում, երբ վտանգավոր հետևանքները նախատեսվում են օրենքով, որպես տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, հանցագործության կատարման ժամանակ պետք է համարել այդ վտանգավոր հետևանքների առաջացման ժամանակը:¹³ Նյութական հանցակազմերի դեպքում վտանգավոր արարքի կատարումը, որը հետևանքներ չի առաջացրել, որակվում է որպես հանցափորձ: Այդ պատճառով, որոշ գիտնականներ կարծում են, որ օրենքի այն ցուցումը, թե հանցանքը կատարելու ժամանակ պետք է համարել արարքը կատարելու պահը՝ հակասում է քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածին, ըստ որի հանցանքն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները:

Ստացվում է, որ ավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև այն ժամանակ, երբ դրա համար չկան քրեական օրենսգրքով նախատեսված հիմքեր: Ըստ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Ղազինյանի՝ «ավելի ճիշտ կլիներ նշել, ոչ թե այն հանգամանքը, որ անձը ավարտված հանցագործության համար կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել այն ժամանակ, երբ դրա համար չկան քրեական օրենսգրքով նախատեսված հիմքեր, այլ որ ավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվությունը, փաստորեն, կարող է վրա հասնել այն օրենքով, որի

¹⁰ Ղազինյան Գ., Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում, (Առաքելյան, Գաբուզյան և այլք), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012թ, էջ 47:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

¹² Տե՛ս նույն տեղում:

¹³ Дурманов. Н.Д., Советский уголовный закон. издательство московского университета, Москва 1967, с, 261.

գործողության ժամանակ հանցագործությունը դեռևս ավարտված չէր:»¹⁴

Այնուամենայնիվ ՀՀ քրեական օրենսգիրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վրանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից»:

Փաստորեն, օրենքը հանցանքը կատարելու ժամանակը կապում է բացառապես արարքը կատարելու պահի հետ: Իհարկե, ինչպես վերը նշվեց, այս մոտեցումը վիճելի է:

Հանցանք է համարվում ոչ միայն ավարտված հանցագործությունը, այլ նաև հանցափորձն ու հանցագործության նախապատրաստությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ «հանցափորձ է համարվում ուղղակի դիտարկությանը կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով:»

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի օրենսգրքի 35-րդ հոդվածի՝ «հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտարկությանը հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտարկությանը այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով:»

Ինչպես երևում է վերը նշված նորմերի ձևակերպումներից՝ թե՛ հանցափորձի, և թե՛ հանցագործության նախապատրաստության դեպքում հանցանքը կատարելու ժամանակը՝ հոդվածներում նկարագրված արարքները կատարելու պահն է:

Քրեական իրավունքի գիտությունը տարբերակում է նաև տևող և շարունակվող հանցագործություններ:

Տևող է այն հանցագործությունը, որի դեպքում հանրորեն վտանգավոր գործողությունը կամ անգործությունը իրականացվում է տևականորեն: Այդպիսի հանցագործությունները բնութագրվում են որոշակի հանցակազմի անընդհատ կատարմամբ:¹⁵ Օրինակ, ապօրինի զենք կրելը, դասալքությունը, թմրամիջոցներ ապօրինի պահելը և այլն:

Տևող հանցագործությունների դեպքում հանցանքը համարվում է ավարտված հանցավորի բռնվելու կամ մեղայականող ներկայանալու պահից կամ այլ հանգամանքների ուժով:

Այս հարցի շուրջ ևս գիտական տեսակետները տարբերվում են: Որոշ գիտնականներ կարծում են, որ տևող հանցագործությունների դեպքում հանցանքի կատարման ժամանակ պետք է համարել հանցակազմը կազմող առաջին գործողության կամ անգործության ժամանակը¹⁶, օրինակ՝ ապօրինի զենք կրելու դեպքում՝ զենքի կրումը սկսելու պահը:

Մյուս հեղինակների կարծիքով, տևող հանցագործությունների դեպքում հանցանքը կատարելու ժամանակ պետք է համարել հանցավորի բռնվելու կամ մեղայականով ներկայանալու ժամանակը:¹⁷ Քրեական իրավունքի գիտնականների մեծամասնությանը հենց այս մոտեցման կողմնակիցն է:

Շարունակվող է այն հանցագործությունը, որը բաղկացած է մեկից ավելի նույնական արարքներից, որոնց առանձին վերցրած թեկուզև հացակազմ կամ այլ իրավախախտում են, բայց ընդգրկված են միասնական դիտարկության մեջ և ունեն մեկ ընդհանուր նպատակ, ուստի միասին դիտվում են մեկ հանցագործություն:¹⁸ Օրինակ՝ հան-

¹⁴ Ղազինյան Գ., Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում, (Առաքելյան, Գաբրիելյան և այլք), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012թ, էջ 49:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 50:

¹⁶ Блум М. И., Тилле А. А., Обратная сила закона. М., 1965. с. 48., Уголовное право России. Общая часть. Москва, 2007. с. 34.

¹⁷ Галиакбаров Р. Р., Уголовное право. Общая часть. Краснодар, 1999. с. 53., Ղազինյան Գ., Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում, (Առաքելյան, Գաբրիելյան և այլք), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012թ, էջ 50:

¹⁸ Плотников А.И., Уголовное право России. Общая часть: учебник для бакалавров, Оренбург: ООО ИПК «Университет», 2016.

ցանք կատարողը ցանկանում է խոշոր չափերի գողություն կատարել, սակայն դա անում է ոչ թե միանգամից, այլ քանիցս մանր կամ զգալի չափի գողություններ կատարելով:

Այս դեպքում ևս, գիտնականներն ունեն տարբերակված մոտեցումներ: Մի մասը կարծում է, որ շարունակվող հանցագործության դեպքում հանցանքի կատարման ժամանակ պետք է համարել առաջին արարքը կատարելու ժամանակը,¹⁹ իսկ գերիշխաղ կարծիքի համաձայն շարունակվող հանցագործությունների դեպքում հանցանքը կատարելու ժամանակ է համարվում վերջին արարքը կատարելու ժամանակը:²⁰

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն կատարողից բացի հանցագործության մասնակիցներ են կազմակերպիչը դրդիչը և օժանդակողը: Վերջիններիս դեպքում հանցանքը կատարելու ժամանակ է համարվում նրանցից յուրաքանչյուրի կողմից իրենց արարքը կատարելու պահը:²¹

Այսինքն, հանցակիցներից յուրաքանչյուրը պետք է պատասխանատվության ենթարկվի այն օրենքով, որի գործողության ժամանակ ինքն անձամբ կատարել է իր արարքը:

Այս առնչությամբ ևս իրավաբանական գրականության մեջ առկա է վերը նշվածին հակասող կարծիք: Մասնավորապես նշվում է, որ հանցակիցների արարքը գոյություն չունի առանց կատարողի կողմից հանցանքի կատարման, հետևաբար ճիշտ կլինի մյուս հանցակիցների արարքի կատարման ժամանակ համարել հենց կատարողի՝ հանցանքի կատարման պահը:²²

Այնուամենայնիվ գիտնականների գերիշխող կարծիքն այն է, որ յուրաքանչյուրի արարքի կատարման ժամանակը հենց իր արարքի կատարման պահն է:

Անդրադառնալով ժամանակի ընթացքում օրենքի գործողության հիմնախնդրին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքո-

րոշում է արտահայտել, մասնավորապես նշելով՝ «Քրեական օրենքի իմաստով՝ հանցանքը կատարելու պահ է համարվում հանրության համար վրանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքների վրա հասնելու պահից (ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս): Հետևաբար իրավասու մարմինը հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ:»²³

1) ժամանակի ընթացքում օրենքի գործողության բացառությունը՝ քրեական օրենքի հետադարձ ուժը

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածն ամրագրում է՝

«1. Անձի իրավական վիճակը վարթաբացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:»:

ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Արարքի հանցավորությունը վերացնող, պարիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պա-

¹⁹ Хаумова А.В., Комментарий к УК РФ, Москва., 1997. с. 55.

²⁰ Ղազինյան Գ., Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում, (Առաքելյան, Գաբուլյան և այլք), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012թ, էջ 51:

²¹ Лебедев В.М., Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. Ред. 8-е изд., перераб. И доп. – М.: Юрайт-Издат, 2008. с. 39.

²² Дурманов. Н.Д., Советский уголовный закон., издательство московского университета, Москва 1967, с, 262.

²³ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Գրիգոր Վարդանյանի վերաբերյալ գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ՍԴ/0020/01/17 որոշման 13-րդ կետ:

տիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատարարական փորձություն:

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

3. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը:»

Այսպիսով, եթե ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնի համաձայն անձը ենթակա է պատասխանատվության քրեական այն օրենքով, որի գործողության ժամանակ կատարել է հանցավոր արարքը, ապա վերը նշված վատթարացնող օրենքի հետադարձ ուժի արգելքը, որպես ընդհանուր կանոնից բացառություն, արգելում է անձին ենթարկել պատասխանատվության այն օրենքով, որը գործել է իր արարքի կատարման պահին, եթե նոր օրենքը անձի վիճակը բարելավող է:

Ընդ որում, քրեական նոր օրենքին հետադարձ ուժ է տրվում հետևյալ դեպքերում.

1. Եթե նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը՝ ապաքրեականացում:

Քրեական նոր օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող, եթե այդ օրենքով հանցագործություն չի համարվում այն արարքը, որը նախկին օրենքով հանցագործություն էր (լրիվ ապաքրեականացում):²⁴

Նոր օրենքը համարվում է արարքի հանցավորությունը վերացնող նաև այն դեպքում, երբ արարքը չի դադարում հանցագործություն լինելուց և չի վերացվում, սակայն հանցակազմը ենթարկվում է այնպիսի փոփոխությունների, որ հանցավոր արարքների շրջանակը նեղանում է (մասնակի ապաքրեականացում):²⁵

Ընդ որում, արարքի հանցավորությունը կարող է վերացվել նաև քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների փոփոխության միջոցով, օրինակ՝ հանցագործության համար

քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքը կարող է փոփոխվել, ինչի արդյունքում անձը կարող է դադարել քրեական պատասխանատվության սուբյեկտ լինելուց:

2. Եթե նոր օրենքը մեղմացնում է պատիժը:

Քրեական նոր օրենքը համարվում է պատիժը մեղմացնող, եթե՝ ա) նորմի սանկցիայում նախատեսված պատժի նվազագույն և առավելագույն չափերը միաժամանակ իջեցվում են, բ) նվազագույն չափը մնում է նույնը, առավելագույնը իջեցվում է, գ) առավելագույնը թողնվում է նույնը, նվազագույնը իջեցվում է, դ) սանկցիայում նախատեսված պատժատեսակը փոխարինվում է ավելի մեղմ պատժատեսակով, ե) սանկցիայում նախատեսված պարտադիր լրացուցիչ պատժատեսակը վերացվում է կամ վերածվում է ֆակուլտատիվի, զ) նոր օրենքով նախատեսվում է երկրորդ աստիճանի մեղմ պատժատեսակ:

3. Եթե նոր օրենքն այլ կերպ բարելավում է անձի վիճակը:

Հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն այն օրենքն է, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի և պայմանների հետ կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար:²⁶ Օրինակ, եթե նոր օրենքը քրեական պատասխանատվության ավելի կարճ ժամկետ է նախատեսում, ապա այն հանցանք կատարած անձի վիճակը բարելավող օրենք է և դրան պետք է հետադարձ ուժ տալ:

Անդրադառնալով անձի վիճակը վատթարացնող քրեական օրենքի հետադարձ ուժին ՀՀ սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ «անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու անձի լեզիտիմ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

²⁴ Ղազինյան Գ., Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում, (Առաքելյան, Գաբուզյան և այլք), ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, 6-րդ հրատ., Երևան, 2012թ, էջ 52:

²⁵ Տես՝ նույն տեղում:

²⁶ Տես՝ նույն տեղում, էջ 55:

ակնկալիքների նկատմամբ հարգանքը, անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրարարներից մեկն է: Այդ սկզբունքը միաժամանակ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա»²⁷

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադառնալով վերագրյալ սկզբունքին նշել է, որ «հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական օրենքի այս կամ այն նորմի կիրառելիության հարցը լուծելիս պետք է ղեկավարվել հանցավոր արարքի (գործողության կամ անգործության) փաստացի կատարման պահի և քրեական օրենքի ուժի մեջ մտնելու պահի համադրմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է իրականացվում վարույթը և վարույթն իրականացնելու պահին կիրառման ենթակա օրենքը գործում է, թե ոչ: “Nullum crimen, nulla poena sine lege” սկզբունքի բաղադրամասերից է նաև այն դրույթը, համաձայն որի՝ չի կարող կիրառվել ավելի ծանր պատիժ, քան այն, որն օրենքով կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին»²⁸: «Քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի տարածական մեկնաբանության ենթարկվի, օրինակ՝ այն չպետք է կիրառվի անալոգիայով»²⁹:

III. Ամփոփում

Այսպիսով, պատմական հնագույն ժամանակների՝ միայն իշխողի կամքով անձանց դատապարտման դիկտատորական փուլին փոխարինելու եկավ անձի անհատականու-

թյան գնահատման, օրենքի և իրավակարգի կարևորման ժամանակաշրջանը: Հենց դրա արդյունքում, միայն օրենքի հիման վրա պատասխանատվության ենթարկվելու՝ “nullum crimen sine lege” սկզբունքը 18-րդ դարից ի վեր օրենսդրական ամրագրումներ ստացավ:

Դրա արդյունք էր ժամանակի ընթացքում օրենքի գործողության սկզբունքը, որի ընդհանուր կանոնի համաձայն հանցագործության յուրաքանչյուր մասնակից (կատարող, կազմակերպիչ, դրդիչ, օժանդակող) ենթակա է քրեական պատասխանատվության այն օրենքով, որի գործողության ժամանակ ինքն անձամբ կատարել է հանցավոր արարքը՝ անկախ հետևանքները վրա հասնելու ժամանակից և անկախ մյուս հանցակիցների կատարած հանցավոր արարքների պահից: Սակայն, ինչպես տեսնում ենք, այս հարցերը միանշանակ չեն ընկալվում քրեական իրավունքի գիտնականների մոտեցումներում, և արդիական է դրանց խորը ուսումնասիրությունը:

Ժամանակի ընթացքում օրենքի գործողությունն ունի նաև բացառություն, այն է՝ անձի իրավական վիճակը վատթարացնող քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքը: Եթե անձի կողմից հանցավոր արարքը կատարելուց հետո քրեական օրենքը ենթարկվում է որևէ փոփոխության, որի արդյունքում անձի իրավական վիճակը բարելավվում է, ապա այն տարածվում է այդ անձի նկատմամբ, այսինքն, թեև անձի կողմից արարքը կատարելու ժամանակ գործող օրենքը ավելի խիստ է, սակայն նոր, առավել մեղմ օրենքի ուժի մեջ մտնելը չեզոքացնում է նշված խիստ օրենքի կիրառությունը: Վատթարացնող քրեական օրենքի հետադարձ ուժի արգելքը ևս իրավունքի զարգացման ընթացքում ենթարկվել է «փորձությունների» և այն նույնպես համապարփակ վերլուծության կարիք ունի:

²⁷ ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1326 որոշում, էջ 15:

²⁸ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործական մեկնաբանություններ, հատոր 3, 2016թ, էջ 11:

²⁹ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Վաղարշակ Գալոյանի վերաբերյալ գործով 2013 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ԵԷԴ/0008/15/13 որոշման 15-րդ կետ:

ՆԱԻՐԱ ՇԱՀԻՆՅԱՆ

ՀՀ ստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
Քրեական դատավարության ամբիոնի ասիստենտ,
Ոստիկանության կապիտան
Գրախոս՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Հովհաննիսյան

**ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵՎ
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԿԱԼԱՆՔԸ ՍԱՅՄԱՆԵԼԻՍ**

Սույն հոդվածում կքննարկվի սկզբնական կալանքի սահմանման, դրա առանձին հիմքով կիրառման անհրաժեշտության և իրավաչափության, ինչպես նաև սկզբնական և շարունակվող կալանքի ապացուցողական չափորոշիչների առանձնահատկություններին առնչվող որոշ հարցեր:

Նկատենք, որ քրեական դատավարության ոչ գործող օրենսգիրքը, ոչ էլ նոր օրենսգիրքը հստակ չեն սահմանել ապացուցման առարկա կազմող հանգամանքները խափանման միջոցներ կիրառելիս, սակայն առանձին հոդվածների համակարգային վերլուծությունից կարելի է բխեցնել, թե որոնք են դրանք:

Այսպես, գործող օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում թվարկված են հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել խափանման միջոց կիրառելիս (տարիք, սեռ, հանցագործության բնույթ և այլն), որն իր առավել ընդհանրական արտացոլումն է գտել նոր օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասում՝ հետևյալ ձևակերպմամբ. «խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները»: Նույն հոդվածի 1-ին մասով սահմանվել է հիմնավոր կասկածի պարտադիր առկայությունը՝ խափանման միջոց կիրառելիս, իսկ ահա 118-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Կալանքի ժամկետը երկարաձգելիս դատարանի առջև անհրաժեշտ է հիմնավորել նաև վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը (due diligence), ինչպես նաև տվյալ մեղադրյալի

նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը»:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս ապացուցման առարկա կազմող հանգամանքներն են՝ հիմնավոր կասկածն արդեն կատարված ենթադրյալ հանցանքի մեջ, կալանքը կիրառելուն նպաստող և (կամ) խոչընդոտող հանգամանքները, իսկ կալանքի ժամկետը երկարաձգելիս՝ նաև վարույթ իրականացնող մարմնի պատշաճ ջանասիրությունը:

Նոր օրենսգրքի 24-րդ հոդվածը սահմանում է վարույթի ողջամիտ ժամկետի սկզբունքը, որի համաձայն՝ քրեական վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է իր իրավասության սահմաններում դրսևորել պատշաճ ջանասիրություն՝ վարույթը ողջամիտ ժամկետում ավարտելու համար:

Օրենսդիրը, կալանքի ժամկետը երկարացնելիս պատշաճ ջանասիրությունը ապացուցման առարկա դարձնելով, կարծես թե տարբերակում է դրել սկզբնական և շարունակվող կալանքների ապացուցողական չափորոշիչների միջև, ինչը պրակտիկ դաշտում կալանքի՝ որպես ամենախիստ հարկադրանքի միջոցի կիրառման իրավաչափությունն ապահովելուն միտված կայուն երաշխիք է:

Դրական տեղաշարժով հանդերձ՝ նոր օրենսգիրքն այս հարցում դրսևորել է առավել կաղապարային մոտեցում՝ հստակ տարբերակում չդնելով նախնական և շարունակվող կալանքի հասկացությունների միջև, ինչն էլ ինչպես գործող օրենսդրության պայմաններում, այնպես էլ նոր օրենսգրքի գործարկումից հետո թողնելու է իր բացասական հետևանքները: Այս առումով առավել ընդունելի մոտեցում

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

էր ցուցաբերված նոր օրենսգրքի նախագծի նախկին տարբերակում¹, որի՝ խափանման միջոցների կիրառման իրավաչափությունը սահմանող 116-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մեղադրյալի փախուստը կանխելու, մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու, մեղադրյալի կողմից իր վրա օրենքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու հանգամանքների հիմնավորում չի պահանջվում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի սկզբնական կալանքի կամ այլընտրանքային խափանման միջոցի կիրառման դեպքում: Այսինքն՝ ըստ նախագծի այս տարբերակի՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածը բավարար է սկզբնական կալանքի համար:

Այսօրինակ կարգավորումը միանշանակ առավել առաջադիմական է, որում, սակայն անհրաժեշտ է հավասարակշռություն ապահովել մասնավոր և հանրային շահերի միջև:

Հանցագործության միայն հանրային վտանգավորության բնույթով և ծանրության աստիճանով պայմանավորված կալանավորումը տեսական դաշտում քննադատության է արժանանում տարբեր հիմնավորումներով:

Յու. Մելինկովի կարծիքով՝ միայն հանցանքի ծանրությամբ պայմանավորված կալանքի կիրառումը չի բխում կալանքի՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակից և ձեռք է բերում պատժիչ բնույթ²: Մինչդեռ, դեռևս նախորդ դարում Ի. Լ. Պետրուսինն արդարացիորեն գտնում էր, որ հանցանքի ծանրությունը և պատժի խստությունը կարող են անձին դրդել թաքնվել քննությունից կամ խոչընդոտել գործով ճշմարտության բացահայտմանը³: Համանման մոտեցում է առկա նաև հայրենական դատավարագիտության մեջ⁴:

Նախադեպային իրավունքը մշակել է մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմք. մեղադրյալի դատաքննությանը չներկայանալու վտանգը⁵, վտանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը⁶, կամ կկատարի նոր հանցանքներ⁷, կամ կկատարվեն հասարակական անկարգություններ⁸:

Հատկապես հասարակական անկարգությունների վտանգն այն ընդունելի չափորոշիչն է, որով ևս հիմնավորվում է սկզբնական կալանքի անհրաժեշտությունը, քանի որ, բացառիկ ծանրությամբ պայմանավորված, որոշ հանցանքներ կարող են հանգեցնել հասարակական անկարգությունների և դրանով իսկ պայմանավորված՝ արդարացնել նախնական կալանքն առնվազն կարճ ժամանակով (Տես՝ *Letellier v. France*, § 51): Անկախ այն հանգամանքից, որ հասարակության էմոցիաները չեն կարող դրվել դատական ակտերի ընդունման հիմքում, ավելին՝ նման մոտեցումը պարունակում է հասարակության կողմից դատական համակարգի ճնշման վտանգ, այդուհանդերձ, որոշ դեպքերում դրանք հաշվի չառնելն առնվազն արդարացված չէ, որովհետև շատ դժվար է հասարակությանը համոզել, որ մանկասպանին կամ անչափահասի նկատմամբ սեռական ոտնձգություն կատարած անձին չեն կարող կալանավորել, քանի որ մեղադրյալի կողմից քննությունից խուսափելու, նոր հանցագործություն կատարելու կամ իր պարտավորությունների կատարելուց խուսափելուն ուղղված վարքագծի դրսևորումը քիչ հավանական է: Մեղադրյալի կողմից արհեստական դրական վարքագծի դրսևորումները հենց այն գործոններն են, որ հաճախ պաշտպանների ձեռքին խաղաքարտ, ապա՝ հաղթաթուղթ են դառնում ծանր և առանձնապես ծանր հան-

¹ https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_5771447415_QrDat_VERJNAKAN.pdf (վերջին դիտում՝ 19.11.2021թ.)

² Տես Мельников В., Обеспечение прав граждан в ходе досудебного производства. Москва, 2006, էջ 223:

³ Տես Петрухин И., Неприкосновенность личности и предупреждение в уголовном процессе. Москва, 1989, էջ 107:

⁴ Տես Ղուկասյան Հ., Կալանավորման կիրառման հիմքերն ու դատավարական կարգն ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի /ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի 70-ամյակին նվիրված գիտական աշխատանքների ժողովածու, Երեւան, 2003, էջ 214-217:

⁵ Տես *Stogmuller v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10,

⁶ Տես *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27,

⁷ Տես *Matznetter v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10,

⁸ Տես *Letellier v. France*, 1991 թվականի հունիսի 26:

ցագործությունների մեջ մեղադրվող անձանց կալանքից ազատելու կամ այն առհասարակ չկիրառելու գործում, իսկ վերջիններիս պատշաճ վարքագիծն էլ ոչ թե օրենքի և պետության հանդեպ պարտավորությունների կատարման բարձր գիտակցությունն է կամ անկեղծ զղջումը, այլ հենց պաշտպանների կողմից թելադրված վարքագիծ:

Հանցագործության հանրային վտանգավորության բնույթով և ծանրության աստիճանով պայմանավորված կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերը ՀՀ դատական համակարգում լայն կիրառում ունեն, թեև հանցագործության ծանրությունն ու բնույթը ոչ գործող և ոչ էլ նոր օրենսդրությամբ իբրև կալանավորման ինքնուրույն հիմք նախատեսված չէ:

Այսպես. Անդրիաս Մարտիր Ղուկասյանի վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱԲԴ/0533/06/16 գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ արարքի հանրային վտանգավորության բնույթը, ծանրության աստիճանը, ենթադրաբար խմբի կազմում կատարելը, կատարման եղանակը, հանցավոր նպատակը, հետևանքները փաստում են կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմնավոր լինելը:

Նշված որոշմամբ արարքի հանրային վտանգավորության բնույթը և ծանրության աստիճանը համահավասար հարթության մեջ է դիտարկվել արարքը ենթադրաբար խմբի կազմում կատարելու, կատարման եղանակի, հանցավոր նպատակի և հետևանքների հետ, ինչը չի բխում հանցագործության հանրային վտանգավորության և ծանրության աստիճանի քրեաիրավական մեկնաբանումից, մինչդեռ դրանք քրեաիրավական կատեգորիաներ են, որոնք քրեական դատավարությունում այլ մեկնաբանմամբ չեն կարող կիրառվել:

Ըստ քրեաիրավական մեկնաբանման՝ արարքի ծանրության աստիճանը որոշվում է արարքը խմբի կազմում կատարելով, եղանակով, հետևանքով, իսկ հանրային վտանգավորության բնույթը որոշվում է կոնկրետ հանցատեսակով, օրինակ՝ սպանություն է տեղի ունեցել, թե գողություն: Այսինքն՝ արգելված արարքի տեսակը, կատարման եղա-

նակը, հետևանքը, պատիժը ծանրացնող հանգամանքները միասնության մեջ դառնում են արարքի ծանրության աստիճանի և հանրային վտանգավորության բնութագրական հատկանիշներ: Դրանք գործոններ են, որոնք վկայում են ակնկալվող պատժի խստության մասին, և հենց այդ գործոնների վերհանումով է հնարավոր հասկանալ, թե ինչ ծանրության հանցանք է կատարվել: Ուստի, երբ խոսվում է հանցանքի ծանրությամբ, հետևաբար նաև պատժի խստությամբ պայմանավորված կալանքի կիրառման մասին, ինքնին ենթադրվում է յուրաքանչյուր գործով վերը նշված հանգամանքների վերհանումը:

Նշվածի համատեքստում ստացվում է, որ ՀՀ դատական համակարգում արարքի ծանրությամբ պայմանավորված կալանքի կիրառումը, քննադատության ենթարկվելով հանդերձ, ընդունվել է Բարձր դատարանների կողմից, միայն թե դատարանները խուսափել են որոշումները հիմնավորելիս նշել, որ արարքի հանրային վտանգավորությամբ ու ծանրության աստիճանով պայմանավորված են կալանքն ընտրել որպես խափանման միջոց, քանի որ այն որպես կալանքի ինքնուրույն հիմք նախատեսված չէ և, ելնելով իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրական դաշտի միջև կազուս չառաջացնելու նկատառումից, որոշումները հիմնավորել են արարքի հանրային վտանգավորության բնույթի ու ծանրության աստիճանի բնութագրական հատկանիշների մեկնաբանմամբ:

Նկատենք, որ նշված հանգամանքները, որոնք դրվել են կալանքի հիմքում, վերաբերում են արդեն իսկ կատարված հանցավոր արարքին և ոչ դրանից հետո անձի կողմից դրսևորած վարքագծին, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Արմեն Լևոնի Աբրահամյանի վերաբերյալ 2017 թվականի ապրիլի 12-ի թիվ ԵԱՆԴ/0030/01/16 գործով՝ մասնավորապես ընդգծելով, որ *Առաջին արյանի և Վերաքննիչ դատարանի հիմնավորումներն առ այն, որ հանցանքի ծանրությունը և պատժի խստությունը չեն կարող ինքնին բավարար լինել անձին երկար ժամանակով կալանքի տակ պահելն արդարացնելու համար, քանի որ ամբաստանյալ Արմեն Աբրահամյանի կողմից ոչ*

պարզաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ ըստ էության չի ներկայացվել, հիմնավոր չեն: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Ա. Աբրահամյանին վերագրվող արարքի հանրային վրանգավորության բնույթը և ծանրության աստիճանը բավարար են նրան կալանավորելու համար: Այս որոշմամբ ևս Վճռաբեկ դատարանն ակնհայտորեն ընդունել է արարքի հանրային վտանգավորության և ծանրության աստիճանի հիմքով կալանքի կիրառման իրավաչափությունը:

Նշվածի համատեքստում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս յուրահատուկ հարաբերակցություն են ձեռք բերում արարքի հանրային վտանգավորությունը և անձի հանրային վտանգավորությունը: Անձի հանրային վտանգավորությունը կենտրոնական նշանակություն ունի նշված խափանման միջոցը կիրառելու համար՝ հատկապես կալանքի նպատակի համատեքստում: Սակայն սխալ կլինի անձի և արարքի հանրային վտանգավորությանն ընտրողաբար մոտենալ և որոշել, թե հատկապես ի՞նչ է առավել կարևոր, քանի որ դրանք գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ, ինչի մասին է վկայում նաև Վճռաբեկ դատարանի՝ **Սամվել Գագիկի Մարգարյանի** վերաբերյալ 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 գործով որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը՝ համաձայն որի. «Մեղսագրվող արարքի կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և արարքի հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը բնութագրող այլ հանգամանքները էական նշանակություն ունեն մեղադրյալի անձի մասին ճիշտ պարկերացում կազմելու համար: Ուստի, առանց դրանք գնահատման ենթարկելու հնարավոր չէ հիմնավորված ենթադրություն անել մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքի շրջանակներում բազմիցս շեշտել է, որ անձին վերագրվող արարքի ծանրությունը, գործի նյութերից բխող մյուս փաստական տվյալների հետ միասին, կարևոր նշանակություն ունի մեղադրյալի հետագա վարքագծի վերաբերյալ հիմնա-

վորված ենթադրություն անելու համար (ի թիվս այլնի՝ տես Mamedova v. Russia, 2006 թվականի հունիսի 1-ի վճիռը, գանգատ 7064/05, կետ 74, Panchenko v. Russia 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ 45100/98, կետ 102, Iljkon v. Bulgaria, 2001 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ 33977/96, կետ 81):

Վերոգրյալով հավաստում է արարքի հանրային վտանգավորության և անձի հանրային վտանգավորության պատճառահետևանքային կապի մեջ լինելը, որով կարծես հերքվում է Յու. Մելինկովի այն պնդումը, որ միայն պատժի խստությամբ պայմանավորված կալանքի կիրառումն այդ խափանման միջոցին պատժի երանգ է հաղորդում: Սակայն նման մտահոգությունն ունի իր տրամաբանական հիմքերը: Մասնավորապես. հաշվի առնելով, որ վարույթն իրականացնող մարմնի ձեռքին այն կարող է դառնալ գործիք՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու սպառնալիքով ցուցմունքներ կորզելու և մեղադրյալին անուղակիորեն ինքնամեղսագրման հակելու ճանապարհով: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել, որ կալանքն իբրև խափանման միջոց ընտրելը դատարանի համար իրավունք է, ոչ թե պարտականություն, հետևաբար դատական վերահսկողությունը հնարավորություն է տալիս նման խնդիրներից խուսափել: Իհարկե դատարաններն իրենց հերթին պրակտիկայում պետք է բացառեն այս հիմքով կալանքի ավտոմատացված կիրառումը՝ դատական համակարգի պրակտիկայում ներդնելով որոշ չափորոշիչներ, եթե նույնիսկ դրանք օրենսդրական ամրագրում չունենան: Օրինակ՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցանք կատարելու դեպքում կարևոր է, որ, արդեն իսկ կատարված հանցագործության մեջ մեղադրվելու հիմնավոր կասկածից բացի, անձը դրսևորած լինի նաև որևէ բացասական վարքագիծ, որպեսզի դատարանը կալանքը կիրառի: Այսինքն՝ այստեղ հանցանքի կատարումից զատ կարևոր է անձի կողմից հետագայում դրսևորած բացասական վարքագիծը, իսկ ահա ծանր և առանձնապես ծանր հանցանքների դեպքում բացասական վարքագիծ չդրսևորելը բավարար չէ կալանք չկիրառելու համար, ընդհակառակը, այս դեպքում կալանքը կարող է չկիրառվել, եթե հանցավոր արարքը կատարելուց հետո անձը դրսևորել է

ակնհայտ դրական վարքագիծ. գործուն զոջացել է՝ աջակցել է քննությանը, վերականգնել կամ այլ կերպ հարթել է պատճառված վնասը և այլն: Անձի կողմից դրսևորվող դրական վարքագիծն էլ իր հերթին, ինչպես նշեցինք, ոչ թե պետք է, այլ կարող է հաշվի առնվել, որովհետև առավելապես կազմակերպված հանցավորության դեպքում քննության ընթացքում շինծու դրական վարքագիծը, քննությանն աջակցելու իմիտացիա ստեղծելը կարող է միտված լինել ժամանակ շահելուն, օրինակ՝ մեղադրյալի փախուստը կազմակերպելու նպատակով: Իհարկե հասկանալի է, որ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության դեպքում կալանքը կիրառելիս անձի դրական վարքագիծը ելակետ ընդունելը կարող է անդրադառնալ ինքնամեղսագրման արգելքի վրա: Համեմատական տանենք մեղադրյալի կողմից սուտ ցուցմունք տալու քրեականացման ինստիտուտի հետ, որի վերաբերությամբ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության՝ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ արտահայտած կարծիքում նշվել էր, որ թեև այն չի հակասում կոնվենցիոնալ պահանջներին, սակայն բոլոր դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել, որ կարող է անդրադառնալ ինքնամեղսագրման արգելքի վրա¹. Այդուհանդերձ, մեր օրենսդիրը գնաց այն ճանապարհով, որ եթե կոնվենցիոնալ հակասություն առկա չէ, ապա սուտ ցուցմունքի քրեականացումը կարող է նախատեսվել օրենսդրությամբ, և նոր օրենսգիրքն ընդունվեց հենց այս կարգավորմամբ և թերևս այն տրամաբանությամբ, որ լռելու իրավունքը նվազեցնում կամ չեզոքացնում է ինքնամեղսագրման վտանգը: Իսկ կալանքի դեպքում դրական վարքագիծ դրսևորելու ելակետային լինելու արդյունքում առաջացած ինքնամեղսագրման վտանգը նվազեցվում է դատական վերահսկողության երաշխիքով, և այս դեպքում ևս կոնվենցիոնալ հակասություն առկա չէ, ուստի նույն տրամաբանությամբ այն հանգիստ կարող է կիրառվել: Երբ անձին կալանավորելու միակ պատճառը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարումն է, հարց է առաջա-

նում, թե ապացուցողական ինչպիսի՞նչ չափորոշիչներով է պետք առաջնորդվել սկզբնական կալանքի ժամկետը լրանալուց հետո կալանքի ժամկետը երկարացնելու համար: Այսպես, եթե անձը կասկածվում է առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ, գնահատական է տրվում հանցանք կատարած անձի անձնային որակներին, որից էլ հետևություն է արվում անձի վտանգավորության մասին: Բնականաբար, առանձնապես ծանր հանցանք կատարելուն ընդունակ անձը շարունակում է մնալ հանրորեն վտանգավոր, սակայն սա ինքնին չի կարող բավարար լինել տևական կալանքի համար:

Կալանքի ժամկետը երկարացնելու դեպքում կենտրոնական նշանակություն է ձեռք բերում հիմնավոր կասկածը: Այն, որ հիմնավոր կասկածն առաջնահերթության կարգով ապացուցման առարկա է կալանքը բոլոր դեպքերում կիրառելիս, կասկած չի հարուցում, սակայն հիմնավոր կասկածին ներկայացվող ապացուցողական չափորոշիչները չեն կարող նույնը լինել սկզբնական և շարունակվող կալանքի դեպքում: Թեև հիմնավոր կասկածին ներկայացվող չափորոշիչներին մանրակրկիտ անդրադարձ սույն հոդվածով չենք կատարի, քանզի դա կարող է մեկ այլ հետազոտության առարկա լինել, այդուհանդերձ, հարկ է ընգծել որոշ տարբերություններ: Այսպես, քննության սկզբնական փուլում, երբ մի շարք ապացուցողական գործողություններ դեռևս կատարված չեն, փորձագետների եզրակացությունները ստացված չեն, հիմնավոր կասկածին չի կարող ցուցաբերվել նույն խիստ պահանջները, իսկ ահա կալանքի ժամկետի երկարացման ժամանակ առավել բարձր ապացուցողական չափորոշչով է պետք հիմնավորել հիմնավոր կասկածը: Հիմնավոր կասկածին ներկայացվող ապացուցողական չափորոշիչների տարբերությունը միայն կարող է լուծել այս վեճը, քանի որ, ի վերջո, որքան բարձր է հանցանքի կատարման մեջ կասկածվելու հավանականությունը, այնքան արդարացված է անձի տևական կալանքի տակ մնալը:

Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում սկզբնական կալանքը

¹ https://rm.coe.int/16806ef4c5/untu_44_t2/ (վերջին դիտում՝ 19.11.2021թ.)

կիրառելիս կարևոր է հաշվի առնել նաև վկաների և տուժողների սուբյեկտիվ ընկալումը և մանավանդ հանցագործության սկզբնական շրջանում առկա վախի մթնոլորտը՝ անկախ նրանց վրա որևէ կերպ ազդելու հանգամանքի առկայության փաստից: Ինքնին հանցագործության ծանրությունը բավարար է, որ օբյեկտիվորեն վերջիններիս մոտ առաջանա վախի զգացում, և որքան էլ այն իր բնույթով սուբյեկտիվ ընկալում է, հանցագործության ծանրությամբ պայմանավորված՝ կրում է օբյեկտիվ բնույթ, և մեղադրյալի ազատության մեջ մնալը կարող է խոչընդոտել վերջիններիս՝ քննությանն աջակցելու գործում:

Այսպիսով՝ հանցագործության ծանրությամբ ու վտանգավորության բնույթով պայմանավորված՝ սկզբնական կալանքի կիրառումը չի հակասում միջազգային չափորոշիչներին և հանցագործությունների հակազդման ու անխոչընդոտ քննության ապահովման կարևոր երաշխիք է:

Կալանքի հիմքերի մասին հետևությունները, իհարկե, միշտ են կանխատեսական և մոտավոր բնույթ կրում (տես՝ Վճռաբեկ դատարանի 30.08.2007 կայացված ՎԲ-132/07 որոշում), քանի որ բոլոր դեպքերում դրանք ենթադրություններ են, պարզապես սկզբնական և շարունակվող կալանքի դեպքում տարբեր մոտեցումներ է պետք դրսևորել այդ ենթադրությունները բավարար և հավաստի համարելու համար:

Ինչպես վերևում հիմնավորել ենք՝ հանցագործության ծանրության աստիճանով պայ-

մանավորված սկզբնական կալանքի կիրառումից դատական պրակտիկայում խուսափելը ոչ միայն անհնար է, այլև չի բխում արդարադատության շահերից, բացի այդ, սկզբնական կալանքի օրենսդրական ամրագրում չունենալը նաև հանգեցնում է դատարանների կողմից՝ օրենքի միատեսակ կիրառության պահանջի խախտման ու այդ հիմքով երբեք չդադարող բողոքարկումների: Սկզբնական կալանքի օրենսդրական հստակ ամրագրմամբ, որի դեպքում պետք է սահմանել նաև սկզբնական կալանքի առավելագույն ժամկետը, ոչ միայն կլուծվեն վերը նշված խնդիրները, այլև սկզբնական կալանքի համար առավել կարճ ժամկետի սահմանումը կբացառի անձի տևական և անհարկի կալանքի տակ գտնվելը, որով հենց ենթադրյալ հանցանք կատարած անձի իրավունքներն առավել պաշտպանված կլինեն: Այսպիսով՝ արդարադատության և անձի շահերի ոչ պատշաճ և արհեստածին հակակշռումն անհրաժեշտ է բերել պատշաճ հավասարակշռության դաշտ՝ ապահովելով թե՛ մեկի, թե՛ մյուսի անխոչընդոտ գործարկումը իրավակիրառ պրակտիկայում: Այդպիսի հավասարակշռում ապահովելու անհրաժեշտ նախադրյալ կարող է դառնալ սկզբնական կալանքի օրենսդրական ամրագրումը հստակ և առավել կարճ ժամկետային սահմանափակմամբ, ինչպես նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարման փաստը որպես սկզբնական կալանքի ինքնուրույն հիմք նախատեսելը:



ԳՈՌ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հագենի համալսարանի Գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների դոկտոր

ԽՆԴԻՐ. ՆԱԽԱՐԱՐԻ ԴՈՂԴՈՂՑԸ

Ա-ն ՀՀ-ում շատ հայտնի անկախ լրագրող է: Իր բազմաթիվ հրապարակումների ու կապերի շնորհիվ նա վայելում է վստահելի ու լավ տեղեկացված լրագրողի համբավ:

2020 թ. փետրվարին Ա-ն ընթերցելու նպատակով Արմենիա հյուրանոցի ռեստորանում հանդիպում է իր ինֆորմանտներից մեկի հետ: Կառավարական շենքերին մոտ լինելու և իր հրաշալի ճաշացուցակի շնորհիվ ռեստորանը շատ սիրված հանդիպման վայր է քաղաքական գործիչների ու լրագրողների համար: Իր ինֆորմանտի հետ աշխույժ գրույցի պահին Ա-ն տեսնում է, թե ինչպես է նախարար Ն-ն երկու հոգու հետ մտնում ռեստորան: Նրան անմիջապես ուղեկցում են ռեստորանի՝ կողմնակի հայացքներից պաշտպանող միջնորդով առանձնացված հատվածը: Թեև ռեստորանի այդ հատվածը դռնով ամբողջովին առանձնացված չէ, բայց միջնորդի պատճառով ռեստորանի ընդհանուր սրահից հնարավոր չէ ճանաչել այնտեղ գտնվող մարդկանց կամ լսել նրանց խոսակցությունը: Ռեստորանի այդ առանձնացված հատվածի մուտքի մոտ կա նաև մի ցուցանակ այն մասին, որ այնտեղ կարելի է մտնել միայն համապատասխան թույլտվություն ստանալու դեպքում:

Ա-ն վերին աստիճանի հուզված է. ի վերջո նա ամեն օր Ն-ին չի տեսնում: Իր ինֆորմանտի հետ գրույցն ավարտելուց հետո նա քայլերն ուղղում է դեպի զուգարան, որը գտնվում է այդ առանձնացված հատվածի կողքին: Ընդ որում, նա հույս ունի գոնե մի թեթև հայացք գցել Ն-ի վրա: Բայց Ա-ն հիասթափված արձանագրում է, որ իր կանգնած տեղից սրահի ներսը տեսանելի չէ: Քանի որ նա ոչ մի թիկնապահ չի տեսնում ու շատ հետաքրքրված է, աննկատ մոտենում է առանձնացված հատվածին և նայում է միջնորդից այն կողմ: Այդպես նա կարողանում է տեսնել, թե ինչպես է Ն-ն առանց իրեն վերահսկել կարողանալու մոտ մեկ րոպե

շարունակ ամբողջ մարմնով դողդողում: Հասկանալով, որ ինքը դրանից կարող է մեծ պատմություն սարքել, Ա-ն հեռանում է ռեստորանից և մի հոդված է գրում իր բլոգում:

Հոդվածում Ա-ն չեզոք ու առարկայական տոնով նկարագրում է, որ Ն-ն մոտ մեկ րոպե տևողությամբ անվերահսկելիորեն դողդողացել է: Այդ դողդողոցը թույլ է տալիս եզրակացնել, որ նախարարը հավանաբար ունի մինչ այդ անհայտ առողջական պրոբլեմ, ինչը կարող է լրջորեն հարցականի տակ դնել նախարարությունը ղեկավարելու նրա ունակությունը:

Ինչպես որ Ա-ն սպասում էր, իր բլոգի հոդվածը կայծակի արագությամբ տարածվում է ու գրավում շատերի ուշադրությունը: Ն-ն այդ հոդվածն անամոթություն է համարում և հայց է ներկայացնում իրավասու քաղաքացիական դատարան՝ պահանջելով Ա-ին պարտավորեցնել, որ նա ջնջի իր բլոգի հոդվածը և ձեռնպահ մնա հետագայում նմանատիպ հրապարակումներից: Որպես հիմնավորում Ն-ն ասում է, որ հոդվածը կոպտորեն խախտել է իր մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը: Նաև իբրև նախարար՝ ինքն ունի մասնավոր ոլորտի իրավունք: Չի կարող այնպես լինել, որ Ա-ն կարողանա անարգել կերպով գաղտնի հետևել իրեն իր կնոջ ու ընկերոջ հետ մասնավոր ընթրիքի ժամանակ: Մասնավոր կյանքի հարցում ոչինչ չի փոխվում, երբ ինքը ճաշում է ոչ թե իր սեփական տանը, այլ ռեստորանում: Բացի դրանից, չի կարելի տեղեկություններ տարածել այնպիսի զգայուն հարցի վերաբերյալ, ինչպիսին իր առողջությունն է:

Քաղաքացիական դատարանը բավարարում է Ն-ի հայցը: Ըստ վճռի՝ թեև Ա-ն կարող է վկայակոչել իր կարծիքի ազատության իրավունքը, բայց Ն-ի մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքն առավելություն ունի: Այդ պատճառով դատարանը ՀՀ ՔաղՕ 277-րդ հոդվածի և 1058-րդ հոդ. 1-ին մասի անալոգ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

կիրառմամբ *Ա-ին* պարտավորեցնում է իսկույն ջնջել հողվածը և ձեռնպահ մնալ ապագայում նմանատիպ հրապարակումներից: Այդ վճռի դեմ *Ա-ի* բոլոր բողոքները մինչև վերջին ատյան մնում են ապարդյուն:

Ա-ն շատ վրդովված է: Նրա կարծիքով՝ չի կարող այնպես լինել, որ ինքն իրավունք չունենա հրապարակելու այդքան կարևոր տեղեկությունը: Չէ որ հասարակությունը հետաքրքրված է այն հարցով, թե արդյոք նախարարներն առողջ են: Ինքը նաև պրորբլեմը ներկայացրել է չեզոք ու առարկայորեն, չի պատրաստել ու հրապարակել անպատշաճ լուսանկարներ ու տեսագրություններ: Բացի այդ, *Ն-ն*՝ իբրև նախարար, առանց այդ էլ չի կարող վկայակոչել մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը: Ու ինքը (*Ա-ն*) չի հասկանում, թե ինչու է քաղաքացիական դատարանը քննարկման առարկա դարձրել իր կարծիքի ազատության, այլ ոչ թե մամուլի ազատության իրավունքը:

Այդ պատճառով *Ա-ն* սահմանված ձևով ու ժամկետում անհատական դիմում է ներկայացնում ՀՀ Սահմանադրական դատարան (ՍԴ) ընդդեմ քաղաքացիական դատարանների որոշումների:

Հաջողություն կունենա՞ *Ա-ի* անհատական դիմումը:

Ցուցում: Խնդիրը լուծելիս ելնել այն մոտեցումից, որ ՀՀ-ում թույլատրելի է անհատական դիմումը նաև ընդդեմ դատական ակտերի: Նպատակը դատական ակտերի սահմանադրական վերահսկողության առանձնահատկություններին ծանոթացնելն է:

Լուծման ընդհանուր կառուցվածքը

Ա. Դիմումի թույլատրելիությունը

- I. ՍԴ-ի իրավասությունը
- II. Իրավասու դիմումատու
- III. Դիմումի առարկան
- IV. Հիմնական իրավունքի խախտման մասին պնդումը

Պրորբլեմ: Հիմնական իրավունքների միջնորդավորված երրորդային գործողությունը

V. Դատական պաշտպանության միջոցների սպառումը

VI. Դիմումի ձևն ու ներկայացման ժամկետը

Բ. Դիմումի հիմնավորվածությունը

- I. Պաշտպանության ոլորտը

- 1. Պաշտպանության անձնային ոլորտը
- 2. Պաշտպանության առարկայական ոլորտը

Պրորբլեմ: Մամլո հողվածում տեղ գտած արտահայտություններից պաշտպանվելու և դրանցից ձեռնպահ մնալու պահանջի իրավունքների դեպքում պաշտպանության ոլորտների սահմանազատումը

a) Կարծիքի ազատության պաշտպանության ոլորտը

b) Սահմանազատումը մամուլի ազատությունից

aa) Մամուլի ազատությունն իբրև *lex specialis*

bb) Կարծիքի ազատության և մամուլի ազատության սահմանազատումը՝ ըստ պաշտպանության ուղղության

cc) Դիրքորոշում

II. Միջամտությունը

III. Սահմանադրաիրավական արդարացումը

1. Սահմանափակելիությունը («սահմանափակում»)

2. Դատական ակտի հիմքում ընկած օրենքի (ՀՀ ՔաղՕ 277-րդ հոդվածի և 1058-րդ հոդ. 1-ին մասի) սահմանադրականությունը («սահմանափակման սահմանափակումը» օրենքի մակարդակում)

3. Կոնկրետ դատական ակտի սահմանադրականությունը («սահմանափակման սահմանափակումը» առանձին դեպքի մակարդակում)

a) *Ն-ի* մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի հնարավոր խախտումը

aa) Մասնավոր ոլորտի իրավունքը

Պրորբլեմ: Մասնավոր ոլորտի իրավունքի առարկայական և տարածական տեսանկյունը պաշտոնատար անձի դեպքում

bb) Ինքնացուցադրման իրավունքը

b) *Ա-ի* կարծիքի ազատության հնարավոր խախտումը

c) Համադրում

Գ. Արդյունքը

Լուծում

Ա-ի անհատական դիմումը հաջողություն կունենա (= կբավարարվի), եթե այն թույլատրելի է ու հիմնավորված:

Ա. Դիմումի թույլատրելիությունը

Անհատական դիմումը թույլատրելի է, եթե բավարարում է թույլատրելիության՝ ՀՀ Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 8-րդ կետում և ՀՀ ՍահմԴՕ 69-րդ հոդվածում սահմանված նախապայմանները:

I. ՀՀ ՍԴ-ի իրավասությունը

ՍԴ-ն իրավասու է քննելու անհատական դիմումներ Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 8-րդ կետի և ՍահմԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասի համաձայն:

II. Իրավասու դիմումատուն

Ըստ Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 8-րդ կետի՝ անհատական դիմումի վարույթում իրավասու դիմումատու է «յուրաքանչյուր ոք»: Նորմի իմաստով «յուրաքանչյուր ոք» նշանակում է հիմնական իրավունքների յուրաքանչյուր սուբյեկտ: Ա-ն՝ իբրև ֆիզիկական անձ, հիմնական իրավունքների սուբյեկտ է: ՍահմԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասում ևս օրենսդիրը բառացիորեն սահմանել է, որ իրավասու դիմումատուներ են ֆիզիկական և իրավաբանական անձինք: Ա-ն իրավասու դիմումատու է:

III. Դիմումի առարկան

Թեև համաձայն Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 8-րդ կետի և ՍահմԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասի անհատական դիմումի թույլատրելի առարկա կարող են լինել նորմադիվ իրավական ակտերը, սակայն խնդրի ցուցումի համաձայն պետք է թույլատրելի առարկա համարել նաև դատական ակտերը: Ա-ն անմիջականորեն պաշտպանվում է դատական ակտերից, որոնք նրան պարտավորեցրել են ջնջել իր հոդվածը և ձեռնպահ մնալ հետագայում նմանատիպ հրապարակումներից:

IV. Հիմնական իրավունքի խախտման մասին պնդումը

Համաձայն Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 8-րդ կետի և ՍահմԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասի՝ դիմումատուն պիտի պնդի, որ խախտվել են իր հիմնական իրավունքները (Սահմ. 2-րդ գլուխ): Դիմումատուի հիմնական իրավունքների խախտումը պիտի ՍԴ-ին հնարավոր թվա (հնարավորության տեսություն):¹ Խախտումը հնարավոր է, երբ չի կարող ի սկզբանե ու

որևէ տեսանկյունից բացառվել, որ քաղաքացիական դատարանների որոշումներով ներկա պահին ու անմիջականորեն խախտվել են անձամբ Ա-ի հիմնական իրավունքները:

Այստեղ կարող է Ա-ի հիմնական իրավունքների խախտումը բացառված լինել, քանի որ նրա անհատական դիմումի հիմքում ընկած է մասնավոր անձանց միջև քաղաքացիաիրավական մի վեճ: Նման իրավիճակում հիմնական իրավունքների խախտումն ընդհանրապես հնարավոր է, եթե հիմնական իրավունքները կիրառելի են մասնավոր անձանց միջև (այսպես կոչված հիմնական իրավունքների երրորդային կամ հորիզոնական գործողություն):²

Հիմնական իրավունքների անմիջական երրորդային գործողության դեմ խոսում է, որ ըստ Սահմ. 3-րդ հոդ. 3-րդ մասի բառացի տեքստի՝ հիմնական իրավունքներով սահմանափակված է միայն հանրային իշխանությունը: Հակառակ եզրակացությամբ (*argumentum e contrario*) դա նշանակում է, որ մասնավոր անձինք դրանցով սկզբունքորեն կաշկանդված չեն: Համակարգային տեսանկյունից ևս մասնավոր անձանց միջև հիմնական իրավունքների գործողության՝ Սահմ.-թյան մեջ բառացի ու փոքրաթիվ կարգավորումները (օրինակ՝ Սահմ. 57-րդ հոդ. 3-րդ մասի 1-ին նախ.) նույնպես խոսում են հիմնական իրավունքների անմիջական երրորդային գործողության դեմ: Դա չի կարող հիմնավորվել նաև նրանով, որ քաղաքացիական դատարանի որոշումը Սահմ. 3-րդ հոդ. 3-րդ մասի գործողության տակ ընկնող իշխանական ակտ է, որովհետև քաղաքացիական դատարանն իր որոշմամբ իրականում միայն «արձանագրում է» մասնավոր անձանց միջև արդեն իսկ գոյություն ունեցող քաղաքացիաիրավական դրությունը: «Դատարանը պարտավոր է հաշվի առնել հիմնական իրավունքներն այնքանով, որքանով դրանք գործում են, այլ ոչ թե դրանք գործում են, որովհետև դատարանն է որոշում ընդունում»:³

Բայց հիմնական իրավունքների միջնորդավորված երրորդային գործողությունը բխում է հիմնական իրավունքների պաշտպանիչ հատկանիշից: Քաղաքացիաիրավական իրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

¹ Տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 411:

² Այս մասին մանրամասն տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 67-71:

³ Այս հրաշալի ձևակերպումը տես Doehring, Das StaatsR der BRD, 1976, 209:

վաստեղծման միջոցով հիմնական իրավունքներով կաշկանդված օրենսդիրը կարգավորում է մասնավոր անձանց իրավական ոլորտները նրանով, որ նա, մի կողմից, միջամտում է գոյություն ունեցող պաշտպանության ոլորտներին, և մյուս կողմից՝ իրականացնում է հիմնական իրավունքներով իր վրա դրված պարտականությունները: Անշուշտ բոլոր հնարավոր կոնֆլիկտները չեն կարող լուծվել արդեն նորմատիվ մակարդակում: Այդ պատճառով օրենսդիրն ստիպված է գործածել անորոշ ու գնահատողական իրավական հասկացություններ: Եվ երբ դատարանները կոնկրետ գործով մեկնաբանում ու կիրառում են այդ անորոշ ու գնահատողական իրավական հասկացությունները, ապա նրանք ստիպված են այդ ժամանակ հաշվի առնել հիմնական իրավունքները:⁴ Բացի այդ, հիմնական իրավունքների միջնորդավորված երրորդային գործողությունը բխում է հիմնական իրավունքների օբյեկտիվ-իրավական գործառույթից: Հիմնական իրավունքներն օբյեկտիվ արժեհամակարգի արտահայտություն են և ընդհանուր վերապահումների ու մեկնաբանման կարիք ունեցող այլ հասկացությունների միջոցով «**ճառագայթային ներգործություն**» են ունենում մասնավոր իրավունքի վրա:⁵

Բացառված չէ, որ դատական որոշումները խախտում են *Ա-ի* կարծիքի, մամուլի և տեղեկատվության ազատության իրավունքը (Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախ., 2-րդ մասի 1-ին և 4-րդ տարբերակ), քանի որ այդ որոշումները նրան պարտավորեցնում են ջնջել հոդվածը և ձեռնպահ մնալ նմանատիպ հրապարակումներից:

Իբրև քաղաքացիական գործով տանուլ տված կողմ՝ անձամբ *Ա-ի* իրավունքները շոշափվում են նաև ներկա պահին ու անմիջականորեն:

Հուշում: Հիմնական իրավունքների եր-

րորդային գործողությունը կարող է ստուգվել նաև դիմումի հիմնավորվածության ներքո: Բայց դրա ստուգումը հիմնական իրավունքի խախտման մասին պնդման ներքո ավելի նախընտրելի է ու այդպես ընդունված է:⁶

V. Դատական պաշտպանության միջոցների սպառումը

ՍԴ անհատական դիմում ներկայացնելու Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 8-րդ կետի և ՍահմԴՕ 69-րդ հոդ. 1-ին մասի համաձայն թույլատրելի է միայն դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառումից հետո: Ըստ խնդրի տեքստի՝ *Ա-ի* հայցը մինչև վերջին ատյան հաջողություն չի ունենում, ուստի նա սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

VI. Դիմումի ձևն ու ներկայացնելու ժամկետը

Ըստ ՍահմԴՕ 24-րդ հոդ. 1-ին մասի՝ դիմումը ՍԴ է ներկայացվում գրավոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված: ՍահմԴՕ 69-րդ հոդ. 3-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը կարող է ՍԴ ներկայացվել դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառելուց՝ վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան վեց ամիս հետո: Ըստ խնդրի տեքստի՝ *Ա-ն* անհատական դիմումը ներկայացրել է սահմանված ձևով ու ժամկետում:

Միջանկալ արդյունքը. *Ա-ի* անհատական դիմումը թույլատրելի է:

Բ. Դիմումի հիմնավորվածությունը

Ա-ի անհատական դիմումը հիմնավորված է, եթե վերջնական դատական ակտը **խախտել է *Ա-ի* հիմնական իրավունքները**⁷ (Սահմ. 169-րդ հոդ. 1-ին մասի 8-րդ կետ, ՍահմԴՕ 69-րդ հոդ. 1-ին մաս): Քաղաքացիական դատարանների որոշումները կարող են չարդարացված միջամտություն լինել *Ա-ի* կարծիքի ազատության իրավունքի նկատմամբ:

⁴ Stu Ruffert, Vorrang der Verfassung und Eigenständigkeit des PrivatR, 2001, 141; Holoubek, Gewährleistungspflichten, 1997, 243 ff.
⁵ Տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 70:
⁶ Խնդիրների լուծման կառուցվածքի մասին մանրամասն տես Augsberg/Viellechner, JuS 2008, 406 (407):
⁷ Անհատական դիմումը չի կարող բավարարվել, եթե վիճարկվող ակտը հակասում է ոչ թե Սահմ. 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքներին, այլ Սահմ.-թյան այլ դրույթներին: Դա է պահանջում Սահմ. 168-րդ հոդ. 1-ին մասի 8-րդ կետը: Այդ պատճառով ՍԴ-ն անհատական դիմումի վարույթում չպիտի ստուգի վիճարկվող ակտի համապատասխանությունը Սահմանադրության այլ դրույթներին: Նա կարող է ստուգել միայն վիճարկվող ակտի համապատասխանությունը հիմնական իրավունքներին:

I. Պաշտպանության ոլորտը

1. Պաշտպանության անձնային ոլորտը

*Ա-ն*⁸ իբրև ֆիզիկական անձ, Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասով ամրագրված հիմնական իրավունքի սուբյեկտ է:

2. Պաշտպանության առարկայական ոլորտը

a) Կարծիքի ազատության պաշտպանության ոլորտը

Կարծիքի ազատության իրավունքի պաշտպանության առարկայական ոլորտը ներառում է սեփական կարծիքը բանավոր, գրավոր և պատկերների միջոցով արտահայտելու և տարածելու ազատությունը: Իբրև կարծիք պետք է դիտել մարդու դիրքորոշման յուրաքանչյուր տարրը՝ ինտելեկտուալ քննարկման շրջանակում:⁸ Բացի այդ, կարծիքի ազատության պաշտպանության ոլորտում ներառված են նաև փաստերի մասին պնդումները, եթե դրանք կարծիքի ձևավորման նախապայման են, որովհետև այդ դեպքում փաստի մասին պնդումը կարծիքից սահմանազատելը շատ դժվար է:⁹

Դոկտրոլոգի դեպքի առիթով *Ն-ի*¹⁰ իբրև նախարարի պիտանիության մասին *Ա-ի* բարձրացրած հարցը պարունակում է դիրքորոշման տարր, ուստի պաշտպանվում է կարծիքի ազատության իրավունքով: *Ա-ի* կողմից նկարագրված դոկտրոլոգի դեպքը՝ իբրև փաստի մասին պնդում, նույնպես ներառված է կարծիքի ազատության պաշտպանության ոլորտի մեջ, քանի որ այն անխզելիորեն կապված է *Ն-ի* պիտանիության մասին հարցի հետ ու այդպիսով ծառայում է կարծիքի ձևավորմանն ու արտահայտմանը:

b) Սահմանազատումը մամուլի ազատությունից

Քանի որ *Ա-ն*¹¹ իբրև լրագրող, իր հոդվածը հրապարակել է իր բլոգում, հնարավոր է, որ կիրառելի լինի նաև մամուլի ազատությունը: Այդ պատճառով պետք է պարզաբանել կարծիքի ազատության ու մամուլի ազատության հարաբերակցությունը:

aa) Մամուլի ազատությունն իբրև *lex specialis*

Ըստ մի կարծիքի՝ մամուլի ազատությունն սկզբունքորեն պետք է նաև այն դեպքում կիրառվի իբրև կարծիքի ազատության նկատմամբ *lex specialis*, երբ խոսքն արտահայտված կարծիքի բովանդակության մասին է:¹⁰ Ըստ այդմ՝ մամուլի ազատությունը կունենա կիրառման առաջնություն:

bb) Կարծիքի ազատության և մամուլի ազատության սահմանազատումը՝ ըստ պաշտպանության ուղղության

Մեկ այլ կարծիքի համաձայն՝ ոչ կարծիքի ազատությունն ունի առաջնություն, ոչ մամուլի ազատությունը:¹¹ «Մամուլի ազատությունը ոչ հատուկ հիմնական իրավունք է փոխադրական եղանակով փարածվող կարծիքների համար, ոչ էլ մամուլին հարմարեցված կարծիքի ազատության ուժեղացված կրկնություն»:¹² Ավելի շուտ սահմանազատումը պետք է կատարվի հիմնական իրավունքների համապատասխան պաշտպանության ուղղությունների հիման վրա: Մամուլի ազատության առաջնահերթ նպատակը կարծիքների ազատ ու հրապարակային ձևավորման համար մամուլի՝ առանձին կարծիքների արտահայտումը գերազանցող նշանակության երաշխավորումն ու պաշտպանությունն է: Սրանից ելնելով՝ պետք է սահմանազատել հետևյալ կերպ. կարծիքի ազատությունը՝ ըստ Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասի, ունի կիրառման առաջնություն, երբ խոսքը կարծիքի արտահայտման բովանդակության մասին է: Հակառակը, առաջնություն ունի մամուլի ազատությունը, երբ վնասվում է մամուլի գործառույթը: Դա այդպես է, «երբ խոսքը մամուլի ոլորտում աշխատող անձանց կողմից իրենց գործառույթներն իրականացնելու, փոխադրական նյութի, մամուլի ինստիտուցիոնալ-կազմակերպական նախապայմանների, ինչպես նաև ընդհանրապես ազատ մամուլի ինստիտուտի մասին է»:¹³

Մեր խնդրում հոդվածը ջնջելու և նմանա-

● ՕՐԻՆԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ № 127 2022

⁸ Epping, Grundrechte, 8. Aufl. 2019, Rn. 213; BVerfGE 65, 1 (41).
⁹ BVerfGE 65, 1 (41); 90, 1 (15). Այդ մասին տես նաև Hufen, StaatsR II, 8. Aufl. 2020, § 25 Rn. 7:
¹⁰ Bethge in Sachs, GG, 9. Aufl. 2021, Art. 5 Rn. 47.
¹¹ BVerfGE 85, 1 (11 f.).
¹² BVerfGE 85, 1 (11 f.).
¹³ BVerfGE 85, 1 (11). Այդ մասին մանրամասն տես Epping, Grundrechte, 8. Aufl. 2019, Rn. 231:

տիպ հրապարակումներից ձեռնպահ մնալու պահանջի իրավունքով շոշափվում է միայն հոդվածի կոնկրետ բովանդակությունը, մի մասնավոր դեպքի մասին տեղեկատվությունը: Մամուլի ինստիտուցիոնալ-կազմակերպական նախապայմանները կամ մամուլի՝ առանձին կարծիքի արտահայտումը գերազանցող նշանակությունը դրանով չեն շոշափվում: Ըստ այս կարծիքի՝ առաջնություն կունենա կարծիքի ազատությունը:

cc) Դիրքորոշում

Հօգուտ մամուլի ազատության կիրառման առաջնության կարելի է համակարգային տեսանկյունից փաստարկել, որ Սահմ. 42-րդ հոդվածն իր 1-ին մասում պաշտպանում է կարծիքի արտահայտման *ընդհանուր* ազատությունը և 2-րդ մասում՝ կարծիքի արտահայտման *հատուկ* ազատությունները: Երկու հիմնական իրավունքներն ըստ դրանց պաշտպանության ուղղության սահմանազատելու **դեմ** խոսում են նաև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դրա դժվարությունը և սահմանազատման որոշակի կամայականությունը: Կամայականությունն արտահայտվում է նրանում, որ ըստ այս մոտեցման՝ թեև մամուլի հոդվածի բովանդակության վրա հիմնված ջնջման ու ձեռնպահ մնալու պահանջի իրավունքները պիտի պաշտպանվեն կարծիքի ազատության իրավունքով, բայց միաժամանակ մամուլի հոդվածում որոշակի նկարների օգտագործման վրա հիմնված ջնջման ու ձեռնպահ մնալու պահանջի իրավունքները պիտի պաշտպանվեն մամուլի ազատության իրավունքով:¹⁴

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ըստ պաշտպանության ուղղության սահմանազատման **օգտին** խոսում է, որ միայն այդպես կարող է հաշվի առնվել մամուլի ազատության առանձնահատուկ պաշտպանությունը՝ իր ինստիտուցիոնալ գործառնությունը: Բացի այդ, սահմանազատումը չի հանգեցնում պաշտպանության բացերի, քանի որ մամուլի ազատությունը

նր կոնկրետ դեպքում, անգամ եթե շոշափվում են ինստիտուցիոնալ նախապայմանները, կարող է կիրառելի լինել կարծիքի ազատությանը զուգահեռ:¹⁵

Նշված պատճառներով նախընտրելի է հետևել այն կարծիքին, որ երկու հիմնական իրավունքները պետք է սահմանազատել ըստ դրանց պաշտպանության ուղղության: Ելնելով դրանից՝ այստեղ վեճը պետք է լուծվի կարծիքի ազատության հիման վրա:

Հուշում:

Նույն կերպ հնարավոր ու ընդունելի է մամուլի ու կարծիքի ազատության իրավունքների զուգահեռ կիրառելիությունը, ինչպես որ դա վերջերս արել է Գերմանիայի Դաշնային ՍԴ-ն:¹⁶

Քանի որ *Ա-ն* հոդվածը հրապարակել է բլոգում, կարող է քննարկվել նաև հեռարձակման ազատության կիրառելիության հարցը: Կարծիքի ազատությունից սահմանազատելու տեսանկյունից ծագում է նույն հարցը:

Եթե ելնում ենք այն մոտեցումից, որ մամուլի ու հեռարձակման ազատությունը կիրառման առաջնություն ունեցող հիմնական իրավունքներ են, ապա բլոգում հրապարակվելու պատճառով պետք է ևս մի սահմանազատում կատարվի մամուլի ազատության ու հեռարձակման ազատության միջև: Երկու հիմնական իրավունքները միմյանցից ձևականորեն *ըստ տեղեկության տարածման միջոցի* սահմանազատելու դեպքում ավելի մոտ հիմնական իրավունքը հեռարձակման ազատությունն է, *ֆունկցիոնալ* սահմանազատման դեպքում՝ մամուլի ազատությունը:¹⁷

Թե խնդիրներ լուծելիս սահմանազատման հարցը որտեղ կքննարկվի և խնդիր լուծողն ինչպիսի կիրառելի կհամարի, որոշիչ նշանակություն ունի, քանի որ Սահմ. 42-րդ հոդ. **3-րդ մասում** նախատեսված սահմանափակումը վերաբերում է միայն կարծիքի ազատությանը: Սահմ. 42-րդ հոդ. 2-րդ մասում ամրագրված հիմնական իրավունքներ

¹⁴ BVerfGE 120, 180 (196 f.).
¹⁵ Այսպիսին է նաև Գերմանիայի Դաշնային ՍԴ-ի թարմ պրակտիկան՝ BVerfG, NJW 2020, 300 Rn. 93 ff.:
¹⁶ Հօգուտ օնլայն-արխիվում մամուլի հաղորդագրությունները պահպանելու թույլատրելիության տես BVerfG, NJW 2020, 300 Rn. 93 ff.: Հօգուտ տեղեկատվության տես BVerfG, NJW 2020, 2873 Rn. 12 ff.:
¹⁷ Հօգուտ հեռարձակման ազատության տես Bethge in Sachs, GG, 9. Aufl. 2021, Art. 5 Rn. 90 b: Հոդվածներն օնլայն-արխիվներում պահելու և ինտերնետով հրապարակելու դեպքում հօգուտ մամուլի ազատության տես BVerfG, NJW 2020, 300 Rn. 93 ff.: Պրոբլեմի մասին մանրամասն տես Grabenwarter in Maunz/Dürig, GG, 2020, Art. 5 I, II (Nov. 2018) Rn. 245 ff.:

րի սահմանափակման մասին Սահմանադրությունը լուծում է, ուստի դրանք այսպես կոչված **անվերապահ հիմնական իրավունքներ** են, որոնք ենթակա են միայն Սահմանադրությանը ներհատուկ սահմանափակման: Հետևաբար, Սահմ. 42-րդ հոդ. 1-ին մասով երաշխավորված պաշտպանությունը և 2-րդ մասով երաշխավորված պաշտպանությունը **համարժեք չեն**: Բոլոր դեպքերում խնդիր լուծողը պարտադիր պիտի հասկանա, որ ծագում է հիմնական իրավունքները սահմանազատելու պրոբլեմ, և պիտի պատշաճ մակարդակով քննարկի այդ հարցը:

II. Միջամտությունը

Միջամտություն է պետության՝ իրավական ձևով իրականացվող ցանկացած գործողություն, որը հիմնական իրավունքի պաշտպանության առարկան վնասում է նպատակամետ, անմիջական ու անհրաժեշտության դեպքում նաև հարկադրելի կերպով (**միջամտության դասական հասկացություն**):¹⁸ Քաղաքացիական դատարանի կողմից ՔաղՕ 277-րդ հոդվածի և 1058-րդ հոդ. 1-ին մասի անալոզ մեկնաբանությունը, ըստ որի՝ *Ն-ի* հիվանդության մասին հաղորդելը հակաիրավական միջամտություն է *Ն-ի* մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ, անմիջականորեն, նպատակամետ ու անհրաժեշտության դեպքում հարկադրելի կերպով հանգեցնում է նրան, որ *Ա-ն* պարտավոր է ջնջել իր հոդվածը և ձեռնպահ մնալ նմանատիպ հրապարակումներից: Հետևաբար, դատական ակտը միջամտություն է *Ա-ի* կարծիքի ազատության հիմնական իրավունքի նկատմամբ:

III. Միջամտության սահմանադրաիրավական արդարացումը

Միջամտությունը պետք է արդարացված լինի: Դա այդպես է միայն այն դեպքում, երբ կարծիքի ազատության հիմնական իրավունքը սահմանափակելի իրավունք է (1), այդ իրավունքը սահմանափակող օրենքը ձևական և նյութական տեսանկյունից համապատասխանում է Սահմանադրությանը (2), և քաղաքա-

ցիական դատարանն օրենքը մեկնաբանելիս ու կիրառելիս չի խախտել *Ա-ի* հիմնական իրավունքները (3):

1. Կարծիքի ազատության հիմնական իրավունքի սահմանափակելիությունը («սահմանափակում»)

Համաձայն Սահմ. 42-րդ հոդ. 3-րդ մասի՝ կարծիքի ազատության հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ այնտեղ թվարկված նպատակներով (**«օրենքի որակյալ վերապահում»**): Ըստ այդմ՝ կարծիքի ազատությունը սահմանափակելի իրավունք է: Ընդ որում, «օրենք» հասկացությունը Սահմ. 42-րդ հոդ. 3-րդ մասում գործածված է *ձևական* օրենքի իմաստով:¹⁹

ՔաղՕ 277-րդ հոդվածը և 1058-րդ հոդ. 1-ին մասը ձևական օրենք են Սահմ. 42-րդ հոդ. 3-րդ մասի իմաստով, ուստի՝ կարծիքի ազատությունը սահմանափակելու պիտանի կարգավորումներ:

2. Սահմանափակող օրենքի (ՔաղՕ 277-րդ հոդվածի և 1058-րդ հոդ. 1-ին մասի) սահմանադրականությունը («սահմանափակման սահմանափակումը» օրենքի մակարդակում)

Վիճարկվող դատական ակտը հիմնվում է ՔաղՕ 277-րդ հոդվածի և 1058-րդ հոդ. 1-ին մասի վրա՝ անալոզ: Այս դրույթները պետք է ձևական ու նյութական տեսանկյունից համապատասխանեն Սահմանադրությանը: Դրանց ձևական սահմանադրականության հարցում կասկածներ չկան: ՔաղՕ 277-րդ հոդվածը և 1058-րդ հոդ. 1-ին մասը պարունակում են անորոշ իրավական հասկացություններ, որոնք բավականաչափ լայն հնարավորություն են ստեղծում Սահմանադրությանը համահունչ մեկնաբանման²⁰ համար, այնպես որ դրանք նաև նյութական տեսանկյունից են սահմանադրական:

3. Կոնկրետ դատական որոշման սահմանադրականությունը («սահմանափակման սահմանափակումը» կոնկրետ դեպքի մակարդակում)

Սահմանադրությունը կարող է խախտված լինել նրանով, որ կոնկրետ գործով ՔաղՕ 277-

¹⁸ Kingreen/Poscher, Grundrechte. StaatsR II, 36. Aufl. 2020, Rn. 259 ff.

¹⁹ Օրենքի դուալիստական (ձևական և նյութական) հասկացության մասին մանրամասն տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 106-119:

²⁰ Սահմանադրությանը համահունչ մեկնաբանման մասին մանրամասն տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 345-349:

րդ հոդվածը և 1058-րդ հոդ. 1-ին մասը մեկնաբանելիս ու կիրառելիս դատարանները պատշաճ ուշադրության չեն արժանացրել դիմումատուի հիմնական իրավունքները: ՄԴ-ն դատական ակտերի վերահսկողության ժամանակ ստուգում է միայն, թե արդյոք առանձնահատուկ կերպով խախտվել է սահմանադրական իրավունքը **(սպեցիֆիկ սահմանադրական իրավունքի խախտում)**,²¹ այսինքն՝ արդյոք դատարանները կոնկրետ գործով ամբողջովին աչքաթող են արել հիմնական իրավունքների կիրառելիությունը և գործի հետ դրանց կապը, կամ թե արդյոք դատական ակտում տեսանելի է կոնկրետ հիմնական իրավունքի մասին սկզբունքային սխալ պատկերացում կամ դրան նշանակության ու կարևորության թյուրըմբռնում, ինչպես նաև կամայականություն: Հակառակը, ՄԴ-ի խնդիրն ու իրավասությունը չէ քաղաքացիական դատարանին ցույց տալ վեճի «ճիշտ» լուծումը հասարակ օրենքների տեսանկյունից:²²

Դատարանները ՔաղՕ 277-րդ հոդվածը և 1058-րդ հոդ. 1-ին մասն անալոգ մեկնաբանել են այն իմաստով, որ *Ա-ի* կողմից այստեղ խնդրո առարկա տեղեկությունը հաղորդելը *Ն-ի* անձնական կյանքի գաղտնիության իրավունքի խախտում է: Ելնելով ստուգման մասշտաբից՝ պետք է այդ պատճառով ստուգել, թե արդյոք քաղաքացիական դատարանները սահմանադրական իրավունքի տեսանկյունից ընդունելի ձևով հաշվի են առել *Ն-ի* անձնական կյանքի գաղտնիության իրավունքը (a) և *Ա-ի* կարծիքի ազատությունը (b) և արդյոք պատշաճ կերպով հավասարակշռել են դրանք **(գործնական ներդաշնակության սկզբունք)**²³ (c):

Հուշում: Քաղաքացիական դատարանները «որոշում» են միայն վեճի՝ արդեն իսկ օրենքում գոյություն ունեցող լուծումը: Այդ պատճառով, ի տարբերություն օրենսդրի ու գործադիրի կողմից միջամտության դեպքերի, դժվար է դատական ակտերի համաչափությունն ստուգելիս խոսել լեգիտիմ նպատակի, պիտանիու-

թյան ու անհրաժեշտության մասին: Ըստ էության ստուգվում է սուկ չափավորությունը, այն է՝ թե արդյոք դատարանը ճիշտ է հասկացել կոնկրետ գործով բախվող հիմնական իրավունքներով պաշտպանվող շահերը և արդյոք պատշաճ կերպով հավասարակշռել է դրանք:

a) Ն-ի անձնական կյանքի գաղտնիության իրավունքի հնարավոր խախտումը

Սկզբում հարցական է, թե արդյոք դատարանները ճիշտ են գնահատել, որ խախտվել է *Ն-ի* անձնական կյանքի գաղտնիության իրավունքը (Սահմ. 31-րդ հոդ. 1-ին տարբերակ):

Իբրև ֆիզիկական անձ՝ *Ն-ն* անձնային տեսանկյունից կարող է հենվել անձնական կյանքի գաղտնիության իրավունքի վրա:

Առարկայական տեսանկյունից անձնական կյանքի գաղտնիության իրավունքը պաշտպանում է այլնի թվում անհատականության ձևավորումն ու դրսևորումը, ընդ որում գոյություն ունեն այս հիմնական իրավունքի տարբեր արտահայտություններ:²⁴ Մեր խնդրում նշանակություն ունեն մասնավոր ոլորտի և ինքնացուցադրման իրավունքը:

aa) Մասնավոր ոլորտի իրավունքը

Առարկայական տեսանկյունից մասնավոր ոլորտի իրավունքն անձին պաշտպանում է այնպիսի տեղեկությունների տարածումից, որոնք սովորաբար բնութագրվում են իբրև «մասնավոր հարցեր», քանի որ դրանց հայտնի դառնալն անախորժ դրության մեջ է գցում մարդուն կամ կարող է դառնալ շրջապատում բացասական արձագանքների պատճառ: **Տարածական** տեսանկյունից այդ իրավունքը պաշտպանում է մի սենյակում հանրային դիտարկումից ու դրանով պայմանավորված հարկադրված ինքնավերահսկողությունից ազատ ձևով իրեն պահելու հնարավորությունը, քանի որ առանց նման անձնական «նահանջի» տարածքի անհատը կարող է հոգեբանորեն չափից դուրս ծանրաբեռնվել: Նման պաշտպանության կարիք և մասնավոր ոլորտ ունենալու իրավունք ունեն նաև հասարակության ուշադրության կենտրոնում գտնվող պաշտոնատար

²¹ Տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 70-71:

²² Դատական ակտերի սահմանադրականության ստուգման մասշտաբի մասին մանրամասն տես Schlaich/Korioth, Das BVerfG, 11. Aufl. 2018, Rn. 280 ff.:

²³ Գործնական ներդաշնակության սկզբունքի մասին տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն, էջ 344:

²⁴ Տես Eifert, Jura 2015, 1181:

անծինք: Թեև նրանք իրենց պաշտոնական դիրքի պատճառով իրենց լիազորությունների իրականացման համար հաշվետու են հանրությանը և ստիպված են այդքանով հանդուրժել իրենց նկատմամբ հասարակական ուշադրությունը, բայց ոչ իրենց մասնավոր կյանքի շրջանակում, որքանով դա չի վերաբերում նրանց պաշտոնական լիազորությունների կատարմանը:²⁵

Հոդվածում հրապարակվում են *Ն-ի* առողջական վիճակի մասին տեղեկություններ, որոնց հայտնի դառնալը կարող է անախորժ դրության մեջ գցել *Ն-ին*: Հետևաբար, *առարկայական* տեսանկյունից *Ն-ի* մասնավոր ոլորտը շոշափվում է: Բայց վերևում նշված մասշտաբի հիման վրա կարելի է դրա դեմ առարկել, որ տեղեկությունը բովանդակային առումով առանձնահատուկ կերպով վերաբերում է *Ն-ի* կողմից իր պաշտոնական լիազորություններն իրականացնելու ունակությանը:

Սակայն *առարկայական* տեսանկյունից մասնավոր ոլորտի իրավունքի խախտման հարցը կարող է այստեղ անպատասխան մնալ, որովհետև բոլոր դեպքերում կարող է խախտված լինել մասնավոր ոլորտի իրավունքը *տարածական* տեսանկյունից: Վերևում նշված մասշտաբների լույսի ներքո պաշտպանության է ենթակա ոչ միայն սեփական բնակարանի տարածքը: Այլ տարածքներ նույնպես կարող են վայելել այդպիսի պաշտպանություն: Պաշտպանության ծավալի համար որոշիչ է, «թե արդյոք անհատը հայտնվում է այնպիսի իրավիճակում կամ ինքն է ստեղծում այնպիսի իրավիճակ, որում նա իրավացիորեն ու երրորդ անձանց կողմից ճանաչելիորեն իրավունք ունի ելնելու նրանից, որ ինքը հեռու է հասարակության աչքից»:²⁶ Նկատի ունենալով, որ ռեստորանը հասարակության համար մատչելի ու քաղաքական գործիչների համար սիրված վայր է, և հաշվի առնելով *Ն-ի*՝ իբրև նախարարի պաշտոնական դիրքը, որը մեծապես գտնվում է հասարակության ուշադրության կենտրոնում, կարելի է ասել, որ նա պարտավոր էր ենթադրել,

որ երրորդ անձանց հայտնի կդառնա իր ներկայությունը: Հակառակը, պաշտպանության օգտին խոսում է, որ հանդիպումը գիտակցաբար տեղի է ունեցել առանձնացված և մուտքի արգելապատնեշով (կողմնակի հայացքներից պաշտպանող միջնորմով, ցուցանակով) կահավորված տարածքում, որի միջոցով երրորդ անձանց համար պարզորոշ կերպով ընդգծվում է հանդիպման մեկուսի ու մասնավոր բնույթը: Այդ պատճառով *Ն-ն* կարող էր արդարացիորեն ելնել նրանից, որ պաշտպանված է հասարակության հայացքներից:

bb) Ինքնացուցադրման իրավունքը

Ինքնացուցադրման իրավունքը երաշխավորում է, որ անհատը կարողանա պաշտպանվել իր անձը կեղծող, նվաստացնող կամ անցանկալի հանրային ցուցադրումից կամ անցանկալի գաղտնի դիտարկումից:²⁷ Այս իրավունքը նույնպես շոշափվում է դողդողալու նույնպիսի գաղտնի դիտարկման միջոցով:

Քաղաքացիական դատարանները ճիշտ կերպով հաշվի են առել *Ն-ի* մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը:

b) Ա-ի կարծիքի ազատության հնարավոր խախտումը

Քաղաքացիական դատարանները ճիշտ կերպով հաշվի են առել նաև *Ա-ի* կարծիքի ազատությունը (տես վերևում):

c) Համադրում

Պետք է ստուգել, թե արդյոք քաղաքացիական դատարանները բախվող երկու հիմնական իրավունքներն ընդունելի կերպով հավասարակշռել են: Դրա համար պետք է, մասնավորապես, հաշվի առնել համապատասխան հիմնական իրավունքի կշիռը և դրա նկատմամբ միջամտության չափը:

Վերացական գնահատման դեպքում *կարծիքի ազատությունը* չափազանց մեծ դեր ունի ազատ հաղորդակցության և մտքերի փոխանակման վրա հիմնված ժողովրդավարական սահմանադրական պետությունում:²⁸ Այդ պատճառով գործում է այն սկզբունքային ենթադրությունը, որ տեղեկություններ հաղոր-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

²⁵ Stn BVerfGE 101, 361 (382 f.):

²⁶ BVerfGE 101, 361 (384).

²⁷ Kingreen/Poscher, Grundrechte. StaatsR II, 36. Aufl. 2020, Rn. 414.

²⁸ Schulze-Fielitz in Dreier, GG I, 3. Aufl. 2013, Art. 5 I, II Rn. 164; Eifert, Jura 2015, 1181 (1189).

դելը թույլատրելի է, որքանով դա ծառայում է հանրային կարծիքի ձևավորմանը:²⁹ Կոնկրետ այս դեպքում կարծիքի ազատության կշիռը որոշելու համար մեծ նշանակություն ունի տեղեկության առնչությամբ հանրային շահը: Դա չափվում է հաղորդման հիմքում ընկած դեպքերի հանրային նշանակությամբ և այն անձի հանրային դերով, ում այդ հաղորդումը վերաբերում է:³⁰

Ն-ի դոդրոդալու մասին տեղեկության առնչությամբ կա չափազանց մեծ հանրային շահ: Դա վերաբերում է նախարարի՝ իբրև պետության բարձրագույն ներկայացուցիչներից մեկի առողջությանը և դրանով՝ պաշտոնական լիազորություններն իրականացնելու նրա ունակությանը: Իբրև նախարար՝ Ն-ն նաև գտնվում է հասարակության առանձնահատուկ ուշադրության կենտրոնում: Կարծիքի ազատությունն առանձնապես ուժեղ կերպով վնասվում է հոդվածը ջնջելու և նմանատիպ հրապարակումներից ձեռնպահ մնալու դատական հարկադրանքով:

Մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքի շրջանակում դրա վնասման ուժգնությունը գնահատելու համար առաջին հերթին կարևոր է **ոլորտների տեսությունը**:³¹ Տարբերակում են մարդու կյանքի *սոցիալական, մասնավոր և ինտիմ* ոլորտները՝ իբրև աստիճանական ոլորտներ, որոնք նշված հերթականությամբ ավելի ուժգին պաշտպանության կարիք ունեն: ³² Ինտիմ ոլորտը՝ իբրև մարդու անհատականության դրսևորման միջուկ, մարդու արժանապատվության հետ առանձնահատուկ կապի պատճառով բացարձակ պաշտպանված է և ենթակա չէ սահմանափակման այլ հիմնական իրավունքների հետ համադրման միջոցով:³³ Այս բացարձակ պաշտպանության պատճառով տեղեկությունների հաղորդումն ինտիմ ոլորտին դասելը պետք է տեղի ունենա

առանձնապես խնամքով ստուգելու արդյունքում և չպետք է կախման մեջ դրվի միայն տեղեկության տեսակից: Կոնկրետ գնահատումն ավելի շուտ կախված է կոնկրետ դեպքի հանգամանքներից և նրանից, «*թե արդյոք անձն ուզում է դա գաղտնի պահել, արդյոք դա իր բովանդակությամբ խիստ անձնական բնույթի է և ինչպես ու ինչ ուժգնությամբ է դա շոշափում ուրիշների ոլորտը կամ հասարակության շահերը*»:³⁴

Ինտիմ ոլորտին դասելու օգտին այստեղ խոսում է, որ տեղեկությունը վերաբերում է առողջությանը և այդպիսով խիստ անձնական բնույթի է: Բայց դրա դեմ խոսում է, որ խոսքն արտաքինից առանց այլևայլության տեսանելի ավտանիշների և ոչ թե գաղտնի ավտորոշումների մասին է: Այստեղ առանձնահատուկ պաշտպանության կարիքը և մասնավոր բնույթը բխում են ոչ այնքան ինքնին տեղեկությունից, որքան դրա մասին իմանալու եղանակից: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ առողջությունը նախարարի պարագայում պաշտոնական լիազորություններն իրականացնելու ունակության առնչությամբ հնարավոր կասկածների պատճառով առանձնահատուկ կերպով շոշափում է նաև հասարակության շահը, ինչն այստեղ վճռորոշ կերպով խոսում է այն բանի օգտին, որ տեղեկությունը չպետք է դասվի ինտիմ ոլորտին (*հակառակ կարծիքը նույնպես ընդունելի է*):³⁵ Այն ավելի շուտ պատկանում է մասնավոր ոլորտին:

Բացի այդ, միջամտության ուժգնության համար պետք է հաշվի առնել նաև տեղեկությունը ձեռք բերելու հանգամանքները: Հատկապես գաղտնի և մուտքի արգելապատնեշները հաղթահարելու եղանակով տեղեկություն ձեռք բերելն առանձնապես ծանրակշիռ միջամտություն է անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ: Ն-ն մտածված

²⁹ Eifert, Jura 2015, 1181 (1189); BVerfGE 120, 180 (203); BVerfGE 93, 266 (294).

³⁰ Eifert, Jura 2015, 1181 (1189).

³¹ Ոլորտների տեսության մասին մանրամասն տես Հովհաննիսյան/Ղամբարյան/Սարգսյան, Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսագրության կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական և քաղաքացիական դատավարությունում, 2017, էջ 24-33:

³² BVerfGK 18, 42; BVerfGE 119, 1 (29 f.).

³³ Դատական պրակտիկայից տես BGH, NJW 2012, 767 Rn. 11; BVerfGE 6, 32; BVerfGE 34, 238 (245); BVerfGE 80, 367 (373); BVerfGE 109, 279 (313 f.): Տես նաև Schneider, JuS 2021, 29:

³⁴ BGH, NJW 2012, 767 Rn.; տես նաև BVerfGE 80, 367 (374); BVerfGE 109, 279 (314):

³⁵ BGH, NJW 2012, 767; BGHZ 207, 163 = NJW 2016, 1094; BGH, NJW 2009, 754 Rn. 20.

կերպով ուրիշների հայացքներից պաշտպանված հատվածում տեղ զբաղեցնելու միջոցով իր համար ստեղծել էր անձնական նահանջի տարածք և համապատասխան ցուցանակի առկայության պատճառով արդարացիորեն իրավունք ուներ ելնելու նրանից, որ երրորդ անձինք կկարդան այդ ցուցանակը և կհարգեն այն: Ա-ն, լավ իմանալով այդ հանգամանքը և, չնայած դրան, դիտավորյալ կերպով միջնորմը հաղթահարելու միջոցով տեղեկությունը ձեռք բերելով, առանձնապես ծանրակշիռ եղանակով վնասել է Ն-ի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը:

Այսպիսով, միմյանց են բախվում մի կողմից հասարակության մեծ հետաքրքրությունը և դատական ակտով ծանրակշիռ միջամտությունը Ա-ի կարծիքի ազատության նկատմամբ, մյուս կողմից՝ տեղեկությունը տարածելու միջոցով Ն-ի մասնավոր ոլորտի ծանր վնասումը: Հաշվի առնելով, որ տեղեկությունը ձեռք է բեր-

վել գաղտնի կերպով և պաշտպանիչ միջոցները դիտավորյալ հաղթահարելով, այստեղ գերակշռում է մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը:

Հետևաբար, քաղաքացիական դատարանները սահմանադրական իրավունքի տեսանկյունից անթերի կերպով հանգել են այն արդյունքին,³⁶ որ Ն-ի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը գերակշռում է Ա-ի կարծիքի ազատությանը (*հակառակ կարծիքը նույնպես ընդունելի է*): Կիրառված նորմերի մեկնաբանությունն այն իմաստով, որ տեղեկությունը հրապարակելը խախտում է Ն-ի մասնավոր ոլորտի իրավունքը, անհամաչափ միջամտություն չէ Ա-ի կարծիքի ազատության նկատմամբ:

Գ. Արդյունքը

Ա-ի անհատական դիմումը թույլատրելի է, բայց անհիմն: Այն չի բավարարվի:



³⁶ Բնականաբար ո՛չ հայկական քաղաքացիական դատարանները, ո՛չ ՍԴ-ն այսպիսի հարցեր ու այս ձևով չեն քննարկում ու վեճերն այստեղ ներկայացված տրամաբանությամբ չեն լուծում: Հայկական իրավաբանական կրթությունը դեռ այս մակարդակին չի հասել:

ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ
Գրախոս՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Պետրոսյան

ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ

Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վարույթի հարուցումը շահագրգիռ անձի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման իրավունքի իրականացումն է բողոք ներկայացնելու միջոցով: Բողոքի նշանակությունը մեծ է քաղաքացիական դատավարության իրավունքում, քանի որ հենց բողոքն է համարվում վերանայման վարույթի հարուցման հիմք և պատճառ, դատական ակտի վերանայման միջոց: Սակայն բողոքի ներկայացումը մեխանիկորեն վերանայման վարույթի հարուցում չի ենթադրում: Բողոքարկման իրավունքի իրականացման համար, բացի օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալներից, անհրաժեշտ է նաև հետևել մի շարք ձևական պայմանների:

Բողոքարկման պայմաններն այն հանգամանքներն են, որոնք կապված են բողոքի բովանդակության, ձևի և ներկայացման կարգի հետ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 421-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը կազմվում է գրավոր՝ սույն օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պահանջների պահպանմամբ: Բողոքը պետք է լինի ընթեռնելի: Գործին մասնակցող անձինք դատավարական բոլոր փաստաթղթերը ներկայացնում են հայերեն կամ այլ լեզվով՝ հայերեն պատշաճ թարգմանությամբ: Նշված պահանջը չպահպանելու դեպքում դատավարական փաստաթղթերը դատարանը չի քննարկում կամ չի թույլատրում, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում վե-

րադարձում է դրանք ներկայացրած անձանց (ՔԴՕ 16-րդ հոդվ. 2-րդ մաս):

2. ՔԴՕ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոքում պետք է նշվեն՝ 1) այն դատարանի անվանումը, որին բողոքը հասցեագրվում է, 2) բողոք բերող անձի և գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, 3) դատարանի անվանումը, որի կայացրած դատական ակտի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, 4) դատական ակտի վերանայման համար հիմք հանդիսացող նոր երևան եկած կամ նոր հանգամանքի շարադրանքը և հիմնավորումը, թե ինչու է այն հիմք դատական ակտի վերանայման համար, 5) բողոք բերող անձի պահանջը, 6) բողոքին կցվող փաստաթղթերի ցանկը:

3. Բողոքին կցվում են՝ 1) ներկայացուցչի լիազորությունները հավաստող փաստաթուղթ, եթե այն առկա չէ դատական գործում, և բողոքը ստորագրել է ներկայացուցիչը, 2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքը հաստատող ապացույցներ, 3) իրավահաջորդության փաստը հավաստող փաստաթուղթ, եթե բողոքը ներկայացվում է գործին մասնակցող անձի իրավահաջորդի կողմից, 4) բողոք ներկայացնելու ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն, եթե բողոքը ներկայացվել է սույն օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված

ժամկետի խախտմամբ¹, 5) բողոքը դատա-

¹ ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ այն բոլոր դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից (նրա կամբից) անկախ պատճառներով, իրավունքի ուժով (ex jure) բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի (տես ՀՀ սահմանադրական դատարանի 02.02.2021թ. ՍԴՈ-1575 և 06.09.2016թ. ՍԴՈ-1296 և այլ որոշումները):

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

կան ակտ կայացրած դատարանին ուղարկելու մասին ապացույց, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքը բերվում է Վճռաբեկ դատարանի դատական ակտի դեմ, 6) բողոքը և կից փաստաթղթերը գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու կամ նրանց հանձնելու մասին ապացույցներ: 4. ՔԴՕ 421-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված, ինչպես նաև բողոք բերող անձի այլ միջնորդությունները կարող են ներկայացվել նաև բողոքում ներառվելու ձևով:

5. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքն ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը (ՔԴՕ 421-րդ հոդվածի 3-5-րդ մասեր):

Բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես դատական ակտի վերանայման բողոքում: Բողոք ներկայացնելուց հետո դրա հիմքերը և հիմնավորումները չեն կարող լրացվել կամ փոփոխվել, բացառությամբ բողոքը վերադարձնելուց հետո կրկին ներկայացնելու դեպքերի:

Հարկ է ընդգծել, որ դատարանն ըստ էության միակ պետական մարմինն է, որին դիմելը պայմանավորված է այն դիմումների ու բողոքների բովանդակության որոշակի պահանջներին հետևելու անհրաժեշտությամբ, որոնք սահմանված են գործի ճիշտ և ժամանակին քննության անհրաժեշտ պայմանների ստեղծման, ինչպես նաև գործին մասնակցող այլ անձանց իրավունքների ապահովման նպատակներով:

Օրենքը սահմանում է, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝ 1) գործին մասնակցող անձինք և նրանց իրավահաջորդները, եթե վիճելի կամ դատական ակտով հաստատված իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, 2) գլխավոր դատախազը և նրա տեղակալը՝ օրենքով նախատեսված դեպքերում (ՔԴՕ 417-րդ հոդվ.):

Ինչպես երևում է ՔԴՕ 417-րդ հոդվածի բովանդակությունից, օրենսդիրը գործին մասնակից չդարձված անձանց և նրանց իրավա-

հաջորդներին, եթե վիճելի կամ դատական ակտով հաստատված իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, բողոքարկման իրավունք չի վերապահել, որը, մեր խորին համոզմամբ համարվում է էական բացթողում:

Այն անձանց իրավունքների ու պարտականությունների հստակ կարգավորումը, ովքեր չեն մասնակցել գործին, բայց որոնց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ ստորադաս դատարանը ընդունել է դատական ակտ, ունի պրակտիկ մեծ նշանակություն, քանի որ հաճախ տեղի է ունենում նշված անձանց իրավունքների խախտում, ինչն անթույլատրելի է, և յուրաքանչյուր դեպքում պետք է ապահովել նրանց իրավունքների ամբողջական իրականացումը:

ՌԴ ՔԴՕ 394-րդ հոդվածում այս հանգամանքը ձևակերպված է հետևյալ կերպ. «Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը կարող են բողոքարկվել ... նաև այլ անձանց կողմից,»:

Օ. Յ. Սկվորցովի կարծիքով՝ եթե բողոքը բերվել է օրենքով սահմանված կարգով և այն անձի կողմից, ով չի մասնակցել գործին, բայց նա հայտնում է, որ բողոքարկվող դատական ակտով լուծվել է իր իրավունքների կամ պարտականությունների հարցը, ապա բողոքն ըստ էության ենթակա է վերանայման: Մի շարք հեղինակների հետ միասին մենք ևս գտնում ենք, որ այդ կերպ իսկապես կիրականացվեն այն անձանց իրավունքները, որոնք ոչ իրենց մեղքով չեն մասնակցել գործին, բայց կարծում են, որ ընդունված դատական ակտով շոշափվել է իրենց իրավունքները²:

Համանման տեսակետ ունի նաև Ա. Ս. Կոժեմյակոն: Վերջինս կարծում է, որ բողոքարկման սուբյեկտների շրջանակը չպետք է սահմանափակվի որևէ հատկանիշներով: Նա ենթադրում է, որ բողոքարկման իրավունքի սուբյեկտ փաստացի կարող է լինել գործին մասնակցող կամ չմասնակցող ցանկացած անձ, անկախ նրանից, թե իսկապես այդ որոշմամբ շոշափվել է նրա իրավունքները, թե ոչ: Որպեսզի դատարանը բողոքը ընդունի վա-

² См. Скворцов О. Ю. Институт кассации в российском арбитражном процессуальном праве (Проблемы судостройства и судопроизводства). Дисс... канд. юрид. наук. СПб, 2000, էջ 76-78.

րոյթ, դիմողին բավարար է միայն բողոքարկվող որոշմամբ իր իրավունքների խախտման վկայակոչումը: Գործի քննության ընթացքում նման խախտման փաստն ինքնին ենթակա է ապացուցման³:

Նշվածը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ տվյալ դեպքում ՀՀ ՔԴՕ-ում առկա է բացթողում՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վարույթ նախաձեռնելու իրավունքով օժտված անձանց շրջանակի կարգավորման հետ կապված:

Այս նույն կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իր 27.11.2015թ. քաղաքացիական գործ թիվ 03-2071 որոշման մեջ արձանագրել է, որ բեկանման ենթակա են բոլոր այն որոշումները, որոնք լուծել են գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների հարցը: Նշվել է նաև, որ այդ անձինք օգտվում են գործին մասնակցող անձանց իրավունքներից և պարտականություններից:

Անդրադառնալով գործին մասնակից չդարձված անձանց իրավունքներին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ իրավունքների իրացումը չի կարող կրել բացարձակ բնույթ: Մասնավորապես, գործին մասնակից չդարձված անձանց կողմից իրենց իրավունքներին վերաբերող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում հարկ է պահպանել անհրաժեշտ հավասարակշռություն մի կողմից գործին մասնակցող անձանց սահմանադրական իրավունքների ու պարտականությունների, մյուս կողմից՝ գործին մասնակից չդարձված այն անձանց իրավունքների և պարտականությունների միջև, որոնց իրավունքներին և պարտականություններին առնչվում է դատական ակտը:

Գործին մասնակից չդարձված անձանց կողմից իրենց իրավունքներին վերաբերող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բողոքարկելու դեպքում դրա վերանայման վարույթում այն կարող է բեկանվել միայն այն մասով, որով այդ դատական ակտը առնչվում է նշված անձանց իրավունքներին և պարտակա-

նություններին, ինչը կարող է ապահովել գործին մասնակցող և գործին մասնակից չդարձված անձանց իրավունքների և պարտականությունների միջև հավասարակշռությունը:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով գործին մասնակից չդարձված անձանց կողմից դատական ակտը բողոքարկելու՝ սույն որոշման մեջ արտահայտած դիրքորոշումները, գտնում է, որ գործին մասնակից չդարձված անձանց կողմից օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման վարույթն իրենից ներկայացնում է արդեն իսկ քննված գործի վերաբացում՝ դրա շրջանակներում քննության առարկա հանդիսացող իրավահարաբերության մասնակիցներին գործին մասնակից չդարձնելու հետևանքով առկա սխալները շտկելու նպատակով, ինչն իր հերթին կարող է հանգեցնել գործի նոր քննության այն մասով, որ մասով գործն առնչվում է դրան մասնակից չդարձված անձանց իրավունքներին և օրինական շահերին⁴:

Վերը շարադրվածների հիման վրա գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ 417-րդ հոդվածում պետք է նախատեսել գործին ընդհանրապես մասնակից չդարձված անձանց բողոք բերելու իրավունքը, այն շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված 417. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք

1.....

3) գործին մասնակից չդարձված անձինք և նրանց իրավահաջորդները, եթե վիճելի կամ դատական ակտով հաստատված իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն.

ՀՀ ՔԴՕ 417-րդ հոդվածը նշված կետով լրացվելու դեպքում այն ոչ միայն կապահովի հուսալի երաշխիքներ արդարադատության մատչելիության համար, այլև կնպաստի ավելի արդյունավետ իրականացնելու մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունը:

Քննարկվող վարույթի կարգով բողոքարկման օբյեկտ են հանդիսանում օրինական ուժի

³ Տե՛ս Кожемяко А. С. Кассационное производство в арбитражном суде: теория и практика. М., 2004, էջ 46-48:

⁴ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2019թ. քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/3197/02/15 և 17.07.2015թ. քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0199/02/11 որոշումները:

մեջ մտած և բողոքարկման ենթակա դատական ակտերը:

Կ.Ի. Կոմիսսարովի կարծիքով այս վարույթի կարգով դատարանի մասնավոր (լրացուցիչ) որոշումները վերանայելու անհրաժեշտություն չկա, քանի որ դրանցում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վերջնական եզրահանգում չի կատարվում⁵: Հակառակ տեսակետն է արտահայտում Ի.Մ. Չայցևը, ըստ որի, մասնավոր (լրացուցիչ) որոշումները պարունակում են քաղաքացիների և իրավաբանական անձանց պատվին և արժանապատվությանը վերաբերող տեղեկություններ, որի հետևանքով դրանք նույնպես պետք է լինեն վերանայման օբյեկտ⁶:

Վ. Ս. Կալմացկին կողմնակից է այն տեսակետին, համաձայն որի բողոքարկվող դատական ակտը վերանայելիս դատավարական իրավահարաբերությունների օբյեկտ է համարվում ստուգվող դատական ակտը կամ դրա ստուգումը վերադաս դատական ատյանի կողմից⁷: Համանման դիրքորոշում ունի նաև Ս. Յու. Կացը: Վերջինս իր դիրքորոշումը փաստարկում է նրանով, որ բողոքարկվող դատական ակտերը հենց այն իրավաբանական նշանակություն ունեցող փաստերն են, որոնց առիթով իրավահարաբերություններ են առաջանում վերանայման բոլոր մասնակիցների միջև, քանի որ հենց դրանց է ուղղված դատավարության մասնակիցների գործողությունները⁸:

Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, վճարման կարգադրությունները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին և վճռաբեկ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումները (ՔԴՕ 415-րդ հոդվ.):

ՀՀ սահմանադրական դատարանն իր 27.01.2021թ. ՍԴՈ-1573 որոշմամբ ՔԴՕ 415-րդ

հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով այն բացառում է վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, սակայն բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերի վերանայումը նոր հանգամանքներով, ճանաչել է Սահմանադրության 61-րդ և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ՔԴՕ 420-րդ հոդվածի համաձայն նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել երեք ամսվա ընթացքում, որի հաշվարկը սկսվում է՝ 1) ՔԴՕ 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում՝ այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին, 2) ՔԴՕ 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, 3) ՔԴՕ 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում՝ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրվանից, 4) ՔԴՕ 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից, 5) ՔԴՕ 419-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, 6) ՔԴՕ 419-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքում՝ այն դատական կամ վարչական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, որով վերացվել է համապատասխան դատական ակտը, դատավճիռը կամ վարչական ակտը, 7) ՔԴՕ 419-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ դատարանի համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

⁵ Տե՛ս Комиссаров К.И. Советский гражданский процесс. М., Юрид. лит., 1978, էջ 340:

⁶ Տե՛ս Зайцев И.М. Научное наследие: монография: 3-х т. Т. 2. Ч. 2. 1982-1990 гг. – Саратов: Изд. центр «Наука», 2009, էջ 142-143:

⁷ Տե՛ս Калмацкий В.С. Суд второй инстанции в советском гражданском процессе. Уфа, 1978, էջ 23:

⁸ Տե՛ս Кац С.Ю. Судебный надзор в гражданском судопроизводстве. М., 1980, էջ 90-91:

Դատական ակտի վերանայման բողոք չի կարող ներկայացվել, եթե դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի: Նշված ժամկետը ենթակա չէ վերականգնման:

Անվիճելի է, որ դատարանի կարևորագույն խնդիրը քաղաքացիական գործերի ճիշտ և ժամանակին քննությունն ու լուծումն է: Դա ապահովում է դատարանի և քաղաքացիական դատավարության բոլոր մասնակիցների կողմից դատավարական ժամկետների խստագույն պահպանումը: Դատավարական ժամկետները միաժամանակ նպաստում են քաջքշուկը բացառելուն, դատավարական իրավահարաբերությունների կայունությունը, հստակությունը և որոշակիությունն ապահովելուն, որը, վերջին հաշվով, ապահովում է դատարան դիմող քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի ռեալ պաշտպանությունն ու երաշխավորվածությունը, մի խոսքով՝ արդարադատության իրականացման արդյունավետությունը:

Դատավարական ժամկետները նաև կողմերին և վարույթի մյուս մասնակիցներին հնարավորություն են տալիս պատշաճ նախապատրաստվել օրենքով նախատեսված դատավարական գործողությունների կատարմանը⁹:

ՔԴՕ 422-րդ հոդվածի համաձայն դատարանը բողոքն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, որոշում է կայացնում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին, եթե՝ 1) չեն պահպանվել ՔԴՕ 421-րդ հոդվածի պահանջները, 2) տվյալ գործով կամ տվյալ հարցով վերադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ գտնվող դատական ակտի առկայության պայմաններում բողոք է բերվել ստորադաս դատարանի դատական ակտի դեմ, 3) բողոքի շրջանակներում ակնհայտորեն հիմնավորված չէ նոր երևան եկած կամ նոր հանգամանքի առկայությունը:

Դատական ակտի վերանայման բողոքը վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից ենթակա է վերադարձման ՀՀ ՔԴՕ 371-րդ և 395-րդ հոդվածներով սահմանված հիմքերով:

Դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերևույթ խախտումները: Նման որոշում կայացնելու դեպքում բողոք բերած անձին ուղարկվում է միայն դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշումը:

ՀՀ ՔԴՕ 420-րդ հոդվածի պահանջների խախտման, սահմանված ժամկետը լրանալուց հետո բողոքը ներկայացվելու և սահմանված ժամկետը վերականգնելու միջնորդություն չպարունակելու կամ մեկից ավելի դատական ակտերի դեմ բողոք բերված լինելու հիմքերով բողոքը վերադարձնելու որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, թույլ տրված խախտումները վերացվելու և կրկին ներկայացվելու դեպքում դատարանը մեկամսյա ժամկետում որոշում է կայացնում նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթ հարուցելու մասին: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրամադրվում:

Վերաքննիչ դատարանի՝ դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ այն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում: Որոշումը Վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում:

ՔԴՕ 422-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ դատական ակտի վերանայման բողոքը վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից ենթակա է վերադարձման նաև համապատասխանաբար ՔԴՕ 371-րդ և 395-րդ հոդվածներով սահմանված հիմքերով: Սակայն ՔԴՕ 371-րդ և 422-րդ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ իրավական անդրադարձ չի կատարվել այն հարցերին, թե ի՞նչ պահից պետք է հաշվարկվի և ինչքան պետք է լինի վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերաց-

⁹ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, չորրորդ հրատ., Երևան, Ոսկան Երևանցի, 2012, էջ 193:

ներու և կրկին ներկայացնելու ժամկետը բոլոր այն դեպքերում, երբ Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկվելու արդյունքում կատարած վերանայումից հետո մերժում է վճռաբեկ բողոքը:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանն իրավացիորեն արձանագրում է, որ մինչև ՀՀ ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վերանայելուց հետո Վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, բողոքաբերը պետք է հնարավորություն ունենա այդ որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել՝ առաջնորդվելով դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ¹⁰:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կարգավորելով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկության կարգով անմիջականորեն բողոքարկելու կարգը, դրանում չի նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա որոշելու վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և կրկին ներկայացնելու ժամկետը բոլոր այն դեպքերում, երբ Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկվելու արդյունքում կատարած վերանայումից հետո մերժում է նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը¹¹: Մենք լիովին համաձայն ենք ՀՀ սահմանադրական և Վճռաբեկ

դատարանների այս իրավական դիրքորոշումների հետ, և որ օրենսդիրը ՔԴՕ հետագա փոփոխությունները և լրացումները կատարելիս պետք է հաշվի առնի նաև վերը նշված որոշումներով արձանագրված իրավական բացը:

Գործող ՔԴՕ 395 հոդվ. 2-րդ մասի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է մատնանշվեն բողոքի ներկայացման հետ կապված բոլոր այն թերությունները, որոնք բողոքի վերադարձման հիմք են հանդիսանում, և որ այդ պահանջը բխում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով սահմանված և արդար դատաքննության տարրը հանդիսացող՝ գործի ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը նաև նշում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ կայացված վճռաբեկ դատարանի որոշում¹²:

ՔԴՕ 423-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանը դատական ակտի վերանայման բողոքը վարույթ ընդունելը մերժում է ՔԴՕ 372-րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով:

Վճռաբեկ դատարանը դատական ակտի վերանայման բողոքն առանց քննության է թողնում և վարույթ ընդունելը մերժում է ՀՀ ՔԴՕ համապատասխանաբար 396-րդ և 397-րդ հոդվածներով սահմանված հիմքերով և կարգով:

Դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու և վարույթ ընդունելը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ դատարանը բողոքն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, իսկ Վճռաբեկ դատարանը եռամսյա ժամկետում կայացնում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Դատարանը դատական ակտի վերանայման բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ

¹⁰ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 07.02.2017թ. ՍԴՈ-1344 որոշումը:

¹¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 27.03.2019թ. քաղաքացիական գործ թիվ ԼԴ/3377/02/14 որոշումը:

¹² Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2017թ. ՍԴՈ-1363 որոշումը:

որոշում կայացնելուց հետո այն ուղարկում է բողոք ներկայացրած անձին և գործին մասնակցող այլ անձանց:

Դատական ակտի վերանայման բողոքը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշմամբ կամ գործի քննության ընթացքում դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կասեցնել դատական ակտի կամ դրա մի մասի կատարումը:

Բողոքարկվող դատական ակտի կամ դրա մի մասի կատարման կասեցումը պահպանվում է մինչև բողոքի քննության արդյունքով կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ դատական ակտի վերանայման վարույթը կարճվելու դեպքում՝ մինչև այդ մասին դատական ակտի հրապարակումը (ՔԴՕ 424-րդ հոդվ.):

Վերը նշված հարցերով վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված դատական ակտերը ևս հրապարակվում են ՔԴՕ սահմանած կարգով:

Եզրափակիչ դատական ակտի դեմ բերված և դատական նիստում քննված վերաքննիչ

բողոքի քննության արդյունքով կայացված որոշումը հրապարակվում է բողոքի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Բացառիկ դեպքերում, երբ առկա են դատավորի առողջական վիճակի հետ կապված հարգելի հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում որոշման հրապարակումը, դատարանը կարող է մինչև 15 օրով երկարաձգել որոշման հրապարակման ժամկետը՝ այդ մասին ծանուցելով գործին մասնակցող անձանց: Ըստ որում որոշման օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկվում է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել (ՔԴՕ 386-րդ հոդվ.):

Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումները պետք է բավարարեն ՔԴՕ 200-րդ հոդվածով սահմանված պահանջները: Դրանք պատշաճ ձևով ուղարկվում են բողոք բերող անձին ու գործին մասնակցող անձանց և համապատասխան դատարան՝ այն հրապարակելու օրվանից երկշաբաթյա ժամկետում (ՔԴՕ 394-րդ, 395-րդ, 396 և 397-րդ հոդվածներ):



«COVID-19» ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող էլեկտրոնային արդարադատության համակարգի համար լուրջ մարտահրավեր էր 2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում և աշխարհում տարածված «COVID-19» կորոնավիրուսային հիվանդությունը (այսուհետ նաև՝ Վարակ), որը Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որակվեց որպես պանդեմիա¹: Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 16.03.2020թ. թիվ 298-Ն² որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց արտակարգ դրություն, իսկ Պարետի՝ 24.03.2020թ. թիվ 14³ և մի շարք այլ որոշումներով⁴ կիրառվեցին մի շարք սահմանափակումներ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղաշարժի առնչությամբ: Նման իրավիճակում էլեկտրոնային արդարադատության պատշաճ իրացումը ստացավ խիստ կարևոր նշանակություն, քանի որ, մի կողմից, առկա է անհրաժեշտություն պաշտպանել հանրության անվտանգությունը և առողջությունը, մյուս կողմից՝ ապահովել անձի՝ արդար դատական քննության իրավունքը: Նման պայ-

մաններում առավել քան կարևոր է էլեկտրոնային արդարադատության առկա գործիքակազմի պատշաճ կիրառումը, քանի որ վերջինս հնարավորություն է ընձեռում ապահովել անձի՝ արդար դատական քննության իրավունքի իրացումը՝ միաժամանակ հնարավորինս սահմանափակելով անձանց ֆիզիկական շփումները և Վարակի տարածումը:

Ներկայումս Վարակի տարածման պայմաններում դատավարությունների հեռավար իրականացմանն են անցում կատարել մի շարք երկներ: Մեծ Բրիտանիայում 2020 թվականի մարտի 20-ին ընդունվել է «Անգլիայում և Ուելսում քաղաքացիական արդարադատության շրջանակներում հեռավար դատավարությունների մասին» արձանագրությունը, որի շրջանակներում սահմանվել է, որ ներկայիս համաճարակային իրավիճակը առաջացնում է բոլոր հնարավոր դեպքերում հեռավար լուծումների անցկացման անհրաժեշտություն⁵: Բացի սովորյալ արձանագրությունից, Մեծ Բրիտանիայի Նորին Մեծության դատարանների և տրիբունալների ծառայությունը 2020 թվականի մարտի 18-ին հրապարակել է ուղեցույց Վարակի բռնկման ընթացքում հեռախոսային և տեսա-

¹ Տե՛ս Adhanom T., WHO Director-General's opening remarks at the media briefing on COVID-19, 2020թ., <https://www.who.int/dg/speeches/detail/who-director-general-s-opening-remarks-at-the-mission-briefing-oncovid-19---13-march-2020> (08.04.2020թ.):

² Տե՛ս ՀՀ կառավարության որոշում թիվ 298-Ն «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասի», ընդունվել է 16.03.2020թ., ՀՀՊՏ 2020.03.16/ Հատուկ թողարկում 257.5:

³ Տե՛ս Պարետի որոշում թիվ 14 «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ», ընդունվել է 24.03.2020թ.:

⁴ Տե՛ս Պարետի որոշում թիվ 2 «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ», ընդունվել է 17.03.2020թ., Պարետի որոշում թիվ 27 «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ», ընդունվել է 31.03.2020թ., և այլն:

⁵ Տե՛ս Judiciary of England and Wales, Civil Justice In England and Wales: Protocol Regarding Remote Hearings, 2020թ., կետ 1-ին, https://www.judiciary.uk/wp-content/uploads/2020/03/Remotehearings.Protocol.Civil_GenerallyApplicableVersion.f-amend-24_03_20-1.pdf:

ծայնային տեխնոլոգիաների օգտագործման վերաբերյալ⁶: 2020 թվականի մարտի 28-ին ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի դատական խորհուրդը ընդունել է ժամանակավոր արտակարգ միջոցներ Վարակի տարածման պայմաններում դատարանների գործունեության ապահովման նպատակով, որի շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսվել է բոլոր հնարավոր դեպքերում օգտագործել առկա տեխնոլոգիաները դատական լուսմների իրականացումն ապահովելու համար⁷: Հեռավար դատական վարույթների համակարգն ակտիվորեն ներդրվում է ԱՄՆ Տեխաս նահանգում: Ավելի քան 400 դատավոր գրանցվել են «Zoom» հարթակում, որի միջոցով հնարավոր է իրականացնել հեռավար դատական լուսմներ, իսկ 2020 թվականի մարտի 23-ին դատավորների համար անցկացվել է վեբինար, որի շրջանակներում վերջիններիս ներկայացվել են ծրագրի հետ աշխատելու հմտությունները, դատական նիստերի ուղիղ հեռարձակումներ իրականացնելու հնարավորություն տրամադրող գործիքակազմերը և այլն⁸: Ֆրանսիայի Հանրապետությունը նույնպես ձեռնարկել է քայլեր հեռավար լուսմներին անցում կատարելու ուղղությամբ⁹: Համաշխարհային նման զարգացումների պարագայում Հայաստանի Հանրապետությունը չէր կարող զերծ մնալ հեռավար դատական լուսմների կիրառումից:

Բարձրագույն դատական խորհուրդը 24.03.2020թ. թիվ ԲԴԽ-12-Ո-25 որոշմամբ, ի թիվս այլնի, սահմանեց, որ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններում տեսաձայնային հաղորդակցության հնարավորու-

թյունն ապահովող համակարգի ներդրման միջոցով դատական նիստերի մեկնարկը հայտարարվելուն պես, դատավարության մասնակիցների համաձայնությամբ, դատական նիստերը պետք է իրականացվեն հեռավար/առցանց՝ բոլոր հասանելի էլեկտրոնային հավելվածների կիրառման միջոցով¹⁰: Բարձրագույն դատական խորհրդի նման որոշումը հակասություններ է առաջացնում Օրենսգրքի հետ համեմատության շրջանակներում, որոնք կարող են պատճառ դառնալ անձի՝ արդար դատական քննության իրավունքի սահմանափակման:

Այսպես, Օրենսգրքի 145-րդ հոդվածը սահմանում է, որ դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատավարության մասնակիցները կարող են մասնակցել միայն իրենց՝ դատավարության մասնակիցների պատճառաբանված միջնորդությունների հիման վրա¹¹: Վերոնշյալ իրավանորմի բովանդակությունից բխում է, որ դատարանը, օրենսդրական ներկայիս կարգավորումների համատեքստում, իրավունք չունի սեփական նախաձեռնությամբ դատական նիստերն իրականացնել տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ հեռավար, և դատարանը դատական նիստը նման կերպ անցկացնելու որոշում կարող է կայացնել միայն այն պարագայում, երբ առկա է դատավարության մասնակցի պատճառաբանված միջնորդություն: Համաձայն ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություն-

⁶ Տե՛ս HM Courts & Tribunals Service, Guidance: HMCTS telephone and video hearings during coronavirus outbreak, 2020թ., <https://www.gov.uk/guidance/hmcts-telephone-and-video-hearings-during-coronavirusoutbreak#contents> (08.04.2020թ.):

⁷ Տե՛ս Judicial Council of California, Judicial Branch Administration: Response to the COVID-19 Pandemic, 2020թ., էջ 2, <https://jcc.legistar.com/View.ashx?M=F&ID=8224138&GUID=74767244-139D-4B11-914E32AFC10CCEF1>:

⁸ Տե՛ս Morris A., Judges Rush to Learn Video Conferencing as Shelter-In-Place Orders Spread Across Texas Metros, 2020թ., <https://www.law.com/texaslawyer/2020/03/24/judges-rush-to-learn-video-conferencing-ashelter-in-place-orders-spread-across-texas-metros/> (08.04.2020թ.):

⁹ Տե՛ս Autret V., Barriere F., Coronavirus/COVID-19: French Courts Close, Save for Emergency Proceedings; Hearings Conducted Remotely, 2020թ., <https://www.skadden.com/insights/publications/2020/03/coronaviruscovid19-french-courts-close> (08.04.2020թ.):

¹⁰ Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի՝ 24.03.2020թ. «Պարետի 2020 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հանրային ծառայության իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» թիվ 15 որոշման կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ ԲԴԽ-12-Ո-25 որոշում, կետ 1-ին:

¹¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, ընդունվել է 09.02.2018թ., ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208, հոդված 145-րդ, մաս 1-ին:

ներ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով¹²: Հիմք ընդունելով ողջ վերոգրյալը՝ գտնում ենք, որ Բարձրագույն դատական խորհրդի՝ 24.03.2020թ. թիվ ԲԴԽ-12-Ո-25 որոշման համաձայն դատարանների նախաձեռնությամբ հեռավար կարգով իրականացված նիստերը ոչ իրավաչափ են՝ ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի ուժով, քանի որ դատարանները՝ որպես պետական մարմիններ, օրենքով լիազորված չեն սեփական նախաձեռնությամբ իրականացնել դատական նիստեր տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ:

Հաշվի առնելով, որ Վարակի տարածումը կարող է շարունակական բնույթ կրել, որ հետագայում նույնպես կարող են առաջանալ իրավիճակներ, երբ դատարանները ստիպված կլինեն անցնում կատարել դատական նիստերի՝ հեռավար կարգով իրականացման՝ գտնում ենք, որ առկա է Օրենսգրքի 145-րդ հոդվածի շրջանակներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն. գտնում ենք, որ դատարաններին անհրաժեշտ է վերապահել բացառիկ հանգամանքներում սեփական նախաձեռնությամբ և կողմերի համաձայնությամբ դատական նիստերը տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ անցկացնելու մասին որոշում կայացնելու լիազորություն: Մեծ Բրիտանիայի՝ Նորին Մեծության դատարանների և տրիբունալների ծառայության՝ 18.03.2020թ. ուղեցույցի շրջանակներում նույնպես սահմանված է, որ դատական լսումների իրականացման ձևի վերաբերյալ որոշման կայացման լիազորությունը պետք է վերապահված լինի դատավորին¹³:

Համաձայն Օրենսգրքի 145-րդ հոդվածի 6-րդ մասի՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստին մասնակցելը թույլատրելու վերաբերյալ որոշումը կատարվում է հանձնարարությունն ստացած դատարանի աշխատակազմի

միջոցով, որն ապահովում է գործը քննող դատարանի հետ տեսաձայնային հաղորդակցման հնարավորությունը¹⁴: Տվյալ նորմի բովանդակությունից բխում է, որ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ դատական նիստին հնարավոր է մասնակցել միայն մեկ այլ դատարանի վարչական շենքում, ինչը, գտնում ենք, լիովին իմաստազրկում է Վարակի տարածման պայմաններում Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված որոշումը, քանի որ որոշման նպատակն է իրականացնել դատական նիստերը առանց կողմերի և/կամ նրանց ներկայացուցիչների՝ դատարանների վարչական շենքեր այցելելու անհրաժեշտության, մինչդեռ Օրենսգրքը սահմանում է, որ դատական նիստին հեռավար կարգով մասնակցող անձը ցանկացած պարագայում պետք է գտնվի որևէ դատարանի վարչական շենքի տարածքում: Միևնույն խնդիրն առկա է Ռուսաստանի Դաշնությունում, և իրավագետ Եկատերինա Սլիվկոն գտնում է, որ դատավարության մասնակիցներին անհրաժեշտ է տրամադրել հնարավորություն դատական նիստին հեռավար կարգով մասնակցել իրենց նախընտրած վայրից, որպես բացառություն նշելով միայն դռնփակ դատական նիստերը¹⁵: Համամիտ լինելով տվյալ կարծիքի հետ՝ գտնում ենք, որ Օրենսգրքի 145-րդ հոդվածը պետք է փոփոխության ենթարկվի, և դատավարության մասնակցի մոտ համապատասխան հնարավորությունների առկայության պարագայում վերջինս պետք է իրավունք ունենա դատական նիստին հեռավար կարգով մասնակցել իր նախընտրած վայրից՝ ապահովելով համապատասխան դատավարական պահանջների պահպանումը, ինչի մասին կխոսվի ստորև:

Բացի վերոնշյալ խնդրից, Օրենսգրքը նաև չի նախատեսում հստակ կանոնակարգումներ հեռավար դատական լսումների իրականացման կարգի վերաբերյալ, մինչ-

¹² Տե՛ս ՀՀ սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, հոդված 6-րդ, մաս 1-ին:

¹³ Տե՛ս HM Courts & Tribunals Service, Guidance: HMCTS telephone and video hearings during coronavirus outbreak, 2020թ., <https://www.gov.uk/guidance/hmcts-telephone-and-video-hearings-during-coronavirusoutbreak#contents> (08.04.2020թ.):

¹⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, ընդունվել է 09.02.2018թ., ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208, հոդված 145-րդ, մաս 6-րդ:

¹⁵ Տե՛ս Науменко Е., Споры через Skype и Zoom: как работают суды при коронавирусе, 2020թ., https://pravo.ru/story/220052/?desc_tv_1=&utm_source=ip_club,%20facebook&utm_term=%20ip%20club&utm (08.04.2020թ.):

դեռ հեռավար կարգով դատական նիստերի անցկացման պարագայում առկա են մի շարք առանձնահատկություններ, ինչի պարագայում դատական նիստերը չեն կարող անցկացվել միայն այն կարգավորումների հիման վրա, որոնք նախատեսված են սովորական կարգով՝ դատարանի վարչական շենքում դատական նիստերի անցկացման առնչությամբ: Գտնում ենք, որ Օրենսգրքի շրջանակներում անհրաժեշտ է կանոնակարգել հեռավար կարգով դատական նիստերի անցկացման ընթացակարգը, իսկ նման կարգավորումների համար ելակետային ուղենիշներ կարող են հանդիսանալ հետևյալ սկզբունքները, որոնք սահմանված են 2020թ. մարտի 20-ի՝ «Անգլիայում և Ուելսում քաղաքացիական արդարադատության շրջանակներում հեռավար դատավարությունների մասին» արձանագրության¹⁶ շրջանակներում:

Դատական վարույթի հրապարակայնության սկզբունքի ապահովում: Համաձայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատական նիստերը դռնբաց են¹⁷: Ներկայումս հեռավար կարգով դատական նիստերի անցկացման համատեքստում առաջանում են խնդիրներ կապված դատական վարույթի հրապարակայնության սկզբունքի հետ: Համաձայն Բարձրագույն դատական խորհրդի՝ 24.03.2020թ. թիվ ԲԴԽ-12-Ո-25 որոշման՝ բոլոր այն անձանց, ովքեր չեն հանդիսանում տվյալ օրը կոնկրետ դատարանում նախապես նշանակված դատական նիստերով դատավարության մասնակիցներ (ներկայացուցիչներ), արգելվում է մուտք գործել ՀՀ դատարանների վարչական շենքեր¹⁸: Համաձայն ՀՀ սահմանադրության 63-րդ հոդ-

վածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք¹⁹, այսինքն՝ դատական վարույթի հրապարակայնությունը արդար դատական քննության իրավունքի էական բաղադրատարր է, մինչդեռ Բարձրագույն դատական խորհրդի վերոնշյալ որոշմամբ, գտնում ենք, արդար դատական քննության իրավունքի տվյալ բաղադրատարրը ենթարկվել է սահմանափակման, քանի որ չի նախատեսվել որևէ կառուցակարգ, որի կիրառմամբ դատական վարույթի՝ հեռավար կարգով անցկացման պարագայում, և պետությունում արտակարգ իրավիճակի առկայության պարագայում (տվյալ դեպքում՝ «COVID-19» կորոնավիրուսային հիվանդության պանդեմիան) կապահովվի դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը: Համաձայն ՀՀ սահմանադրության 76-րդ հոդվածի՝ արդար դատական քննության իրավունքը չի կարող սահմանափակվել անգամ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ²⁰: Հիմք ընդունելով ողջ վերոգրյալը՝ գտնում ենք, որ նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել հստակ կառուցակարգեր, որոնց միջոցով կապահովվի հեռավար կարգով իրականացվող դատական նիստերի հրապարակայնությունը:

Նորին Մեծության դատարանների և տրիբունալների ծառայության՝ 18.03.2020թ. ուղեցույցի շրջանակներում առաջարկվում է առկա համաճարակի պայմաններում հեռավար կարգով անցկացվող դատական նիստերի ընթացքում թույլատրել լրագրողների ներկայությունը դատական նիստերի դահլիճում²¹: Վարակի պանդեմիայի պայմաններում չենք

¹⁶ Տես Judiciary of England and Wales, Civil Justice In England and Wales: Protocol Regarding Remote Hearings, 2020թ., https://www.judiciary.uk/wp-content/uploads/2020/03/Remotehearings.Protocol.Civil_.GenerallyApplicableVersion.f-amend-24_03_20-1.pdf:

¹⁷ Տես «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունվել է 07.02.2018թ., ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143, հոդված 11-րդ, մաս 1-ին:

¹⁸ Տես Բարձրագույն դատական խորհրդի՝ 24.03.2020թ. «Պարետի 2020 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում հանրային ծառայության իրականացման նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» թիվ 15 որոշման կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ ԲԴԽ-12-Ո-25 որոշում, կետ 2-րդ, ենթակետ 3-րդ:

¹⁹ Տես ՀՀ սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, հոդված 63-րդ, մաս 1-ին:

²⁰ Տես ՀՀ սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, հոդված 76-րդ:

²¹ Տես HM Courts & Tribunals Service, Guidance: HMCTS telephone and video hearings during coronavirus outbreak, 2020թ., <https://www.gov.uk/guidance/hmcts-telephone-and-video-hearings-during-coronavirusoutbreak#contents> (08.04.2020թ.):

կարող համաձայնել տվյալ առաջարկի հետ, քանի որ գտնում ենք, որ նմանօրինակ արտակարգ դրության պարագայում կարգավորումները պետք է կազմված լինեն անձանց մուտքը դատարանների վարչական շենքեր հնարավորինս սահմանափակելու տրամաբանությամբ: Գտնում ենք, որ սույն խնդրի լուծման տարբերակ կարող է լինել դատական նիստերի ուղիղ հեռարձակման վերաբերյալ կարգավորման նախատեսումը այն իրավիճակներում, երբ այլ կերպ հնարավոր չէ և/կամ խիստ աննպատակահարմար է ապահովել դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը: Գտնում ենք, որ ժամանակի ընթացքում դատական նիստերի ուղիղ հեռարձակումը կարող է դառնալ դատական վարույթի հրապարակայնության ապահովման հիմնական եղանակ:

Դատական նիստի արձանագրում: Համաձայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դատական նիստի ընթացքն օրենքով սահմանված կարգով արձանագրվում է²²: Դատական նիստի արձանագրումը արդար դատական քննության իրավունքի երաշխավորման կարևոր գործիք է, քանի որ հենց դատական նիստի արձանագրության հիման վրա դատական վարույթի մասնակիցները մի շարք դեպքերում կարող են իրացնել դատական ակտի բողոքարկման իրավունքը: Դատական նիստի արձանագրման կարևորության մասին է վկայում նաև Օրենսգրքի 365-րդ հոդվածը, համաձայն որի՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը, կամ դատական նիստի արձանագրումը կատարվել է այնպիսի թերություններով, որոնք անհնար են դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը²³:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեռավար դատական նիստի շրջանակներում հաղորակցությունն իրականացվում է համակարգչային ծրագրերի օգտագործմամբ, ին-

չը ինքնին ազդեցություն է ունենում բանավոր խոսքի լսելիության վրա՝ գտնում ենք, որ հեռավար կարգով դատական նիստերի անցկացման պարագայում դատական նիստի արձանագրումը պետք է իրականացվի ոչ թե դատական նիստի արձանագրման ընդհանուր կարգով, այլ օգտագործվող համակարգչային ծրագրի արձանագրում («recording») գործառույթի կիրառմամբ:

Դատական վարույթի մասնակիցների ինքնության պարզումը հեռավար դատական նիստի ընթացքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն աշխատանքի շրջանակներում արդեն իսկ նշել ենք, որ ներկայումս Օրենսգրքի 145-րդ հոդվածի շրջանակներում առկա կարգավորումն առ այն, որ դատական նիստին հեռավար կարգով մասնակցող անձը ցանկացած դեպքում պետք է գտնվի որևէ դատարանի վարչական շենքում, ըստ մեզ, հաջողված չէ և ենթակա է փոփոխության, ապա հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչպես պետք է պարզվի դատական նիստին մասնակցող անձի ինքնությունը, երբ վերջինս դատական նիստին մասնակցում է իր նախընտրած վայրից:

Գտնում ենք, որ տվյալ խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է նախատեսել կարգավորումներ առ այն, որ դատական նիստից առաջ՝ ողջամիտ ժամկետում, համապատասխան անձը պետք է դատարան ներկայացնի անձը հաստատող փաստաթղթի օրինակ, որի շրջանակներում առկա է տվյալ անձի լուսանկարը, քանի որ գոյություն ունեն նաև անձը հաստատող փաստաթղթերի տեսակներ, որոնց շրջանակներում առկա չէ անձի լուսանկարը (փաստաբանական գործունեության արտոնագրի պատճեն), և տվյալ անձը հաստատող փաստաթուղթը հեռավար կարգով իրականացվող դատական նիստին մասնակցող անձի կողմից պետք է ցուցադրվի դատարանին տեսաձայնային հեռահաղորդակցության համապատասխան միջոցի շրջանակներում:

Դատական նիստի նախապատրաստություն: Քանի որ դատական նիստերի շրջա-

²² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունվել է 07.02.2018թ., ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143, հոդված 11-րդ, մաս 3-րդ:

²³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, ընդունվել է 09.02.2018թ., ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ.208, հոդված 365-րդ, մաս 2-րդ, կետեր 6-րդ, 7-րդ:

նակներում հաճախ ներկայացվում են միջնորդություններ, ապացույցներ և այլ գրավոր փաստաթղթեր, գտնում ենք, որ կանոնակարգման է ենթակա նաև հեռավար դատական նիստի շրջանակներում տվյալ փաստաթղթերի ներկայացման կարգը: «Անգլիայում և Ուելսում քաղաքացիական արդարադատության շրջանակներում հեռավար դատավարությունների մասին» արձանագրության շրջանակներում սահմանվում է, որ Կողմերը պետք է հեռավար կարգով իրականացվող դատական նիստին վերաբերող բոլոր գրավոր փաստաթղթերը ներկայացնեն դատարան և դատավարության մյուս մասնակիցներին մինչ դատական նիստը՝ ողջամիտ ժամկետում²⁴: Համամիտ լինելով վերոնշյալ դիրքորոշման հետ՝ գտնում ենք, որ Օրենսգրքի շրջանակներում նույնպես պետք է սահմանվեն հեռավար դատական նիստի անցկացման պարագայում նիստին վերաբերող գրավոր փաստաթղթերի նախնական ներկայացման ժամկետներ, ինչպես նաև տվյալ ժամկետում չներկայացված փաստաթղթերի՝ հեռավար դատական նիստի շրջանակներում ներկայացման արգելք (տվյալ լուծումը առաջարկում ենք կիրառել միայն որպես կարճա-

ժամկետ լուծում և գտնում ենք, որ հեռավար դատական նիստի պայմաններում կողմերի համար պետք է ապահովվի հնարավորություն համապատասխան էլեկտրոնային հարթակի շրջանակներում, որը կապահովի նաև տեսաձայնային հաղորդակցությունը, դատական գործի մասնակիցներին էլեկտրոնային կարգով ներկայացնել համապատասխան փաստաթղթերը, որոնք տեղում կուսումնասիրվեն էլեկտրոնային հարթակի շրջանակներում (տվյալ առաջարկն առավել մանրամասն կներկայացվի սույն աշխատանքի 2-րդ գլխի 2-րդ պարագրաֆի շրջանակներում):

Ինչ վերաբերում է քրեական և վարչական արդարադատության համակարգերին, ապա նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի շրջանակներում նախատեսված չէ դատական նիստերը հեռավար անցկացնելու հնարավորություն, ինչը, գտնում ենք, ենթակա է շտկման, քանի որ դատական նիստերի՝ հեռավար կարգով անցկացումը պետք է լինի ոչ թե լուծում ճգնաժամային իրավիճակներում, այլ մշտապես կիրառվող գործիքակազմ:



²⁴ Տես Judiciary of England and Wales, Civil Justice In England and Wales: Protocol Regarding Remote Hearings, 2020թ., կետ 24-րդ, https://www.judiciary.uk/wp-content/uploads/2020/03/Remotehearings.Protocol.Civil_GenerallyApplicableVersion.f-amend-24_03_20-1.pdf:

ИННА НЕРСЕЯН

Преподаватель Ширакского государственного университета,
аспирант 3-го курса кафедры конституционного права и теории права ИПП РАУ
Рецензист- Доктор юридический наук, доцент, Рузанна Акопян

ГАЙД-ПАРКИ КАК МЕСТА РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА СВОБОДУ СОБРАНИЙ

В основе формирования правового и демократического государства лежат множество принципов, в частности, институт прав и свобод человека, так как невозможно представить современное правовое государство с демократическим политическим режимом, где права и свободы человека не признаются, не обеспечиваются и не гарантируются публичной властью. Право на свободу собраний предусматривается Международной биллью по правам человека и Европейской конвенцией о защите прав человека и основных свобод. Республика Армения и Российская Федерация как страны, имплементирующие международно-правовые нормы в национальное законодательство, также признали права и свободы человека, предусмотренные Международной биллью по правам человека и Европейской конвенцией о защите прав человека и основных свобод. Согласно ст. 20, части 1-ой Всеобщей декларации прав человека, каждый человек имеет право на свободу мирных собраний и ассоциаций¹. Согласно ст. 21 Международного пакта о гражданских и политических правах, признается право на мирные собрания и пользование этим правом не подлежит никаким ограничениям, кроме тех, которые налагаются в соответствии с законом и которые необходимы в демократическом обществе в интересах государственной или общественной безопасности, общественного порядка, охраны здоровья и нравственности населения или

защиты прав и свобод других лиц². Согласно ст. 11, части 1-ой Европейской конвенции о защите прав человека и основных свобод, каждый имеет право на свободу мирных собраний и на свободу объединения с другими, включая право создавать профессиональные союзы и вступать в таковые для защиты своих интересов³. Республика Армения и Российская Федерация несут обязанность по обеспечению эффективных правовых механизмов для реализации права на свободу собраний.

Важность эффективной реализации права на свободу собраний в Российской Федерации подчеркнул также Конституционный суд России, согласно Постановлению которого, гарантированное Конституцией Российской Федерации право граждан собираться мирно, без оружия, проводить собрания, митинги и демонстрации, шествия и пикетирование является одним из фундаментальных и неотъемлемых элементов конституционно-правового статуса личности в Российской Федерации как в демократическом правовом государстве с республиканской формой правления, в качестве основ конституционного строя которого признаются *идеологическое многообразие, политический плюрализм и многопартийность* и на котором лежит конституционная обязанность обеспечивать государственную защиту, включая судебную, прав и свобод человека и гражданина на основе равенства всех перед законом и судом⁴.

Для эффективной и беспрепятственной

¹ Всеобщая декларация прав человека 1948 года // https://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/declhr.shtml (08.09.2021г.)

² Международный пакт о гражданских и политических правах 1966 года // https://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/pactpol.shtml (08.09.2021г.)

³ Европейская конвенция по правам человека // https://www.echr.coe.int/documents/convention_rus.pdf (08.09.2021г.)

⁴ Постановление КС РФ от 04.06.2020г. N 27-П, на сайте www.consultant.ru

реализации права на мирные собрания не менее важную роль играет установленное законом место проведения публичного собрания. Места публичных мероприятий понимаются в нескольких значениях:

- ✓ любые пригодные для целей конкретного мероприятия места, если проведение мероприятия не создает угрозы обрушения зданий и сооружений или иной угрозы безопасности участников данного публичного мероприятия,
- ✓ специально отведенные места или “гайд-парки”,
- ✓ места, в которых проведение публичного мероприятия запрещается,
- ✓ места на территориях объектов, являющихся памятниками истории и культуры,
- ✓ открытые и закрытые помещения, которые являются государственной, муниципальной или частной собственностью и пригодны для целей собраний,
- ✓ другие места.

Необходимо подчеркнуть, что сравнительный правовой анализ законодательства Российской Федерации и Республики Армения в рамках правовых установок о месте проведения мирного собрания показал то, что в законодательстве Республики Армения нет таких мест публичных собраний, как специально отведенные места или “гайд-парки”, которые формируются и действуют в особом правовом режиме и делают реализацию конституционного политического права на свободу собраний более эффективной⁵.

Так, согласно части 4-ой ст. 2 закона РА “О свободе собраний”, место собрания - это являющееся государственной, муниципальной или частной собственностью открытое пространство (улица, тротуар, площадь, сад, парк и прочее) или строение, которое в целях проведения собрания доступно любому лицу. Согласно части 5-ой той же статьи, строение - это перегороженная со всех сторон

территория, которая, как правило, имеет перекрытие.⁶ Фактически, статья 2-ая закона РА “О свободе собраний” устанавливает места, где могут проводиться публичные собрания, однако, не устанавливает ограничений к таким местам, и, также не устанавливает специально отведенные места для публичных собраний (гайд-парки). Считаем важным подчеркнуть, что свобода в выборе места для проведения мирного собрания важна для эффективной реализации права на свободу собраний, однако, внесение определенных ограничений к местам собраний является также необходимым фактором с точки зрения того, что, например, позитивным обязательством государства также является охрана духовно-культурных недвижимых объектов Республики Армения. Проведение публичных мероприятий на территории или близко к территории духовно-культурных недвижимых объектов может повредить или создать угрозу их обрушения. Необходимо также подчеркнуть, что могут быть и территории зданий, которые, исходя из своей архитектурной устарелости или состояния нестроенности также могут быть под угрозой обрушения в случае какого-либо многолюдного публичного мероприятия на их территории. В таких ситуациях, с одной стороны, возникает угроза обрушения зданий и сооружений, а также угроза обрушений объектов духовно-культурного недвижимого наследия Республики Армения, а с другой стороны, это также влечет за собой вопросы безопасности также самих участников публичного мероприятия. Так, например, согласно части 1-ой статьи 8 Федерального закона Российской Федерации “О собраниях, митингах, демонстрациях, шествиях и пикетированиях” публичное мероприятие может проводиться в любых пригодных для целей данного мероприятия местах в случае, если его проведение не создает угрозы обрушения зданий и сооружений или иной угрозы безопасности участников данного публичного мероприятия. Условия запрета или ограничения проведения публичного

⁵ Необходимо отметить, что сам термин “гайд-парк” возник на примере Лондонского гайд-парка, который славится как лучший пример реализации права на свободу слова и права на мирные собрания.

⁶ Закона РА “о свободе собраний” от 14.04.2011 по состоянию 2021 года / www.arlis.am

мероприятия в отдельных местах могут быть конкретизированы федеральными законами⁷. Федеральный закон РФ “О собраниях, митингах, демонстрациях, шествиях и пикетированиях” не устанавливает такого ограничения права на мирное собрание, как запрет на проведение публичного мероприятия на территории объектов духовно-культурного недвижимого наследия, однако, фактически устанавливает такое условие, как “...если его проведение не создает угрозы обрушения зданий и сооружений...”. Федеральный закон имеет направленность защиты не только зданий и сооружений, которые несут угрозу обрушения при проведении на их территории публичного мероприятия, но и имеет направленность защиты безопасности участников публичного мероприятия, из чего исходит, что публичная власть в рамках правоприменительной практики должна действовать из соображений безопасности и охраны как зданий и сооружений, так и участников публичного мероприятия. Необходимо подчеркнуть, что региональным законодательством и актами органов местного самоуправления в субъектах Российской Федерации устанавливается перечень мест, где проведение публичного мероприятия разрешается (специально отведенные места или гайд-парки), а также устанавливается перечень мест, где проведение публичного мероприятия запрещено (чаще всего это территории объектов духовно-культурного недвижимого наследия России). Можно привести в пример закон Самарской области от 6 апреля 2005 года N 105-ГД “О порядке подачи уведомления о проведении публичного мероприятия и обеспечении отдельных условий реализации прав граждан на проведение публичных мероприятий в Самарской области”, в приложениях которого установлен перечень мест, где проведение публичных мероприятий запрещено и перечень специально отведенных мест (гайд-парков).

И положения именно указанного закона были оспорены в Конституционном суде РФ, который Постановлением № 27-П от 04.06.2020 года постановил то, что публичные мероприятия должны проводиться, как правило, в указанных местах и проведение их вне специально отведенных мест допускается только после согласования с органом исполнительной власти субъекта Российской Федерации или органом местного самоуправления⁸. Таким Постановлением Конституционный суд РФ фактически указал на то, что публичные мероприятия рекомендуется проводить в специально отведенных местах (гайд-парках). Считаем, что с одной стороны такая позиция Конституционного суда РФ обеспечит эффективное функционирование гайд-парков, а с другой стороны такая его позиция никак не должна ограничивать возможность проведения публичных собраний в иных, не запрещенных федеральным законом местах. Считаем, что положительной направленностью в законодательстве Российской Федерации является то, что оно предусматривает такие специально-предусмотренные места для проведения публичных мероприятий, как гайд-парки, что на наш взгляд может быть положительным опытом для других государств. Самым ключевым в гайд-парках является то, что для таких мест, отведенных для проведения мирного собрания, действует особый правовой режим, например, возможность проведения мирного собрания без подачи уведомления публичным властям⁹.

Если провести сравнительно-правовой анализ права на публичные мирные собрания законодательства Российской Федерации и законодательства Республики Армения, то можно выявить то, что, как уже было отмечено выше, законодательный орган Армении не предусмотрел институт гайд-парков. Также важно отметить, что закон РА “О свободе собраний” и, также законодательство Республики

⁷ Федеральный закон РФ “О собраниях, митингах, демонстрациях, шествиях и пикетированиях” от 19.06.2004 года и по положению 2021 года / www.consultant.ru

⁸ Постановление Конституционного суда РФ № 27-П от 04.06.2020г. / На официальном сайте КС РФ -<http://www.ksrf.ru/>

⁹ <https://www.interfax.ru/moscow/284100> / (14.10.2021г.)

Армения в сфере культурно-образовательной жизни общества не предусматривает запрет на проведение публичных мероприятий на территориях, являющихся объектами духовно-культурного недвижимого наследия Армении. Считаем, что российский аналог Лондонского гайд-парка может эффективно действовать и в Республики Армения, таким образом, способствовать более эффективной реализации права на свободу мирных собраний. Исходя из того, что положения о месте публичного собрания в законе РА “О свободе собраний” предусматривается статьей 2-ой, именуемой понятие собрания, считаем, что такая статья является нормой-дефиницией и, потому не должна предусматривать правовых положений касательно места проведения публичного собрания. Считаем, что правовые положения о месте публичного собрания должны предусматриваться отдельной статьей.

Исходя из того, что в случае создания гайд-парков в их отношении должны действовать иные правовые нормы, считаем важным подчеркнуть, что одной из особенности гайд-парков является то, что при проведении публичных мероприятий на их территории необходимость подачи государственным органам или органам местного самоуправления уведомлений о проведении публичного мероприятия не предусматривается законом. В соответствии с этим должны быть внесены и определенные изменения в Конституцию Республики Армения. Согласно ст. 44, части 2-ой Конституции Республики Армения, собрания, организуемые под открытым небом, в установленных законом случаях проводятся на основании уведомления, представленного в разумный срок. В случае внесения изменений в закон РА “О свободе собраний” по созданию нового места для проведения публичных мероприятий (гайд-парк) первоочередно возникнет необходимость внести изменения и в саму Конституцию Республики Армения, так как конституционное положение ст. 44, части 2-ой обязывает подачу уведомления для проведения публичного мероприятия, организуемого под открытым небом.

Основываясь на все вышеизложенное,

предлагаем изменить ст. 44 Конституции Республики Армения следующим образом:

Статья 44. Свобода собраний

1. Каждый имеет право на свободное участие и организацию мирных собраний без оружия.

2. Законом могут устанавливаться ограничения на осуществление права на свободу собраний судей, прокуроров, следователей, а также служащих вооруженных сил, национальной безопасности, полиции и других военизированных органов.

3. Условия и порядок осуществления и защиты свободы собраний устанавливаются законом.

4. Свобода собраний может быть ограничена только законом — в целях государственной безопасности, предупреждения преступлений, защиты общественного порядка, здоровья и нравственности или основных прав и свобод других лиц.

Основываясь на все вышеизложенное, предлагаем изменить и дополнить закон РА “О свободе собраний” следующей статьей:

Статья 2.1. Место собрания.

1. Место собрания - это являющееся государственной, муниципальной или частной собственностью открытое пространство (улица, тротуар, площадь, сад, парк и прочее) или строение, которое в целях проведения собрания доступно любому лицу.

2. Строение это перегороденная со всех сторон территория, которая, как правило, имеет перекрытие.

3. Собрание может проводиться в любых пригодных для целей данного собрания местах в случае, если его проведение не создает угрозы обрушения зданий и сооружений или иной угрозы безопасности участников данного публичного мероприятия, а также если его проведение не создает угрозы порчи или обрушения объектов духовно-культурного недвижимого наследия Армении.

4. Условия запрета или ограничения проведения публичного мероприятия в отдельных местах могут быть конкретизированы законами.

ԵՂԻՇԵ ԲԱԶՈՅԱՆ

«Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի դասախոս

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում իրականացման ենթակա պառլամենտական վերահսկողության ձևերի համակարգային փոփոխությունների շարքում անհրաժեշտ է պառլամենտական վերահսկողության ոլորտ ներմուծել պետական շինարարության համար խիստ կարևոր մի տարր, որի գոյության հնարավորությունը ժխտվել է խորհրդային ժամանաշրջանում, իսկ դրա անհրաժեշտությունը հետևողականորեն նսեմացվել հետխորհրդային զարգացման շրջանում: Խոսքը պառլամենտական ընդդիմության՝ որպես սահմանադրաիրավական երևույթի մասին է, որը որպես պետական կառավարման կենսունակությունն ապահովող սահմանադրական ինստիտուտ, վաղուց արդեն ինստիտուցիոնալացվել է այսպես կոչված «հին ժողովրդավարության» երկրներում: Այն համարվում է ժամանակակից պառլամենտարիզմի կարևոր ինստիտուտներից մեկը և իրենից ներկայացնում է իրականացվող պաշտոնական կուրսին ընդդիմացող քաղաքական գործունեության տեսակ: Ճիշտ է, ընդդիմադիր գործունեության իրավունքներն ու երաշխիքներն ընդգրկող հատուկ օրենքի գոյությունը բացառիկ երևույթ է և ոլորտն ուսումնասիրողներից Ս. Վասիլևան բերում է միայն Կաբո-Վերդե Հանրապետության օրինակը^{1,2} (կղզիպետություն Արևմտյան Աֆրիկայի ափերի մոտ): Որպես կանոն ընդդիմադիր գործունեությանը վերաբերող առանձին նորմերն իրենց ամրագրումն են գտնում քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների մասին օրենսդրության մեջ, ընտրական իրավունքը կարգավորող օրենսդրությու-

նում, պառլամենտի և նրա պալատների կանոնակարգերում և այլուր: Այնպիսի երկրներում ինչպիսիք են օրինակ Ֆրանսիան, Պորտուգալիան, Մեծ Բրիտանիան ընդդիմադիր գործունեությունը ճանաչվում է սահմանադրական մակարդակով³: Մեծ Բրիտանիայում դեռևս 1937թ.-ին ընդունված «Թագի նախարարների մասին» ակտում ոչ միայն այդ երկրի վարչապետի համար ընդդիմության առաջնորդը պաշտոնական ընդդիմախոս է ճանաչվել, այլև ամրագրվել է վերջինիս վարձատրությունը⁴: Մեծ Բրիտանիայում այսպես կոչված «ստվերային կառավարության» գործունեությունն ըստ էության հասցվել է պառլամենտի պալատների քննարկումներին մասնակցությանը և ցանկացած պահի վերջինս կարող է իր վրա վերցնել կառավարության գործառույթները: Ինչ վերաբերում է պառլամենտական գործունեության ընթացակարգերին ընդհանրապես, ապա այստեղ շատ հստակ ձևավորվել է կառավարող կուսակցություն-ընդդիմություն առանցքը և բրիտանական պառլամենտում տեղի ունեցող օրենսդրական ու քաղաքական բոլոր իրադարձությունները ներծծված են հենց այդ առանցքի գործունեության տրամաբանությամբ: Օրինակ ցանկացած օրինագծի երկրորդ ընթերցմամբ քննարկման ժամանակ այդ օրինագծի ընդունման նպատակահարմարությունը հիմնավորող նախարարի ելույթից հետո, ըստ վաղուց արդեն գործող ընթացակարգային նորմերի, հանդես է գալիս ընդդիմության ներկայացուցիչը, որի ճառն ընկալվում է ոչ միայն պաշտոնական հայտարարության տեսքով, այլև որպես ամբողջ ընդդիմության ընդհանրական կարծիք:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

¹ Степ Васильева С.В. Конституционно-правовой статус политической оппозиции. М., 2010. с 11
² Հ. Կեսոյանն իր աշխատության մեջ նշում է այլ երկրներ ևս, որտեղ խորհրդարանական ընդդիմության մասին օրենքներ են գործում: Տես Հ. Կեսոյան Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում Երևան, 2018թ էջ 160
³ Васильева С.В. նշվ. աշխ.-ը, էջ 12
⁴ Այդ մասին ավելի մանրամասն տես Brazier, Rodney, Ministers of the Crown. Oxford University Press, 1997

Այդպիսի օրինակները Մեծ Բրիտանիայի պառլամենտական ընթացակարգերում շատ են և հենց դա է այդ երկրում ամրագրված պառլամենտարիզմի դրսևորման հիմնական ձևը:

Պետությունների մեծ մասում ընդդիմադիր գործունեության երաշխիքներն իրացվում են ավելի շատ անուղղակի ձևերով, օրինակ պառլամենտական քննիչ հանձնաժողովներ կազմելու իրավունքի սահմանման կամ դրանց ձևավորման ժամանակ ընդդիմությանը քվտավորված տեղեր հատկացնելու միջոցով, կուսակցական համամասնականության սկզբունքի միջոցով և այլն:

Պետք է ասել, որ հետխորհրդային տարածքում ընդդիմադիր գործունեության երաշխիքների սահմանմամբ իրավակարգավորման փորձեր եղել են 1996-97 թթ-երին Ռուսաստանի Դաշնությունում, սակայն թվով երեք օրինագծերից և ոչ մեկը չի հաջողվել ընդգրկել Պետական Դումայի օրակարգում, իսկ հետագայում ՌԴ օրենսդիր մարմինն ընդհանրապես դրա քննարկումն անսպասակապ հարմար է գտել⁵:

Խոսելով ընդդիմադիր գործունեության մասին պառլամենտական վերահսկողության համատեքստում անհնար է չնկատել, որ այդ երկու երևույթներն ուղղակի կապված են իրար անհրաժեշտության ու տրամաբանականության սկզբունքային կապերով և միաժամանակ ապահովում են պետական կառավարման արդյունավետությունն ու պետության դինամիկ զարգացումը: Հիրավի պետք է ընդունել, որ օրենսդիր մարմնում գերակշիռ մեծամասնություն ունեցող և միաժամանակ գործադիր ամբողջ իշխանությունն իրականացնող միևնույն քաղաքական ուժի փաստացի կառավարման (իշխանավարման) պայմաններում սեփական գործունեության թերություններն ու սխալները բացահայտելու տրամաբանությունը չկա և որպես հետևանք բացակայում է նաև գործադիր իշխանության գործունեության նկատմամբ պառլամենտական խորը և համակողմանի

վերահսկողության իրականացման մոտիվացիան: Իսկ դա նշանակում է, որ քաղաքական այդպիսի կոնֆիգուրացիայով (կառուցվածքով) պետական երկու մարմինների՝ Ազգային ժողովի և կառավարության, սահմանադրական փոխհարաբերություններում բացակայում է հակադրությունների պայքարի և միասնության դիալեկտիկական օրենքի զարգացման տարրը, ինչը բնականաբար խիստ նվազեցնում է պառլամենտական վերահսկողության արդյունավետությունն ու բացասաբար ազդում պետության զարգացման գործընթացի վրա: Հետևապես գործադիր իշխանության կամ կառավարության գործունեությունն իրապես խորը և արդյունավետ կերպով կարող է վերահսկողության ենթարկել հաջորդող պառլամենտական ընտրություններում իշխանությունը վերցնելու ամուր մոտիվացիա ունեցող, պետության կառավարման իրականացվող քաղաքականության հարցերում իշխող քաղաքական ուժի հետ չհամընկնող այլ մոտեցումներ ունեցող և հենց այդ պատճառով վերջինիս հետ մշտապես հակադրվող մեկ այլ քաղաքական ուժը, որն այդ պահին պառլամենտում փոքրամասնություն է:

Հետևապես կախված այն հանգամանքից, թե ինչպիսի դեր ունի ընդդիմությունը քաղաքական համակարգում որոշվում է նաև պետության կառավարման արդյունավետության չափանիշը: **Հենց այդ պատճառով էլ խոսելով իշխանությունների իրական հավասարակշռում ապահովող տրամաբանության համակարգի կառուցման մասին, պետք է ասել, որ այդպիսի հավասարակշռություն կարող է ապահովվել միայն «զսպումների ու հակակշիռների»՝ ազգային քաղաքական մշակույթի բոլոր շերտերը ներառող ու պետության զարգացման շահ թելադրող ճկուն համակարգի միջոցով, որը պետք է ենթադրի նաև հակադրությունների պայքարի ու միասնության օրենքի տրամաբանությամբ գործող պետական մեքենայի գործունեության արդ-**

⁵ Салихов Д.Р. Оппозиционная деятельность в России: проблемы и перспективы «конституционное и муниципальное право» 2011 N 7, с 56, Այս հեղինակը նշելով, որ ընդդիմադիր գործունեության կարգավորման ուղղությամբ ՌԴ-ում անկասկած ինչ-որ քայլեր արվում են, այնուամենայնիվ, բաց թողում է համարում ընդդիմադիր գործունեության երաշխիքները սահմանող օրենքի բացակայությունը և գտնում, որ ՌԴ-ի համար քաղաքական մրցակցային թույլ զարգացած միջավայրը լուրջ խնդիր է: Վերջին անգամ նման օրինագիծ հեղինակել է ՌԴ կոմկուսի պառլամենտական խմբակցությունը, որը ՌԴ Պետական Դումային է ներկայացվել 2007թ.-ին և դարձյալ չի ընդունվել:

յունավեպությունը երաշխավորող իշխանություն-ընդդիմություն առանցքի անհրաժեշտ բաղադրիչի՝ պառլամենտական ուժեղ ընդդիմության երաշխավորված առկայությունը: Ի վերջո, եթե ընդունում ենք, որ պառլամենտական վերահսկողությունը իշխանությունների տարանջատման դասական համակարգի ֆունկցիոնալ արդյունավետությունն ապահովող «գապումների ու հակակշիռների» համակարգի կարևորագույն տարրերից է, ապա պետք է անվերապահորեն ընդունել նաև, որ հենց կառավարության կուրսին ընդդիմացող պառլամենտական ընդդիմությունն է հանդիսանում վերահսկողական ընթացակարգերի ծանրության կենտրոնը⁶, իսկ ընդդիմադիր գործունեության տրամաբանությունը հանգում է առողջ բանավեճի զարգացմանն ու հարցերի լուծման այլընտրանքային մոտեցումների վերահանմանը:

«Ընդդիմություն» հասկացությունը կազմող որոշարկման սահմանների անհստակությունն առաջացնում է նաև այդ ինստիտուտի ոչ միանշանակ և նույնիսկ ոչ համարժեք ընկալումը սահմանադրական իրավունքի գիտության շրջանակներում, քանի որ դրա էության բացահայտումը նախանշում է մոտեցումների տարբեր եղանակներ: Լայն իմաստով ընդդիմությունը կարելի է որակել որպես բազմակարծության դրսևորման հիմնական ձև կամ անհամաձայնության արտահայտման ցանկացած օրինական եղանակ, իսկ ընդդիմությունը նեղ իմաստով կարելի է որոշարկել որպես քաղաքացիների կազմակերպորեն առանձնացված միավորում, որի գործունեությունն ուղղված է գործող իշխանությանը հակազդելուն:⁷ Այս որոշարկման հեղինակ Սալիխովը անհրաժեշտ համարելով հստակեցնել «իշխանությանը հակազդել» եզրույթը, նշում է, որ ընդդիմադիր գործունեությունը չի որոշվում այդպիսի

գաղափարներին հարելու զուտ դեկլարատիվ հայտարարություններով, այլ ապացուցվում է կոնկրետ ընդդիմադիր գործունեության ծավալմամբ⁸: Հաշվի առնելով պառլամենտական վերահսկողության համակարգային փոփոխությունների ինստիտուցիոնալացման տրամաբանությունը և ելնելով Հայաստանում պառլամենտական ընդդիմությունը սահմանադրականացնելու մեր կողմից ընկալվող իմաստից, պետք է ամբողջովին համաձայնել փաստացի գործունեության ծավալմամբ իշխանության հակազդելուն ուղղված ընդդիմության հասկացությանը Սալիխովի տված բնորոշման հետ: Զբացարձակեցնելով այս բնորոշումը միևնույն ժամանակ պետք է նշել, որ ընդդիմության էությանը վերաբերող բացահայտումների մեջ կան նաև այնպիսիք, որոնք այն բնութագրում են ոչ միայն որպես իշխանությանը խանգարող և սահմանադրական կարգի շրջանակներում այլընտրանքային լուծումներ առաջարկող ուժ⁹, այլև սահմանում են, որ քաղաքական ընդդիմությունը հասարակական-քաղաքական ուժերի միաժամանակ իրավունքն ու պարտականությունն է և ժողովրդավարական պետության ազգային հարստությունը¹⁰: Միանգամայն համամիտ լինելով ընդդիմությանը որպես յուրաքանչյուր պետության ազգային ձեռք բերում դիտելու մտքի հետ պետք է նաև նկատել, որ դրա բացակայությունը լիովին աղքատացնում է քաղաքական համակարգը այն իմաստով, որ առանց իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների այդ ամբողջության (**քաղաքական ընդդիմության**) անհնար կլինի այլակարծության պահպանումը հասարակական-քաղաքական համակարգում¹¹:

Ընդդիմադիր գործունեության իրականացումը ինքնին ուղղակի կապ ունի կոնկրետ երկրում արմատավորված կուսակցական համակարգի հետ և կարող է գործառնել բազմա-

⁶ Троицкая А. Парламентская оппозиция в системе разделения властей: организационные гарантии и доступные инструменты контроля « Сравнительное конституционное обозрение» 2011, N 1 էջ 68

⁷ Салихов Д.Р. Оппозиционная деятельность в России: проблемы и перспективы «конституционное и муниципальное право» 2011 N 7, էջ 53

⁸ Салихов Д.Р. նույն տեղում:

⁹ Տես Васильева С.В. Конституционно-правовой статус политической оппозиции. М., 2010. с 11

¹⁰ Հ. Կեսոյանն իր աշխատության մեջ նշում է այլ երկրներ ևս, որտեղ խորհրդարանական ընդդիմության մասին օրենքներ են գործում: Տես Հ. Կեսոյան Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում Երևան, 2018թ էջ 160

¹¹ Васильева С.В. նշվ. աշխ.-ը, էջ 12

կուսակցականության պայմաններում: Քանի որ մեծ ու կայացած կուսակցությունները մաքուր տեղից չեն առաջանում և դրանցից յուրաքանչյուրը կրում է հասարակության առանձին շերտերի ընդհանուր գաղափարախոսությունը, ապա նշված հենց այս գործոններն են արդյունքում ձևավորում գաղափարահենք և ամուր կուսակցություններից բաղկացած համակարգը: Ժողովրդավարական սկզբունքներով կառուցված պետության մեջ հասարակության տարբեր շերտերի գաղափարախոսությունը կրող և նրանց շահերն արտահայտող այդ կուսակցությունների հրապարակային քաղաքական մրցակցային պայքարի արդյունքում է ձևավորվում պետական իշխանությունը, իսկ այդ պայքարի ընթացքում մրցակցային շրջափոխի ձևով քաղաքական ուժերի մերթընդ մերթ իշխանության մեջ և ընդդիմադիր ճակատում հայտնվելու հաջորդականությունն արդեն ապահովում է պետության կենսունակությունն ու նրա իրական զարգացումը: Այս առումով հատկանշական են պրոֆ. Գամբարովի արտահայտած մտքերը դեռևս ռուսական առաջին օրենսդիր մարմնի՝ Պետական Դումայի ստեղծումից առաջ. **«Քաղաքական կուսակցությունը հասարակական խումբ է. Դա նշանակում է, որ այն չի ներկայացնում ամբողջ ժողովրդին կամ հասարակությանը, այլ ... միայն ժողովրդի կամ հասարակության մասն է: Հետևաբար հասարակության մեջ միայն մեկ կուսակցություն չի կարող լինել, մեկ մասը ենթադրում է մյուս մասերին և յուրաքանչյուր կուսակցության ոչ միայն գոյությունը, այլև զարգացումը պետք է կապել նրան ընդդիմացողներից առնվազն մեկ այլ կուսակցության գոյության ու զարգացման հետ»**¹²:

Անհարժեշտ է ի նկատի ունենալ, որ կուսակցական համակարգը հասարակության և պետության միջև գործող պասիվ մեխանիզմ չէ, այլ ակտիվ գործոն, որը հավասարապես ազդում է և՛ մեկի և՛ մյուսի վրա: Որպես այդպի-

սին կուսակցական համակարգը հասարակության ու պետության փոխհարաբերությունները վերարտադրում է իր ներսում և մոդելավորում կառավարող ու ընդդիմադիր կուսակցությունների փոխհարաբերությունների տեսքով, որտեղ ընդդիմադիր կուսակցությունները կերպարանավորում են հասարակությանը, իսկ կառավարողները՝ պետական ապարատը¹³: Այս թեմային վերաբերող վերը բերված մեր դատողություններին համահունչ լինելու առումով, կարելի է համաձայնվել Ա. Հարությունյանի հետ այն բանում, որ կուսակցությունների կառավարող և ընդդիմադիր դերափոխանակությամբ դրսևորվող կուսակցական համակարգի ինստիտուցիոնալ մեխանիզմը հասարակության ու պետության սոցիալ-քաղաքական կայունության անհրաժեշտ պայմանն է¹⁴:

Հայաստանի Հանրապետությունում բազմակուսակցական համակարգը ինչպես և քաղաքացիական հասարակությունը դեռևս ձևավորման փուլում են գտնվում և այդ պայմաններում պետությունը, որպես քաղաքական համակարգի արդեն ձևավորված և ամենաուժեղ տարր, պետք է հնարավոր բոլոր միջոցներով նպաստի իր և հասարակության միջև այդ բնական միջնորդի կայացմանը՝ առաջին հերթին ժողովրդի քաղաքական կամքի դրսևորման նպատակով համապետական ընտրությունների շրջանակներում բոլոր կուսակցությունների համար գործունեության լիակատար հավասար պայմանների ապահովմամբ և, որ պակաս կարևոր չէ, կուսակցությունների ներքին գործերին և նրանց փոխհարաբերություններին չմիջամտելով¹⁵: Վերջին տասնամյակում սակայն միտումներն այդ առումով խորանում են և պետական հովանավորչությունն իշխող քաղաքական ուժի նկատմամբ ավելի է նկատվում՝ ի վնաս իրականացվող քաղաքականությունը քննադատող կուսակցությունների: Այս միտումը հետխորհրդային տարածքում որոշակի ընդհանրություններ է գրանցում և քանի որ Հայաստանի սահմանադրական զարգաց-

¹² Гамбаров Ю.С. Политические партии в их прошлом и настоящем. СПб, 1905, с 3. Հղումը Գամբարովին <http://www.litres.ru/static/or3/view/էլ.կայքից>:
¹³ А. Арутюнян Институт президента Республики Армения. Ереван 1996, с 136
¹⁴ А. Арутюнян նշվ. աշխ. էջ 137
¹⁵ Կուսակցությունների ներքին գործերին պետության չմիջամտելու սկզբունքը գոնե ԱՊՀ տարածքում գործում է միայն դոկտրինալ մեկնաբանությամբ: Стн Комментарий к федеральному закону «О политических партиях». Под. ред. В.В. Лапаевой. М., 2002

ման ընթացքը մեծապես պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական փորձի ներգործությամբ, ապա պարզ է, որ նույնանման միտում առկա է նաև այդ երկրում: Ռուսաստանցի ուսումնասիրողները նկատում են, որ Ռուսաստանի Դաշնությունում ուժեղացել է պետության ազդեցությունը կուսակցությունների նկատմամբ, վերջիններիս թիվը կրճատվել է և միաժամանակ պետությունն ինքն է ստեղծում առանձնաշնորհված կուսակցություն, որին արհեստականորեն հասցնում են իշխանության՝ այդպիսով նվազեցնելով ընդդիմադիր կուսակցությունների իրավունքները:¹⁶ **Այդպիսի պայմաններում, երբ կառավարությունն ամբողջությամբ ձևավորվում է քաղաքական մեկ ուժի կողմից և նրա ներկայացուցիչները մեծամասնություն են կազմում օրենսդիր մարմնում, ապա այդ մեծամասնությունն ավելի շուտ կառավարության համակիրն է քան ընդդիմախոսը:** Հետևաբար նշանակում է, որ այդ կառավարության իրական հակակշիռը կարող է դառնալ միայն հատուկ իրավունքներ ունեցող պառլամենտական ուժեղ ընդդիմությունը: Բացի այդ, պետք է ի նկատի ունենալ նաև խիստ ուշագրավ մի հանգամանք. **Այն պատճառով, որ նախագահական հանրապետություններում գործադիր իշխանության գլուխը հենց երկրի նախագահն է և քաղաքականությունն իրականացնում է սեփական պատասխանատվությամբ, վերջինս պառլամենտն արձակելու իրավունք չունի, քանի որ հակառակ դեպքում դա խախտելու էր իշխանությունների տարանջատման և հավասարակշռության սկզբունքը¹⁷, ուստի նման երկրներում պառլամենտական վերահսկողությանը ենթակա ոլորտն ընդգրկում է նաև պետության գլխի գործունեությունն ամբողջությամբ:** Մինչդեռ Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և ԱՊՀ որոշ երկրներում, որտեղ պետական իշխանության կազմակերպման ժողովրդավարական բաղադրիչը թույլ է, պետության գլուխը ոչ միայն իր հրամանագրերով պառլամենտին հրավիրում է նստաշրջանների, այլև իրավունք

ունի արձակել օրենսդիր մարմինը: Թեպետ կառավարման խառը կամ կիսանախագահական համակարգում նախագահն իրավաբանորեն գործադիր իշխանության գլուխը չէ, սակայն նրա լիազորությունների մեծ մասը փաստացի գործադիր բնույթի են և իրականում ստացվում է այնպես, որ երկրի նախագահն ինքն է իրականացնում գործադիր իշխանությունը երկրում, սակայն դուրս է որևէ վերահսկողությունից: Իսկ դա իշխանությունների տարանջատման և արդյունավետ հավասարակշռման սկզբունքի առումով տրամաբանական չէ:

Սահմանադրության 2015թ.-ի փոփոխություններով Հայաստանում կառավարման կիսանախագահական համակարգից անցում կատարվեց պառլամենտական կառավարման մոդելին և խորհրդարանական առաջին (արտահերթ) ընտրություններն անցկացվեցին արդեն 2018թ.-ի դեկտեմբերին՝ սահմանադրության ամբողջ ծավալով ուժի մեջ մտնելուց հետո: Սահմանադրական նոր կարգավորմամբ պառլամենտական վերահսկողության նոր գործիքներ ու ձևեր սահմանվեցին, որոնցից են օրինակ քննիչ հանձնաժողովների ստեղծումը: Դրանց գործունեության արդյունավետության մասին, սակայն, կարելի կլինի խոսել միայն ապագայում՝ սահմանադրական որոշակի պրակտիկայի ձևավորումից հետո, որպիսին այս պահի դրությամբ դեռևս առկա չէ:

Քանի որ սահմանադրաիրավական ներկայիս կարգավորմամբ կառավարության գործունեությունը վերահսկելուն ուղղված պառլամենտական վերահսկողության ձևերը Հայաստանի Հանրապետությունում բավարարողունավետ չեն, իսկ դրանք իրացնելուն կոչված պառլամենտական ընդդիմությունը իրավունքների առումով և ըստ ձևավորված սահմանադրական պրակտիկայի թույլ, անհրաժեշտ ենք գտնում առանձին կարգավորմամբ ինստիտուցիոնալացնել պառլամենտական ընդդիմության, որպես կառավարության հակակշիռի կարգավիճակը և պառլամենտական վերահսկողության իրական մեխանիզմի ստեղծման համար պառլամենտում ներկայաց-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

¹⁶ Волкова Е.А. Куда идет законодательство о политических партиях //Конституционное и муниципальное право. 2009 N 1 с 32

¹⁷ Տես Ա.Արությունյան. Институт президента в постсоветских республиках: конституция и политическая реальность. Ереван 2006. С 33

ված ընդդիմադիր քաղաքական ուժերին հատուկ իրավունքներով օժտել: Այդ նպատակով առաջարկվում է.

- Սահմանադրական փոփոխություն կատարելու միջոցով հիմնական օրենքում սահմանել (Ազգային ժողովին վերաբերող գլխում), որ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում երկրի նախագահի¹⁸և կառավարության ընթացիկ գործունեության նկատմամբ, հիմնական օրենքի տեքստ ներմուծել «խորհրդարանական ընդդիմություն» եզրույթը և ամրագրել, որ նրա գործունեության երաշխիքները սահմանվում են սահմանադրական օրենքով:

- Ընդունել սահմանադրական օրենք ընդդիմադիր գործունեության մասին¹⁹, որում պետք է սահմանվեն դրա կարգավորման առարկան, ընդդիմադիր գործունեության հասկացությունը, սկզբունքները, սուբյեկտները, նրանց իրավունքներն ու գործունեության երաշխիքները, ընդդիմադիր գործունեության տեսակներն ու ձևերը, ընդդիմադիր գործունեության երաշխիքների համար պատասխանատու պետական մարմինները և այլն:

- Ընդդիմադիր գործունեության համար տրվող երաշխիքների մեջ ամրագրել, որ կառավարության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ Ազգային ժողովին պատկանող վերահսկողությունն իրականացվում է պառլամենտական ընդդիմության միջոցով՝ Հաշվեքննիչ պալատի նախագահի նշանակման իրավունքը վերջինիս վերապահելով:

Պառլամենտական ընդդիմության ներկայացուցիչներին իրավունք է վերապահվում գլխավորել Ազգային ժողովի տասներկու մշտական հանձնաժողովներից չորսը /այդ չորս հանձնաժողովների կազմը ձևավորելով իշխանության և ընդդիմության մեկական ներկայացուցիչ սկզբունքով/ ինչպես նաև իրավունք է վերապահվում համապետական բոլոր ընտրություններում և հանրաքվեների ժամանակ նշանակել կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների կեսին:

- Առանձին հոդվածով սահմանել, որ ընդդիմադիր գործունեության սուբյեկտներից պառլամենտական փոքրամասնությունը երկրի նախագահի և կառավարության ընթացիկ գործունեության վերահսկողության նպատակով այդ գործունեության ցանկացած խնդրահարույց հարցի կապակցությամբ ժամանակավոր քննիչ հանձնաժողով ստեղծելու իրավունք ունի, որն իրականացվում է Ազգային ժողովում ներկայացված ընդդիմադիր բոլոր խմբակցությունների պահանջով՝ առանց կառավարության ձևավորմանը մասնակցած խմբակցությունների մասնակցության:

- Ընդդիմադիր գործունեության շրջանակներում պառլամենտական ընդդիմությանը տրվող երաշխիքների մեջ ամրագրել, որ վերջինիս գործունեությունը պարտադիր լուսաբանվում է հանրային հեռուստատեսության և ռադիոյի միջոցով, որ ընդդիմադիր խմբակցություններին իրենց ծրագրերի մասին հանրությանը տեղեկացնելու համար շաբաթական

¹⁸ Վիետնամի 1992թ.-ի սահմանադրությունը երկրի օրենսդիր մարմնին՝ Ազգային ժողովին, բացառիկ իրավունք է վերապահում գերագույն վերահսկողություն իրականացնել պետության ամբողջ գործունեության նկատմամբ (հոդված 83) սահմանելով, որ Ազգային ժողովը քննարկում է երկրի նախագահի հաշվետվությունները վերջինիս գործունեության վերաբերյալ (հոդված 84), իսկ նախագահը պատասխանատվություն է կրում իր աշխատանքի համար և հաշվետու է Ազգային ժողովի առջև (հոդված 102): Թեպետև Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունը կառավարման ձևով ըստ գործող 1992թ.-ի հիմնական օրենքի պառլամենտական հանրապետություն է, սակայն պետության գլխի նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողության իրավունքն ամբողջովին բխում է պետական իշխանության կազմակերպման ժողովրդաիշխանության սկզբունքից, լիովին համահունչ է իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքին և այդ առումով շատ ուսանելի է մեր երկրի համար: Տես <http://worldconstitutions.ru/> Конституция Вьетнама; էլեկտրոնային կայքը

¹⁹ Հետաքրքիր է, որ Ղրղզստանի օրենսդիր մարմնում՝ ժողովրդի Քենեշում, ընդդիմադիր գործունեության մասին առաջին անգամ օրինագիծ է ներկայացվել դեռևս 2003թ.-ին, սակայն օժանդակություն չի ստացել: Երկրորդ անգամ այդպիսի օրինագիծ ներկայացվել է 2012թ.-ի նոյեմբերին, որպես այդ երկրի 2010թ.-ի սահմանադրության տեքստում (հոդված 70) ներմուծված պառլամենտական ընդդիմություն եզրույթի օրենսդրական լրացում: Ընդ որում օրինագիծը հենց ժողովրդի Քենեշի կողմից հասարակական քննարկման դնելուց և հավանության արժանանալուց հետո ընդունվել է 2013թ.-ի մայիսին: Ղրղզստանը կառավարման ձևով կիսանախագահական հանրապետություն է: Տես <http://kabar.kg/rus/politics/full/43370> էլ. կայքը, նաև ժողովրդի Քենեշի պաշտոնական կայքը <http://kenesh.kg/RU/Articles/16332>: Ընդդիմության մասին օրենք է ընդունվել և այժմ գործում է նաև Ուկրաինայում՝ 2014թ.-ի ապրիլին: Տես <http://www.segodnya.ua/politics/pnews/rada-so-vtoroy-popytki-prinyala-zakon-ob-oppozicii> էլ. կայքը:

առնվազն մեկ ժամ անվճար եթեր է տրամադրվում հանրային հեռուստաալիքներով և սահմանել, որ շաբաթական կտրվածքով տպագիր մամուլի էջերում պառլամենտական ընդդիմադիր մեկ խմբակցությանը հատկացվող լուսաբանման ծավալը չի կարող տարբերվել մյուս խմբակցություններին հատկացվող լուսաբանման ծավալից ավելին քան տասը տոկոսի չափով:

Համոզված ենք, որ մեր երկրի քաղաքական համակարգում գոնե այս ծավալով ինստիտուցիոնալացնելով ընդդիմության առկայությունն ու նրա իրավունքների ամբողջությունը, դրանով իսկ անգամներ կբարձրանա պետության կառավարման արդյունավետության աստիճանը, անհամեմատ կմեծանա պետության կենսունակությունն ընդհանրապես, պետության զարգացմանն ուղեկցող սահմանադրական և քաղաքական գործընթացներն իրենց տրամաբանությամբ կսկսեն համապատասխանել քաղաքագիտության մեջ ընդունված կանոններին և աստիճանաբար կվերանա խզվածությունը իրավաբանական ու փաստացի սահմանադրության միջև: Ընդդիմության ինստիտուտի սահմանադրական ամրագրումն անտարակույս կնպաստի Ազգային ժողովի հեղինակության բարձրացմանն ինչպես պետական մարմինների համակարգում, այնպես էլ ազգաբնակչության մեջ ընդհանրապես: Ուժեղ և ինստիտուցիոնալ ընդդիմության գոյությունն ինքնին կարևոր երաշխիք է հատկապես ընտրական գործընթացներում թափանցիկություն ապահովելու և քաղաքական իրական մրցակցային մթնոլորտ ձևավորելու համար, ինչն էլ իր հերթին կարող է նպաստել հասարակության մեջ ընտրությունների վերաբերալ անձնավորված ընկալումներից և ընտրությունների արդյունքների կանխորոշվածության մասին վտանգավոր պատկերացումներից դեպի

քաղաքական ազատ մրցակցության միջոցով իրապես պատասխանատու և վերահսկելի իշխանություն ձևավորելու հնարավորության ամուր գիտակցմանը:

Պառլամենտական վերահսկողության ձևերի ինստիտուցիոնալ (համակարգային) վերակառուցման շրջանակներում քննարկվող խնդիրների լուծմանը վերաբերող առաջարկներին պետք է դասել նաև մեր երկրի սահմանադրական պրակտիկայում կիրառվող պառլամենտական վերահսկողության առանձին ձևերի արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված մյուս առաջարկները: Խոսքը վերաբերում է հարցապնդումների ինստիտուտին, Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքով սահմանված մեկ նստաշրջանի ընթացքում հարցապնդում անելու պատգամավորական խմբակցությունների թվային սահմանափակումների վերացմանը, խախտման արդյունքներով Ազգային ժողովի համար պարտադիր քննարկումներ անցկացնելու իրավունքի սահմանմանը և դրա քաղաքական ու իրավական հետևանքների պարտադիր ամրագրմանը, կառավարության նկատմամբ անվստահության որոշման բանաձև ներկայացնելու համար հիմնական օրենքով սահմանված պատգամավորների ծայների անհիմն բարձր շեմի իջեցմանը (պատգամավորների ծայների 1/3-ի փոխարեն ծայների 1/6-ը սահմանելը), պառլամենտական քննություն իրականացնելու մասին առանձին օրենքի ընդունմամբ հատուկ քննիչ հանձնաժողովների²⁰ միջոցով կառավարության ընթացիկ գործունեությունը, ինչպես նաև ՀՀ Նախագահի գործունեությունը վերահսկողության ենթարկելու պառլամենտական քննության ինստիտուտին, պետության գլխի նկատմամբ իմփիչմենթի ընթացակարգով իրականացվող պառլամենտական վերահսկողության յուրահատուկ ձևի սահմանադրական այնպի-

²⁰ Քննիչ հանձնաժողովներ գործել են Հայաստանի Առաջին Հանրապետության օրենսդիր մարմնում, որոնք վերջինիս որոշումներով կառավարության միջոցով տեղում կարգադրություններ անելու իրավունք են ունեցել: Հետաքրքիր է, որ պառլամենտի հարցապնդումների հանձնաժողովը երբեմն կոչվել է նաև քննիչ, քանի որ քննում էր հարցապնդումների առիթ ծառայած փաստերը, կազմում եզրակացություն և ներկայացնում պառլամենտին: Ընդ որում այդ հանձնաժողովի անդամ էին օրենսդիր մարմնի բոլոր չորս խմբակցությունների մեկական ներկայացուցիչ: Առաջին Հանրապետության խորհրդարանի պրակտիկայում ստեղծվել են նաև քրեական հետապնդում հարուցելու իրավունքով օժտված հանձնաժողովներ: Տես Ա. Վաղարշյան Հայաստանի Առաջին Հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-20թթ): Երևան 2012թ. էջեր՝ 219, 220, 204: Պառլամենտական քննիչ հանձնաժողովների մասին մանրամասն տես А.В. Скоков Проблемы парламентских расследований: Зарубежный опыт и законодательство России //Государство и право., 2009 N 2

սի ձևակերպումներով ամրագրմանը, որոնք կոդիֆիկացնեն և իրատեսական կդարձնեն վերահսկողության այդ ձևի իրացումը և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիր մարմինը գործադիր իշխանության գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում նաև կառավարության կազմավորմանը իր ունեցած մասնակցության միջոցով, ինչպես նաև գործադիր իշխանությունը (և ոչ միայն) ներկայացնող պաշտոնատար անձանց նշանակումներին իր մասնակցությամբ ընդհանրապես, ապա Հայաստանի Հանրապետության պետական մեխանիզմում Ազգային ժողովի դերն իրապես բարձրացնելու

և իշխանության գործադիր թևը ներկայացուցչական օրենսդիր մարմնի նկատմամբ ավելի վերահսկելի դարձնելու համար պետք է գործի դնել սահմանադրական այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն երկրի արտաքին ու ներքին քաղաքականության կարևորագույն հարցերի մշակման գործընթացում Ազգային ժողովի անհրաժեշտ ներկայացվածությունը և կնպաստեն հաշվետու, պատասխանատու իշխանություն ձևավորելու գործընթացին: Սա նաև ժողովրդաիշխանության սահմանադրական նորմ-սկզբունքի կյանքի կոչման անհրաժեշտությունից է բխում:



ՀԱՅԿ ՇԱՀՐԱԶՅԱՆ

ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
Գրախոս՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյան

**ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԴՈԿՏՐԻՆԸ**

Խորհրդային գաղափարախոսական (մարքս-լենինյան) իրավագիտությունը նույնպես անմասն չմնաց այնպիսի խնդրահարույց թեմայի նկատմամբ, ինչպիսին սուբյեկտիվ իրավունքի կատեգորիան է՝ իր բազմազան դրսևորումներով: Այս առումով, պրոֆ. Ն. Ի. Աստուգովը նշում է. «Իրավունքի բաժանումն օբյեկտիվի ու սուբյեկտիվի մինչ օրս բանավեճային է: Եվ դա պատահական չէ: Տվյալ հարցը՝ իրավագիտության այն նեղ կետն է, որում խաչվում են դրա գլխավոր հիմնախնդրի շուրջ հայացքները՝ ինչ է իրավունքն ընդհանրապես և ինչպիսին են դրա հստակ դրսևորման ձևերը»¹: Այս կապակցությամբ գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկել հարցն այն մասին, թե ինչպես էր խորհրդային իրավագիտությունը սահմանում սուբյեկտիվ իրավունքը՝ օբյեկտիվ իրավունքի հետ դրա հարաբերակցության մեջ: Ընդ որում ուշադրության դաշտից գիտակցաբար բացառվելու են երկու տարրեր: Առաջինը, սույն աշխատության հեղինակը գործնականում չի շոշափի սուբյեկտիվ իրավունքի վերաբերյալ խորհրդային գիտնականների հայացքները, որոնք գոյություն են ունեցել 20-րդ դարի առաջին կեսին, քանի որ «խորհրդային իրավաբանական գրականության մեջ սուբյեկտիվ իրավունքի հիմնախնդրին սկսեցին լուրջ ուշադրություն դարձնել 40-րդ թվականի վերջում և 50-ական թվականների սկզբին»²:

20-րդ դարի առաջին կեսի դուրս ընկնելը կարելի է բացատրել նաև դրանով, որ այն ժամանակ դեռևս չի եղել կայացած միասնական մոտեցում սուբյեկտիվ իրավունքի վերաբերյալ: Իսկ տվյալ կապակցությամբ արտահայտվող տեսությունները խորհրդանշում էին սուբյեկ-

տիվ իրավունքի վերաբերյալ: Իսկ տվյալ կապակցությամբ արտահայտվող տեսությունները խորհրդանշում էին սուբյեկտիվ իրավունքի XIX դարի մեկնաբանությունների պայքարը՝ ավելի ու ավելի հաստատվող նորմատիվիստական իրավաընկալման հետ: Գիտակցաբար բաց թողնելով տվյալ ժամանակաշրջանը՝ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել հենց 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ խորհրդային իրավագիտության մեջ արդեն գիտնականների ճնշող մեծամասնության շարքում հաստատվել է մինչ օրս գոյություն ունեցող սուբյեկտիվ իրավունքի ընկալումը: Երկրորդը, սույն աշխատության մեջ մանրամասնորեն չեն բացահայտվում այն համեմատաբար սակավաթիվ գիտնականների տեսությունները, ովքեր լրիվ չափով չէին համամիտ սուբյեկտիվ իրավունքի համընդհանուր տարածված մեկնաբանության հետ, օրինակ՝ Բ. Վ. Պխալաձեն, Ի. Ե. Ֆարբերը և այլոք: Իրենց հայացքները, որոնք ձգտում էին դեպի իրավունքի «հոգեբանական» ընկալումը, որպես կանոն, ենթարկվում էին կոշտ քննադատությանը և դրա ուժով չեն ստացել լայն տարածում: Հաշվի առնելով վերոնշյալը, շարադրման ընթացքում օգտագործվող «խորհրդային իրավական միտք» կամ «խորհրդային իրավագիտություն» բառակապակցություններն անհրաժեշտ է յուրաքանչյուր անգամ մեկնաբանել սահմանափակորեն, դրանում չեն ներառվում 20-րդ դարի առաջին կեսի սուբյեկտիվ իրավունքի մասին պատկերացումներն ու հայեցակարգերը, որոնք տարբերվում էին իրավունքի՝ իբրև նորմերի համակարգի նկատմամբ ավանդական հայացքի հետ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

¹ Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: էջ 103-111:
² Տե՛ս **Селиванова О. Ю.** Субъективное право: сущность, структура, ценность: дис.... канд. юрид. наук. Нижний Новгород, 2001: էջ 28:

Այսպիսով, ընդհանուր մեթոդաբանական հիմնավորումը, որը բնորոշ է խորհրդային իրավագիտության համար, հետևյալն է. «Ամենալայն իմաստով «օբյեկտիվ» նշանակում է այն, ինչը գոյություն ունի գիտակցությունից դուրս»³: Համապատասխանաբար նաև իրավունքի երևույթը, որն ավանդաբար դիտարկվում է իրավագիտության կողմից իբրև գիտակցությունից դուրս գտնվող և իր օբյեկտիվացված արտացոլումն է գտնում նորմատիվ-իրավական ակտերում, խորհրդային ժամանակաշրջանի իրավագետների կողմից ընկալվում էր իբրև օբյեկտիվ: Դա կոչված էր արտահայտելու այնպիսի կատեգորիան, ինչպիսին է «իրավունքը՝ օբյեկտիվ իմաստով»: Սակայն այստեղ խորհրդային տեսաիրավական միտքը բախվել է հենքի ու վերնաշենքի մասին մարքսիստական-լենինյան ուսմունքին: Հավանաբար, պատահական չէ, որ Ն. Ի. Մատուզովը հարց էր տալիս օբյեկտիվի ու սուբյեկտիվի իրավունք բաժանելու մասին, «արդյոք այն ընդհանրապես իրավաչափ է մարքսիստական-լենինյան մեթոդաբանության տեսակետից»⁴: Չէ որ իրավունքը, ըստ մարքսիստական ուսմունքի, վերնաշենքային բնույթի երևույթ է, իսկ դա նշանակում է՝ ածանցյալ է տվյալ հասարակությունում իշխող տնտեսական հարաբերությունների տեսակից: Այս իմաստով «որպես օբյեկտիվորեն իրական հանդես է գալիս հասարակական կեցությունը՝ նյութական արտադրությունը, արդյունաբերական հարաբերություններն ու դրանց հատուկ օբյեկտիվ օրենքները»⁵: Ստացվում է, որ օբյեկտիվ ի վրայից որակին հավակնելը, այդպիսի դիրքորոշմանը համաձայն, կարող են միայն տնտեսական հենքի երևույթները, իսկ իրավունքը, հանդիսանալով գաղափարախոսական վերնաշենքի մաս, չի կարող բնութագրվել իբրև օբյեկտիվ: «Իրավունքը դիտարկվող տիրույթում պատկանում է սուբյեկտիվ տիրույթում՝ վերնաշենքային, գաղափարախոսական հարաբերություններին, իրենից ներկայացնում է հասարակական զարգացման սուբյեկտիվ

գործոն»⁶, - գրում էր Ս. Ս. Ալեքսեևը: Եվ այնուհետև նա նշում էր, որ. «Իրավունքը սուբյեկտիվի (գաղափարախոսական հարաբերությունների) ոլորտին պատկանող երևույթ ճանաչելը, և, հետևաբար, նաև դրա հասարակական զարգացման սուբյեկտիվ գործոն ճանաչելն արտահայտում է այն գլխավորը, ինչը հատուկ է իրավունքի հետազոտման նկատմամբ դիալեկտիկական- նյութապաշտական մոտեցմանը»⁷:

Խորհրդային իրավագիտությունը՝ իրավունքը օբյեկտիվի ու սուբյեկտիվի բաժանելու համար, պետք է ելք գտներ այս բարդ իրավիճակից: Արտաքուստ չհավակնելով վերնաշենքային սուբյեկտիվության մասին պնդումին՝ իրավական միտքը մշակել է կոորդինատների հետևյալ համակարգը, որում էլ կատարվում էր տվյալ բաժանումը:

Առաջին հերթին՝ գաղափար է ծագել այն մասին, որ «իրավունքի բաժանումն օբյեկտիվի ու սուբյեկտիվի... ի տարբերություն, օրինակ, այն մասնավորի ու հանրայինի բաժանելուց, ունի իմացաբանական, ճանաչողական ծագում...»⁸:

Այսինքն պայմանականորեն երևույթի առավել խորը ուսումնասիրության նպատակներով կարելի է վերածարկվել դրա վերակառուցային, այն է՝ նաև սուբյեկտիվ բնույթից, քանի որ «պարզ արձանագրումը, որ իրավունքը պատկանում է սուբյեկտիվի ոլորտին, հանում է իրավունքում օբյեկտիվի մասին հարցի բուն սահմանումը»⁹, հետևաբար նաև դադարեցնում է ցանկացած գիտական վեճը: «Մինչդեռ հասարակական երևույթների հանդեպ հաջորդաբար նյութապաշտական մոտեցումը կայանում է, պետք է համարել, ոչ թե նրանում, որպեսզի դրանց մի մասը դասվեն սուբյեկտիվի ոլորտին և դրանով իսկ «փակվի» խնդիրը, այլ նրանում, որպեսզի սուբյեկտիվի ոլորտին պատկանող բուն երևույթներում գտնել այն, ինչը բնութագրում է «օբյեկտիվը», և, հետևաբար, համաձայնեցվում է հասարակական երևույթ-

³ Տե՛ս **Алексеев С. С.** Объективное в праве // Правоведение. 1971. № 1: էջ 113:

⁴ Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: էջ 13-14:

⁵ Տե՛ս **Алексеев С. С.** Объективное в праве // Правоведение. 1971. № 1: էջ 113:

⁶ Տե՛ս **Алексеев С. С.** Объективное в праве // Правоведение. 1971. № 1: էջ 113:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: էջ 15:

⁹ Տե՛ս **Алексеев С. С.** Նշված աշխ. էջ 114:

ների ընդհանուր դիալեկտիկական-նյութապաշտական մեկնաբանության հետ»¹⁰:

Զարգացնելով իր տեսակետը, Ն.Ի. Մատուզովը գրում էր. «Բնականաբար, օբյեկտիվի ու սուբյեկտիվի, կախյալի ու անկախի սահմանները, ընդհանրապես, պայմանական են, բացարձակ չեն... օբյեկտիվի ու սուբյեկտիվի միջև գոյություն ունեն ներթափանցումներ և փոխադարձ անցումներ, դրանք ոչ միայն հակառակ չեն, այլև միասնական են»¹¹: Բացի այդ, գիտակցությունից դուրս օբյեկտիվ գոյության, մասին ընդհանուր մեթոդաբանական հղումը իրավունքի նկատմամբ կորցնում է իր բացարձակ բնույթը: Բազմաթիվ հեղինակների կարծիքով, իրավունքի վրա գիտակցության ազդեցությունն արտահայտվում է զոնե իրավաստեղծագործության շրջանակներում կամ դատավորական հայեցողության միջոցով (հատկապես անզուսաքսոնական իրավական ընտանիքի երկրներում)¹²:

Այնուհետև խորհրդային իրավագիտության կողմից գաղափար է առաջ մղվել օբյեկտիվի ու սուբյեկտիվի բաժանումը՝ իրականի ու անիրականի բաժանման հետ խառնելու անթույլատրելիության մասին, հայտարարվում է, որ դրանք լիովին տարբեր կոորդինատների համակարգեր են: Եթե առաջինում որպես տարանջատման հիմք վերցվում է սուբյեկտից կախվածության աստիճանը, ապա երկրորդում կատարվում է գոյությանը՝ չգոյությանը, գոյություն ունեցողը՝ գոյություն չունեցողին հակադրությունը: Եվ այնուհետև արվում է շատ կարևոր մեթոդաբանական անցում՝ իրականությունը ճանաչվում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող, իսկ իրավունքը՝ իրական (ուստի՝ նույնպես օբյեկտիվ): Այս կապակցությամբ Պ. Մ. Ռ-աբինովիչը նկատում է. «Ակնհայտ է, իրավունքի ճանաչումը որպես սուբյեկտիվ իրականություն բացառապես չի ժխտում (այլ, ընդհակառակը, ենթադրում է) դրա դասումն

ընդհանրապես սոցիալական իրականությանը»: Այնուհետև նա շարունակում է. «Մյուս կողմից, իրավունքի հանդեպ «սոցիալական իրականություն» եզրույթի կիրառումը արդարացված է միայն տիպալ երևույթի՝ օբյեկտիվի ու սուբյեկտիվի տեսակետից հետագա գնահատման պայմանով, քանի որ իրավունքի «զուտ» գոյաբանական, չափազանց վերացական բնութագիրը (այսինքն՝ իբրև վերադասային երևույթի) կարող է լինել անբավարար, քիչ օգտակար»¹³:

Զարգացնելով այդ գաղափարը՝ Ն. Ի. Մատուզովը գրում էր. «...ամբողջովին ճիշտ ու անկասկած միտքն այն մասին, որ իրավունքը «սուբյեկտիվ գործոն» է բազիսի հանդեպ, բացարձակապես չի հակասում դրա՝ իբրև «օբյեկտիվորեն իրական» երևույթի ընկալմանը: Մեկը մյուսին չի բացառում»¹⁴: Այնուհետև նա անում է ևս մի կարևոր նկատառում. «Այդ իմաստով իրական են նաև բոլոր հոգեկան գործընթացները, իդեալական, սուբյեկտիվ, մարդուց կախված ամեն ինչը», նշանակում է նաև «սուբյեկտիվ իրավունքը նույնպես «օբյեկտիվ» է, քանի որ այն իրականում գոյություն ունեցող փաստ է»¹⁵:

Սակայն հարկավոր է նշել, որ «օբյեկտիվության» և սուբյեկտիվ իրավունքի մասին այդ թեզը հետագայում հաշվի չի առնվում, իսկ իբրև «օբյեկտիվ» հեղինակների կողմից ճանաչվում է միայն սեփական օբյեկտիվ իրավունքը.

«Բերված դրույթներն ամբողջովին կիրառելի են իրավունքի հասկացություններն օբյեկտիվ ու սուբյեկտիվ իմաստով բացատրելուն...»¹⁶: Այդպիսի տրամաբանական վերափոխումներից հետո հնարավորություն է առաջանում խոսել օբյեկտիվ իրավունքի մասին՝ առանց նայելու դրա վերակառուցողական բնույթին. «Ինչո՞ւ կարող է կայանալ գիտության համար իրավունքում օբյեկտիվի հիմնախնդիրը, եթե այն ամենը, ինչն այն արտացոլում է,

¹⁰ Տե՛ս **Алексеев С. С.** Объективное в праве// Правоведение. 1971. №1: էջ 114:

¹¹ Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: էջ 21

¹² Տե՛ս **Туманов В. А.** Буржуазная правовая идеология. К критике учений о праве. М.: Наука, 1971: էջ 368; **Тиунова Л. Б.** Системные связи правовой действительности: методология и теория. СПб.: Издательство СПб. ун-та, 1991: էջ 82:

¹³ Տե՛ս **Рабинович П. М.** Право как явление общественного сознания: к дискуссии об объективном и субъективном в праве // Правоведение. 1972. № 2: էջ 106-116:

¹⁴ Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: էջ 23:

¹⁵ Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: էջ 22:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 23:

օբյեկտիվ է: Գիտությունն ուսումնասիրում է օբյեկտիվ հասարակական հարաբերությունները, գործընթացները, երևույթները»¹⁷:

Ընդ որում, ի սկզբանե ընդունելով, որ անթույլատրելի է խառնել օբյեկտիվի ու սուբյեկտիվի բաժանումն իրականի և անիրականի բաժանմանը¹⁸, իրավական միտքը ցույց է տալիս հակառակի օրինակը: Այն է, նրանից հետո, երբ իրավունքը ստացել է «օբյեկտիվի» բնութագիրը «իրական-անիրական» համակարգում, իրավական դիսկուրսն աննկատելիորեն վերադառնում է «օբյեկտիվ - սուբյեկտիվ» համակարգի մեջ: «Այսպիսով, իրավունքը ճանաչվում է առանձնահատուկ օբյեկտիվ իրողություն («առկա իրականություն») նրանից հետո, երբ այն նյութականի ու գարափարախոսականի հասարակական հարաբերությունների ընդհանուր դասակարգմանը համապատասխան՝ դասված է սուբյեկտիվի ոլորտին»¹⁹, - բնութագրում էր տվյալ տրամաբանորեն չհիմնավորված անցումը Ս. Ս. Ալեքսեևը:

Կարելի է տեսնել, որ արդեն իսկ դնելով իրավունքի՝ օբյեկտիվի ու սուբյեկտիվի բաժանման հիմքը, խորհրդային իրավագիտությունը թույլ տվեց մի շարք տրամաբանական սխալներ: Ըստ էության, այն բախվել է նրա հետ, որ օբյեկտիվի ու սուբյեկտիվի իրավունքի ավանդական բաժանումը չի տեղավորվել այն ժամանակ գերիշխող իրավունքի՝ իբրև սուբյեկտիվ վերնաշենքային երևույթի մասին տեսության մեջ: Սակայն, իրավագիտության համար դրական միտումով հայեցակարգը պահելու համար ձեռնարկվել են հետևյալ քայլերը.

1. Առաջ է մղում թեզն այն մասին, որ ճանաչողության նպատակներով և սուբյեկտիվ երևույթում կարող է բացահայտվել օբյեկտիվ կողմը (առաջին տրամաբանական անհաջորդականությունը),

2. Տվյալ օբյեկտիվ կողմը բացահայտվում է, հիմնավորվում է իրավունքի իրականության մասին թեզի միջոցով (ընդ որում սուբյեկտիվ

իրավունքն այդ իմաստով նույնպես իրական է),

3. Իրավունքի այնպիսի որակի հիման վրա, ինչպիսին է իրականությունը, եզրակացություն է արվում «օբյեկտիվ իրավունք» կատեգորիայի օրինաչափության մասին, այսինքն՝ բացարձակացվում է ի սկզբանե սուբյեկտիվ երևույթի օբյեկտիվ կողմը (երկրորդ տրամաբանական անհաջորդականություն),

4. Մոռացվում է դրույթն այն մասին, որ սուբյեկտիվ իրավունքն էլ է իրական, իսկ դա նշանակում է նույն չափով հավակնում է օբյեկտիվությանը, ինչպես և բուն «օբյեկտիվ իրավունքը» (երրորդ տրամաբանական անհաջորդականություն),

5. Տեղի է ունենում արդեն «օբյեկտիվ» իրավունքի մասին, դիսկուրսի չհիմնավորված վերադարձ «բազիս-վերնաշենք» հարաբերակցության ոլորտ:

Հիմնվելով օբյեկտիվի և սուբյեկտիվի իրավունքի այդպիսի բաժանման վրա՝ խորհրդային իրավական միտքը հետևյալ կերպ էր սահմանում բուն այս հասկացությունները. «Մեր գրականության մեջ բավականաչափ ամուր հաստատվել է սուբյեկտիվ իրավունքի՝ իբրև լիազորված անձի հնարավոր վարքագծի միջոցի հասկացությունը, ով ապահովված է իրավահարաբերության այլ մասնակիցների պարտավորված վարքագծով և այդ վարքագիծը պահանջելու կարողությամբ»²⁰, - նկատում էր Մ. Վ. Միցկևիչը: Ն. Վ. Վիտրուկը և Վ. Մ. Պատյուկինը հետևյալ կերպ էին մոտենում այս հարցին. «Հնարավոր վարքագծի չափը, որը ձևակերպվել է օբյեկտիվ իրավունքի նորմում՝ կոնկրետ սուբյեկտի հետ այն հարաբերելու ժամանակ, հանդես է գալիս իբրև տվյալ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունք...»²¹: Ն. Ի. Մատուզովի մոտ սուբյեկտիվ իրավունքը՝ «սուբյեկտների հնարավորություն կամ իրավասություն է գործելու հայտնի եղանակով այս (այսինքն՝ պետական) սահմանումների շրջա-

¹⁷ Տե՛ս **Фарбер И. Е.** К вопросу об объективном в праве // Правоведение. 1971. № 5: էջ 102-107:

¹⁸ Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: էջ 22:

¹⁹ Տե՛ս **Алексеев С. С.** Объективное в праве // Правоведение. 1971. № 5: էջ 113:

²⁰ Տե՛ս **Мицкевич А. В.** Некоторые вопросы учения о субъективных правах // Правоведение. 1958. N 1: էջ 28-36:

²¹ Տե՛ս **Витрук Н. В.** Теоретические проблемы субъективных прав: **Н. И. Матузов.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. Саратов: Изд-во Саратовского ун-та, 1972: էջ 290: (Рецензия) / **Н. В. Витрук, В. А. Патюлин** // Правоведение. 1973. № 5: էջ 117-120:

նակներում»²²: Լ.Ա. Պուստոբաևան նկատում էր, որ «առավելապես տարածված է (որոշակի տարբերակներով ու լրացումներով) այն սահմանումը, որի համաձայն սուբյեկտիվ իրավունքը՝ սահմանված ու օրենքով ապահովված միջոց է, իրավունքի սուբյեկտի հնարավոր (թույլատրելի) վարքագծի տեսակ»²³:

Այսպիսով, խորհրդային իրավագիտությունն ավանդաբար սահմանում էր սուբյեկտիվ իրավունքը «հնարավոր վարքագծի չափ» կամ, ծայրահեղ դեպքում, «հնարավորություն» կատեգորիաների միջոցով:

Այսպիսով, խորհրդային իրավական ավանդույթը սուբյեկտիվ իրավունքի մասին հարցի շուրջ գալիս էր հետևյալ եզրակացությունների՝

1. Սուբյեկտիվ իրավունքը՝ հնարավոր վարքագծի չափ է օբյեկտիվ իրավունքով սահմանված շրջանակներում:
2. Սուբյեկտիվ իրավունքը երկրորդական է օբյեկտիվի նկատմամբ և կատարում է ծառայողական գործառույթ:
3. Սուբյեկտիվ իրավունքի՝ նախկինում գոյություն ունեցած տեսությունների ողջ բազմազանությունից ճանաչում է ստացել նորմատիվիստական տեսությունը:
4. Օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի համար միասնական հասկացությունը մերժվում էր՝ իբրև մեթոդաբանորեն չհիմնավորված:



²² Տե՛ս **Матузов Н. И.** Личность. Права. Демократия. Теоретические проблемы субъективного права. М., 1972: էջ 15:

²³ Տե՛ս Пустобаева Л.А. Опонятии субъективного права// Правоведение.1984. №3: էջ 47-54:

ԼԵՈՆԻԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ,
Երևան քաղաքի Աջափնյակ-Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Զինվորական հանցագործությունների շարքը զետեղված է «քրեական օրենսգրքի 32-րդ գլխում, որը կոչվում է «Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ» և պարունակում է 27 հանցակազմ, որոնք ոտնձգում են միաբնույթ հասարակական հարաբերությունների դեմ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ այս գլխում նախանշված հանցագործությունների սեռային և տեսակային օբյեկտները համընկնում են, դրանք քրեական օրենսգրքով պաշտպանվող այն հասարակական հարաբերություններն են, որոնք առաջանում են զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության հատուկ տեսակի իրականացման ընթացքում¹:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների բացահայտումը մարտական կարգապահությունը բարձրացնելու կարևոր նախապայմաններից է: Հետևաբար, նախևառաջ, կարևոր է պարզել «զինվորական ծառայություն» եզրույթի հասկացությունը և բովանդակությունը, որն օրենսդրորեն ամրագրված է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի² 3-րդ հոդվածում. «1. Զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության հատուկ տեսակ է»: Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ օրենսդրությամբ սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող:

Զինված ուժերում զինվորական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների վտանգավորության աստիճանը առավել բարձր է, քանի որ դրանք ուղղված են ոչ միայն անմիջական օբյեկտի՝ զինվորական ծառայության սահմանված կարգի, այլև բանակի մարտունակության և, վերջին հաշվով՝ պետության անվտանգության դեմ:

Ըստ գործող ՀՀ քրեական օրենսգրքի՝ 32-րդ գլխում զետեղված հանցակազմերի վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ են համարվում այն արարքները, որոնք ուղղված են զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ և կատարվում են զինծառայողների, ինչպես նաև պահեստազորում ընդգծված այն քաղաքացիների կողմից, ովքեր անցնում են վարժական հավաքների³:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքը չի տալիս զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության սահմանումը, քանի որ այն իրավացիորեն դիտարկվում է որպես հանցագործության ընդհանուր սահմանումի առանձին դրսևորում, հետևաբար այս հանցագործության տեսակին բնորոշ են հանցագործության բոլոր ընդհանուր հատկանիշները: Այդուհանդերձ, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններն ընդհանուրի հետ մեկտեղ ունեն նաև բնութագրական առանձնահատկություններ, որոնք հանգում են հետևյալին. Ոտնձգության առանձնահատուկ օբյեկտ՝ զինվորական

¹ Մանրամասն տես՝ **Аветисян С. С.** Воинские преступления: теория и практика, Ереван, 2001:
² Տես «ՀՀՊՏ N 73 (1348) 6.12.2017»:
³ Տես Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատ.): Երևանի պետական համալսարան: Եր.: ԵՊՀ հրատ. 2012, էջ 945:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

ծառայության սահմանված կարգն է, որը սահմանափակվում է ՀՀ օրենքներով⁴, զինվորական կանոնակարգերով, ՀՀ վարչապետի և կառավարության որոշումներով, ՀՀ պաշտպանության նախարարի և զորամասերի պետերի հրամաններով և այլն:

Մի շարք ժամանակակից գիտնականներ առաջարկում են հրաժարվել հանցագործության օբյեկտի որպես հասարակական հարաբերությունների մասին հիմնադրույթից: Ն.Ի. Զագորոդնիկովը գտնում է, որ օբյեկտի որպես հասարակական հարաբերությունների ավանդական հասկացողությունը, հիմնվում է վերացական, գաղափարական կարգախոսների վրա, որոնք արհեստականորեն ներդրված են մեր իրականություն⁵: Ա.Վ. Պաշկովսկայան, հետազոտելով օբյեկտի որպես իրավական բարիքի տեսությանը վերադառնալու հնարավորության մասին հարցը, եզրակացնում է, որ «հանցագործության օբյեկտը քրեական օրենքով պահպանվող սոցիալապես նշանակալից արժեքներ, շահեր, բարիքներ է, որոնց հանդեպ ուղղված է անձը, ով կատարել է հանցագործությունը⁶»:

Ա.Տեր-Ակոպովը ենթադրում է, որ հասարակական հարաբերությունների որպես հանցագործության օբյեկտի ընդունումը վերջիններն առաջին տեղն է դնում: Ստացվում է, որ օրենքը պահպանում է հասարակական հարաբերությունների սահմանված կարգը: Սակայն իրավահարաբերություններն իրավական պահպանության մեխանիզմում խաղում են կարևոր դեր, որի բնույթը կայանում է սոցիալական կարգի որոշակի բարիքների պաշտպանության իրավական ապահովման մեջ: «Հարաբերությունների կարգի խախտումը որպես սպանության էություն համարելը, որոնք պահպանում են մարդու կյանքը, նշանակում է արժեքները ոտքից գլուխ խառնել, ճանաչել

որպես արժեքի հիմք ոչ թե մարդուն, այլ հարաբերությունները, որում ինքը ներառված է, և որոնք առկա են նրա համար»⁷:

Զարգացնելով հանցագործության օբյեկտի վերաբերյալ նոր հիմնադրույթը, Ա.Ա. Տեր-Ակոպովը, Խ.Մ. Ախմեխաշինը տալիս են նոր սահմանում նաև զինվորական հանցագործության օբյեկտին: Նրանք ելնում են նրանից, որ զինվորական հանցագործության հիմնական նյութական նախանշանը զորքերի ռազմական պատրաստականությունն է, որը չի կարող վերագրվել ոչ ռազմական իրավունքին, ոչ ռազմածառայողական հարաբերություններին:

Զորքերի ռազմական պատրաստականությունն իր հերթին հանդես է գալիս որպես պետության ռազմական անվտանգության հիմնական գործոն: Վերոշարադրյալը հանդես է գալիս որպես Ա.Ա. Տեր-Ակոպովի և Խ.Մ. Ախմետշինայի կողմից որպես պետության ռազմական անվտանգության և զինվորական ծառայության դեմ հանցագործությունների օբյեկտ, որը հասկացվում է որպես ռազմական հանցագործություններից երկրի պաշտպանվածության վիճակ⁸:

Մեր կարծիքով, նշված հիմնադրույթի հետ պետք է համաձայնվել: Զինվորական հանցագործության ինչպես սեռային, այնպես էլ տեսակային, օբյեկտի յուրահատկությունը սահմանվում է կանոնադրային հարաբերությունների բնույթով ու նպատակով:

Հետագա մշակումները զինվորական հանցագործության օբյեկտի տվյալ հիմնադրույթը ստացավ Օ.Կ. Զալեպինի աստենախոսական աշխատանքում⁹: Նա հիմնավորում էր կարգախոսն այն մասին, որ ռազմական անվտանգությունը իրենից ներկայացնում է այն հենքը, որին վնասելը կազմում է զինվորական հանցագործությունների հասարակական վտանգավորության բնույթը, իսկ այդպիսի ար-

⁴ Տե՛ս «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» 29 նոյեմբերի 2017 թվականի ՀՕ-195-Ն ՀՀ օրենքը // ՀՀ ՊՏ N 73 (1348) 6.12.2017, «Պաշտպանության մասին» 29 նոյեմբերի 2017 թվականի ՀՕ-196- Ն ՀՀ օրենքը // ՀՀ ՊՏ N 73 (1348) 6.12.2017:

⁵ Տե՛ս **Загородников Н.И.** Объект преступления: от идеологизации содержания к естественному понятию // Межвузовский сборник научных трудов. - М., 1994, էջ 5-21:

⁶ Տե՛ս Курс уголовного права. В 2 т. Т. 1. Общая часть /Под ред. **Н.Ф.Кузнецовой, И.М.Тяжковой** -М., 1999, էջ 201:

⁷ Տե՛ս **Тер-Акопов А.А.** Ответственность за нарушения специальных правил поведения. -М.: Юрид. лит., 1995, էջ 10:

⁸ Տե՛ս Российское уголовное право. Особенная часть. Учебник под редакцией **М.П.Журавлёва** и **С.Н.Никулина** - М.: изд. «Спайк». 1998, (էջ 433):

⁹ Տե՛ս **Зателепин О.К.** Объект преступления против военной службы: Дисс.....канд. юрид. Наук /Военный университет. -М., 1999, 211 էջ:

ժեքները որպես ռազմական-ծառայողական պարտականություններ և հարաբերություններ, ռազմաիրավական նորմերը առկա են պետության ռազմական անվտանգության ապահովման համար: Համաձայն ձևակերպման, որը տրվել է Օ.Կ. Ջատելեպինի կողմից, զինծառայության կարգի դեմ հացագործության օբյեկտը հանցագործ ոտնձգություններից օրենքով պահպանվող ռազմական անվտանգությունն է, որն իրենից ներկայացնում է պետության ռազմական կազմակերպման և ռազմական պատրաստականության վիճակ, որը երաշխավորում է ՀՀ սահմանադրական կարգի, անկախության, ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, ռազմական պաշտպանության, արտաքին ու ներքին սպառնալիքներից:

Օ.Կ. Ջատելեպինի հիմնադրույթային մոտեցումը զինվորական հանցագործությունների օբյեկտի սահմանման հանդեպ ամբողջությամբ կիսում է սույն հետազոտության հեղինակը: Ելնելով վերոնշյալ տվյալներից, կարելի հաստատել, որ զինվորական ծառայության կարգի դեմ հացագործությունների տեսակային օբյեկտի իրական բովանդակությունը ռազմական անվտանգությունն է, որի քրեաիրավական պահպանությունը ՀՀ ՔՕ 32-րդ գլխի հիմնական նպատակն է:

ՀՀ ՔՕ 32-րդ գլխում քրեաիրավական պահպանության տեսակային օբյեկտ ճանաչելով պետության ռազմական անվտանգությունը՝ պետք է նշել, որ վերջինս իր հերթին կապված է ռազմական պատրաստականության տարրերից, ստորաբաժանվում է որոշակի բաղկացուցիչների: Ռազմական անվտանգության ցանկացած այսպիսի մաս կարելի է համարել քրեաիրավական պահպանության օբյեկտ, մասնավորապես ռազմական տեխնիկայի շահագործման անվտանգություն, ծառայությունների պահպանության տեսակներ կրելու անվտանգություն և այլն: Այն, որպես կանոն, միատեսակ է մի քանի միատարր հանցագործությունների համար: Առկա է այդպիսի տեսակային օբյեկտ նաև հետազոտվող հան-

ցագործությունների համար: Սահմանումը, որը տրվել է Օ.Կ. Ջատելեպինի կողմից ռազմական անվտանգության ռազմական հանցագործությունների սեռային օբյեկտի ճանաչման հիման վրա անկասկած առավել հիմնավորված է: Ջարգացնելով իր մոտեցումը՝ նա առաջարկում է որպես զինվորական հանցագործությունների տեսակային օբյեկտ համարել օրինակ՝ ենթակայության, զիվորական կանոնագրքային փոխհարաբերությունների սահմանված կարգը խախտող զինծառայողների գործունեության անվտանգությունը, ովքեր կատարում են զին ծառայության գործառույթային պարտականություններ¹⁰:

Ջինվորական ծառայության կարգը ներառում է ռազմաիրավական հարաբերությունների բոլոր տեսակները և ծառայության ամբողջ ժամանակահատվածում հանդիսանում է բոլոր «զինվորական» հանցագործությունների համար որպես սեռային օբյեկտ: Ըստ անմիջական օբյեկտի՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված բոլոր հանցակազմերը առանձնանում են խմբերի, որոնք էլ կազմում են այս տեսակի հանցագործությունների ամբողջական համակարգը¹¹:

Ջինծառայության դեմ հանցագործությունների և հանցագործությունների դիտվող խմբի որոշակի օբյեկտների հանդեպ ժամանակակից մոտեցման պարզաբանումը թույլ է տալիս առավել ճշգրիտ կերպով սահմանել հանցագործությունների անմիջական օբյեկտները, որոնք ուղղված են զինվորական ծառայության կարգի դեմ:

Ջինվորական հանցագործությունների օբյեկտի վերաբերյալ վերանշված վերլուծությունից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները՝

1) «ՔՕ 32-րդ գլխում սահմանված հանցակազմերի օբյեկտը չի համապատասխանում քրեաիրավական պաշտպանության ներկա գերակայություններին, քանի որ զինվորական հանցագործության իրական տեսակային օբյեկտ է ռազմական անվտանգությունը որպես հանցագործության ընդհանուր օբյեկտի՝

¹⁰ Стів Зателепін О.К. Объект преступления против военной службы: дис. ... канд. юрид. Наук. Военный университет. -М., 1999, էջ 73:

¹¹ Մանրամասն տե՛ս Մանրամասն տե՛ն Աветисян С.С. Воинские преступления: теория и практика: Монография, Ереван, Изд-во «Зангак», 2001:

հասարակական անվտանգության բաղկացուցիչ մաս:

2) ՀՀ ՔՕ 32-րդ գլխում բովանդակվող զինվորական հանցագործությունների խմբի համար, որոնք ոտնձգություն են կատարում զինվորական ծառայության կարգի դեմ, տեսակային օբյեկտ է հանդիսանում զորքերի ղեկավարման և զինծառայողների ծառայողական գործունեության անվտանգությունը: ՀՀ ՔՕ 356-383-րդ հոդվածներով նախատեսված համապատասխան դեպքերում լրացուցիչ օբյեկտ է զինծառայողի անձը: Որոշ իրավաբանների դիրքորոշումը, ովքեր ենթադրում են, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները չունեն ոտնձգության այնպիսի լրացուցիչ օբյեկտ, ինչպես տուժողի անձը, հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի բովանդակությանը, որում նշված է, որ բարձրագույն արժեք է մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները անօտարելի են:

3) Դիտվող խմբի հանցագործ ոտնձգություններն ունեն լատենտայնության բարձր աստիճան, տարածն են ըստ կատարման ձևերի և սուբյեկտների: համաձայն հեղինակի դիրքորոշման զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները ժամանակակից պայմաններում սահմանվում են որպես զինծառայողների հանցագործ ոտնձգություններ զորքերի կառավարման ու զինծառայողների և զինծառայության անվտանգության հանդեպ:

4) Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցակազմերի սահմանազատման անհրաժեշտությունը բխում է գործող օրենսդրությունից և իրավակիրառ պրակտիկայից: Հետևաբար պետք է նշել, որ մի զինծառայողի մյուսի հանդեպ բռնություն գործադրելը, անգամ եթե այն կատարվել է զորամասում, համարվում է ռազմական հանցագործություն: Չինծառայություն անցնելու շրջանում զինծառայողները մտնում են ոչ միայն ծառայողական հարաբերությունների մեջ, որոնք կարգավորվում են ու պաշտպանվում ռազմական օրենսդրության նորմերով: Փոխադարձ հաղորդակցման ընթացքում գույքային, ամոհանալնտանեկան և այլ անձնային իրավունքների և ազատությունների հիման վրա կարող են առաջա-

նալ անձային հարաբերություններ: Կոնկրետ դեպքերում նրանք կարող են ուղեկցվել հարաբերություններին մասնակից զինծառայողների համաքաղաքացիական իրավունքների ու ազատությունների խախտումով, այդ թվում նաև բռնության կիրառությամբ: Քանի որ նման իրավահարաբերությունները չեն ոտնձգում ռազմական անվտանգությանը, նրանք պետք է որակվեն՝ անձի, սեփականության դեմ, խուլիգանության մասին և այլ հանցագործությունների ընդհանուր քրեական օրենսդրության համապատասխան նորմերով:

5) Դիտարկվող խմբի զինվորական հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունը, որոնք կատարվում են ռազմական իրադրության մեջ և խաղաղ ժամանակ, պետք է խիստ սահմանափակ ըստ դիտավորության ուղղվածության և ոտնձգության օբյեկտների: Հետևաբար պետք է անհետաձգելիորեն սկսել ՀՀ ՔՕ 32-րդ գլխում գետեղված հանցակազմերի փոփոխությունների և լրացումների մշակումը, ուր կկարգավորվի զինծառայողների պատասխանատվությունը՝ զինվորական և ոչ զինվորական բնույթի հանցագործությունների կատարման համար:

Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների օբյեկտիվ կողմը դրսևորվում է արարքի (գործողության կամ անգործության) կատարմամբ: Սակայն որոշ հանցակազմերի համար պարտադիր է վնասակար հետևանքների առաջացումը (ՀՀ քր. Օր.-ի 369, 370, 371, 372 և այլն): Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել պատճառական կապի առկայությունը կատարված արարքի և առաջացած հետևանքների միջև:

Չինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ սուբյեկտը հատուկ է:

Այսպես, ՀՀ քր. օր.-ի հոդված 356-ի («Հրամանը չկատարելը») 5-րդ մասի համաձայ՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են ՀՀ զինված ուժերում, ՀՀ այլ զորքերում զորակոչի հիման վրա կամ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ինչպես նաև ռազմական հավաքներ անցնելու ժամանակ՝ զինապարտները:

հանցագործություններ են համարվում

զինծառայողների միայն այն արարքները, որոնք ուղղված են զինվորական ծառայության կարգի դեմ: Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 316, 332-2, 332-3, 347-րդ հոդվածներում պատասխանատվում է սահ մանված հատուկ սուբյեկտների, ինչպես նաև նրանց մերձավոր ազգականների նկատմամբ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի դեպքում, եթե դա կապված է եղել տվյալ սուբյեկտի ծառայողական պարտականությունները կատարելու հետ: Հրաման չկատարելու սուբյեկտներ կարող են լինել պետին ծառայությամբ կամ կոչումով ստորադաս զինծառայողները, զինվորական կոչումով կրտսեր զինծառայողները, որոնք զինվորական կարգապահության կամ հասարակական կարգի խախտման դեպքում չեն կատարում զինվորական կոչումով ավագի պահանջը այդ խախտումները վերացնելու համար:

Որոշ դեպքերում զինվորական կանոնագրքերը զինվորական ծառայության առանձին հարցերով հրաման տալու միայն գրա-

վոր ձև են սահմանել, հետևաբար այդ կարգի խախտմամբ (բանավոր) հրամանի չկատարումը պետք է դիտվի որպես ստորադասի պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Դատական և իրավակիրառ պրակտիկայում վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյո՞ք զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է հանդիսանում այն անձը, ով սխալմամբ է զորակոչվել ծառայության: Սա խիստ վիճահարույց հարց է և գտնում ենք, որ նման դեպքերում պետք է տվյալ ծառայողին դիտարկել «ոչ պատշաճ սուբյեկտ», քանի որ տվյալ անձը, ըստ էության, զինծառայող չէ (չնայած ֆորմալ առումով զինծառայող է), նա սխալմամբ է զինված ուժերում ծառայող և եթե վերջինիս կատարած արարքը քրեորեն պատժելի է ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածով, ապա մեր կարծիքով, նա քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել ընդհանուր հիմունքներով:



ԱՆՈՒՇ ՄՈՎԱԽՍՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարևորելով հանրային ծառայության դերը պետության խնդիրների և գործառույթների արդյունավետ իրականացման գործում՝ յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրն է հանրային ծառայության կայուն համակարգի ստեղծումը և զարգացումը: Հանրային ծառայության համակարգի ստեղծման և ներդրման պահից ի վեր համակարգի բովանդակությունը կազմող բաղադրատարրերը ենթարկվել է մի շարք փոփոխությունների՝ դիմագրավելով ժամանակի մարտահրավերներին:

Հանրային ծառայության համակարգի բովանդակության վերաբերյալ գիտական գրականության մեջ և նորմատիվ իրավական ակտերում առկա են տարբեր տեսակետներ և բնորոշումներ: Մասնավորապես՝ Դ. Ն. Բախրախի կարծիքով՝ ընդհանուր առմամբ կարելի է հանրային ծառայությունը բաժանել երկու տեսակի՝ քաղաքացիական (պետական մարմիններում ծառայությունը) և ռազմականացված (զինվորական ծառայությունը, հարկային ծառայությունը, մաքսային ծառայությունը)¹:

Յու. Ստարիլովը գտնում է, որ հանրային ծառայությունը կարելի է բաժանել երկու հիմնական տեսակների՝ պետական ծառայություն (զինվորական ծառայությունը) և քաղաքացիական ծառայություն (համայնքային ծառայություն, պետական կազմակերպություններում և հիմնարկներում ծառայություն)²:

«Ռուսաստանի Դաշնությունում պետական ծառայության համակարգի մասին» դաշնային օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական ծառայության համակարգն ընդգրկում է 1) պետական քաղաքացիական ծառայությու-

նը, 2) զինվորական ծառայությունը, 3) այլ տեսակների պետական ծառայությունը: Միաժամանակ հիշյալ օրենքով օրենսդիրը սահմանվել է, որ պետական քաղաքացիական ծառայությունը բաժանվում է դաշնային պետական քաղաքացիական ծառայության և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի պետական քաղաքացիական ծառայության, իսկ զինվորական ծառայությունը և այլ տեսակի պետական ծառայությունը դաշնային պետական ծառայության տեսակներ են³:

Գերմանիայի Սահմանադրության 33-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գերմանացի, կախված իր հնարավորություններից և մասնագիտական որակներից, հավասար իրավունքներ ունի ցանկացած պետական պաշտոն զբաղեցնելու⁴: Գերմանիայում հանրային ծառայությունն ընդգրկում է անձանց երեք շրջանակ՝ պաշտոնյաներ, ծառայողներ և աշխատողներ: Այս բաժանման պատճառը նշանակման իրավական հիմքն է, ըստ որի՝ պաշտոնյաների համար նշանակման ակտը տրվում է հատուկ կարգով, իսկ ծառայողների և աշխատողների համար կնքվում է երկկողմանի ծառայողական պայմանագիր: Պաշտոնյաներն ընդգրկվում են հատուկ խմբում, որոնց հիմնական գործառույթը կառավարումն է, և նրանց գործունեությունը կարգավորվում է 1971 թվականին ընդունված «Պաշտոնյաների մասին» դաշնային օրենքով, որի ուժով պաշտոնյաներ են համարվում պետական համակարգի պաշտոնյաները, դատավորները, բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսները, զինվորական ծառայողները, փոստային

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 127 2022

¹ Տե՛ս **Бахрах Д. Н.**, Государственная служба в Российской Федерации, Екатеринбург, 1995, стр. 21-23.
² Տե՛ս **Стариков Ю. Н.**, Государственная служба в Российской Федерации (Теоретико-правовое исследование), диссертация, 2002, стр. 53.
³ Տե՛ս Федеральный закон от 27.05.2003 N 58-ФЗ, О системе государственной службы Российской Федерации.
⁴ Տե՛ս Grundgesetz für die Bundesrepublik Deutschland, 23.05.1949:

աշխատողները, երկաթգծի ճանապարհային ծառայողները, պետական բանկերի աշխատողները⁵:

ԱՄՆ-ում 20-րդ դարի 70-ական թվականների վերջում տեղի ունեցած բարեփոխումները տարածվում էին նաև պետական ծառայողների վրա: Այդ բարեփոխումների արդյունքում 1978 թվականին վերանայվեց «Պետական ծառայության մասին» ԱՄՆ օրենքը, որով պետական ծառայության հանձնաժողովը վերակազմավորվեց և հանձնաժողովի գործառույթները բաժանվեցին կառավարման բյուրոյի ու պետական համակարգի մարմինների միջև⁶: Հարկ ենք համարում նշել նաև, որ ԱՄՆ-ում քաղաքացիական ծառայությունն առանձնանում է այլ երկրների քաղաքացիական ծառայություններից նրանով, որ ԱՄՆ-ում քաղաքացիական ծառայության համակարգը բաժանվում է մրցութային, բացառիկ և հովանավորչական (պատրոնաժային) տեսակների: «Մրցութային» անվանումը բացատրվում է նրանով, որ քաղաքացիական ծառայության բոլոր նշանակումները կատարվում են միայն մրցութի արդյունքում՝ ըստ արժանիքների համակարգի սկզբունքների՝ մրցութի արդյունքում պաշտոնը զբաղեցնելու համար լավագույն թեկնածուների ընտրության, ինչպես նաև նրանց ծառայողական գործունեության ամենամյա գնահատման հիման վրա: «Բացառիկ» անվանումն արտացոլում է այն դրույթը, որով այդ ծառայության պաշտոնները (Ազգային անվտանգության գործակալության, միջազգային կազմակերպություններում ԱՄՆ-ի ներկայացուցչությունների ծառայողներ) հանվել են քաղաքացիական ծառայության մասին օրենքի շրջանակներից, իսկ «հովանավորչական» անվանումը բացատրվում է նրանով, որ պետական բարձրագույն պաշտոններին նշանակվում են Սպիտակ տանը կուսակցության ներկայացուցչի կողմնակիցները:

Անգլիայում քաղաքացիական ծառայությունը ընդգրկում է քաղաքացիական (ներքին)

ծառայությունը և դիվանագիտական (արտաքին) ծառայությունը: Քաղաքացիական (ներքին) ծառայությունը նախարարությունների, գործադիր մարմինների, այսինքն՝ պետական կառավարման մասնագիտացված մարմինների ծառայողներն են, իսկ դիվանագիտական (արտաքին) ծառայությունը հիմնականում արտաքին գործերի նախարարության և դիվանագիտական ներկայացուցիչների ծառայողներն են:

Ֆրանսիայում հանրային ծառայությունը փակ և մանրամասն կանոնակարգված վարչական համակարգ է, որի գործունեության կազմակերպման և իրականացման սկզբունքները սահմանված են Սահմանադրությամբ, ինչպես նաև 1789 թվականին ընդունված Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում: Հռչակագրի 6-րդ հոդվածով սահմանված է, որ բոլոր քաղաքացիները առանց որևէ խտրականության իրավունք ունեն զբաղեցնել պետական պաշտոններ՝ կախված իրենց ընդունակություններից: Ֆրանսիայում հանրային ծառայությունը միավորում է պետական և տեղական հանրային ծառայությունները, որոնց համար սահմանված է անձնակազմի դասակարգման, պաշտոնների և դասային աստիճանների միասնական համակարգ⁷:

Հատկանշական է, որ Ղազախստանի օրենսդրությամբ համայնքային ծառայությունը որպես հանրային ծառայության առանձին տեսակ չի առանձնացվում, քանի որ 2007 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներն իրականացնում են մասլիխաթները, նրանց գործունեությունը կարգավորվում է պետական ծառայության մասին օրենսդրությամբ, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները դիտարկվում են որպես պետական կառավարման ամբողջական համակարգի մաս⁸:

Հայաստանում հանրային ծառայության տեսակների վերաբերյալ իրավական կար-

⁵ Տե՛ս **Василенко И.А.**, Административно-государственное управление в странах Запада: США, Великобритания, Франция, Германия, Москва, 2000, стр. 130.

⁶ Տե՛ս **Василенко И.А.**, Административно-государственное управление в странах Запада: США, Великобритания, Франция, Германия, Москва, 2000, стр. 141.

⁷ Տե՛ս **Граждан В. Д.**, Государственная гражданская служба, учебник, Москва, 2007, стр. 458.

⁸ Տե՛ս **Турисбек А. З.**, Государственная служба в Республике Казахстан (проблемы теории и практики), диссертация, 2011, стр. 29.

գավորումներ առաջին անգամ նախատեսվել են 2001 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՕ-272 օրենքով⁹, որի 1-ին հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունը պետությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է 1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքականություն իրականացնելը, 2) պետական ծառայությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը, ինչպես նաև 3) պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը:

Միաժամանակ օրենսդիրը օրենքով հստակ սահմանել է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքականությունն իրականացնում են *քաղաքական* ու *հայեցողական* պաշտոններ զբաղեցնող անձանց միջոցով: *Քաղաքական պաշտոնը* Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով ընտրովի կամ նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ընդունում է քաղաքական որոշումներ և համակարգում դրանց կատարումը, փոփոխվում է քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում, իսկ *հայեցողական պաշտոնը* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ընդունում է որոշումներ և համակարգում դրանց կատարումը, կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

Նշված հասկացությունների բովանդակությունից հետևում է, որ քաղաքական և հայեցողական պաշտոնների հասկացությունների էական առանձնահատկությունն այն է, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը *փոփոխվում է* քաղաքական ուժերի

հարաբերակցության փոփոխության դեպքում, իսկ հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը *կարող է փոփոխվել* քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

Որպես հանրային ծառայության տեսակ՝ օրենքով առաջին անգամ սահմանվեց նաև պետական ծառայության և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայության հասկացությունները, որի համաձայն՝

Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը:

Նշված բնորոշումների բովանդակությունից հետևում է, որ ինչպես պետական ծառայությունը, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը կոչված են իրականացնելու պետության խնդիրներն ու գործառույթները, և նշված ծառայությունների առանձնահատկությունն այն է, որ պետական ծառայությունը պետական մարմինների, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայությունը տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրներն ու գործառույթներն են իրականացնում:

2001 թվականին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով քաղաքացիական աշխատանքը օրենսդիրը նախատեսեց որպես հանրային ծառայության տեսակ և սահմանվեց, որ *քաղաքացիական աշխատանքը* Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով: Հիշ-

⁹ Տե՛ս ՀՀՊՏ 2002.01.09/1(176):

յալ իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ քաղաքացիական աշխատանքը, լինելով հանրային ծառայության տեսակներից մեկը, հավասարապես իրականացվում էր և՛ պետական մարմիններում, և՛ տեղական ինքնակառավարման մարմիններում:

Օրենքով հստակեցվեց նաև, որ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ծառայությունը չի կարող դիտարկվել որպես հանրային ծառայության տեսակ: Տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք կոչված են իրականացնելու քաղաքական և հայեցողական, ինչպես նաև հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց լիազորությունների կատարմանն աջակցող անհրաժեշտ տեխնիկական սպասարկում:

2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքով¹⁰ նորովի մեկնաբանվեց հանրային ծառայության հասկացության բովանդակությունը, որն առավել ամբողջական դարձրեց Հայաստանի Հանրապետությունում գործող հանրային ծառայության համակարգը: Մասնավորապես՝ 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանվեց, որ հանրային ծառայությունը պետությանը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է 1) պետական ծառայությունը, 2) համայնքային ծառայությունը, 3) պետական և համայնքային պաշտոնները:

2001 թվականին ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի և 2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի համադրական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ «պետական ծառայություն» և «համայնքային ծառայություն» հասկացությունները նույն բովանդակությամբ սահմանվել են նաև «Հանրային ծառայության մասին» օրենքով՝ միայն «տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայություն» բառերը փոխարինվել են «համայնքային ծառայություն» բառերով: Բացի այդ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով որպես հանրային ծառայության տեսակ նշված քաղաքական և հայեցողական պաշտոնները նույնաբովանդակ սահմանումներով ներառվել են պետական պաշտոնների միջոցով: Պետք է արձանագրել, որ «քաղաքացիական աշխատանք» հասկացության սահմանման բովանդակությունից արդեն իսկ պարզ է դառնում, որ այն ներառված չէ հանրային ծառայության համակարգում, այսինքն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիական աշխատանքը չի համարվում հանրային ծառայություն, և քաղաքացիական աշխատանք կատարող անձանց հետ կապված աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսդրությամբ: Հարկ է նկատել նաև, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով պետական և համայնքային պաշտոնները սահմանվել են որպես հանրային ծառայության առանձին տեսակ, սակայն պետական և համայնքային պաշտոնների սահմանումների կամ հասկացությունների իրավական բովանդակության վերաբերյալ որևէ իրավադրույթ օրենքով նախատեսված չէ:

Հանրային ծառայության համակարգի բարեփոխումների արդյունքում 2018 թվականի մարտի 23-ին ընդունվեց «Հանրային ծառայության մասին» ՀՕ-206-Ն օրենքը¹¹: Հիշյալ օրենքով միջազգային լավագույն փորձի հիման վրա ամբողջությամբ վերանայվեց հանրային ծառայության համակարգը, այդ թվում՝ հանրային ծառայության տեսակները: Այսպես՝ 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենք-

¹⁰ ՏԵՍ ՀՀՊՏ 2011.06.17/37(840):

¹¹ ՏԵՍ ՀՀՊՏ 2018.03.29/24(1382):

ներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է 1) պետական ծառայությունը, 2) համայնքային ծառայությունը և 3) հանրային պաշտոնները:

Պետք է արձանագրել, որ 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքով հստակ սահմանված է հանրային ծառայության յուրաքանչյուր տեսակի իրավական բովանդակությունը: Այսպես՝

Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

Համայնքային ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենքներով և համապատասխան ավագանու որոշումներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

Հանրային պաշտոններն ընտրովի կամ նշանակովի պաշտոններ են, որոնք զբաղեցվում են քաղաքական գործընթացների, հայեցողական որոշումների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ընթացակարգերի արդյունքով: Այդ պաշտոններն զբաղեցնող անձինք իրենց լիազորությունների շրջանակներում անհատական կամ կոլեգիալ կարգով ընդունում են որոշումներ, պատասխանատվություն կրում իրենց կայացրած որոշումների համար, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի և 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքի համակարգային և համադրական վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ նոր օրենքով հանրային ծառայության տեսակները բովանդակային առումով փոփոխության չեն ենթարկվել, «պետական ծառայություն» և «համայնքային ծառայություն» հասկացությունների նույնաբովանդակ սահմանումներ են ամրագրվել նաև «Հանրային ծառայության մասին» նոր օրենքով՝ միայն սահմանվել է, որ տեղական ինքնակառավարման մարմինները, բացի Հայաստանի Հանրապետության օրենքներով, իրականացնում են նաև համապատասխան ավագանու որոշումներով

վերապահված լիազորություններ: Բացի այդ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 4-րդ հոդվածի 2-րդ մասերի պարզ, տեքստուալ մեկնաբանությունից պարզ է դառնում, որ հին օրենքով նախատեսված պետական և համայնքային պաշտոնները ներառվել են հանրային պաշտոնների մեջ: Պետք է ընդգծել նաև, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով լրացվեց նաև օրենսդրական բացը և նոր օրենքով օրենսդիրը սահմանեց հանրային պաշտոնների հասկացության իրավական ձևակերպումը, ինչը նախատեսված չէր «Հանրային ծառայության մասին» նախկին օրենքով:

Հարկ է նկատել, որ 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքով օրենսդիրը սահմանել է նաև, որ *քաղաքացիական աշխատանքը* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառնությունների իրականացումն է պայմանագրային հիմունքներով, իսկ *տեխնիկական սպասարկում* իրականացնող անձինք կոչված են իրականացնելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրներ ու գործառնություններ, ինչպես նաև քաղաքական, վարչական և ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական աջակցությունը:

Նշված բնորոշումներից ակնհայտ է, որ թե 2011 թվականին, թե 2018 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» օրենքով քաղաքացիական աշխատանքը և տեխնիկական սպասարկումը չեն համարվում հանրային ծառայություն և ընդգրկված չեն հանրային ծառայության համակարգում, այդ պաշտոններն զբաղեցնող անձանց հետ կապված աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Աշխատանքային օրենսդրությամբ, իսկ քաղաքացիական աշխատանք կատարող անձանց վրա «Հանրային ծառայության մասին» օրենքի գործողությունը տարածվում է միայն այդ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

Ամբողջացնելով հետազոտության արդ-

յուքները՝ պետք է արձանագրենք, որ, ցավոք, ներկայումս օրենսդրությամբ հստակ և միանշանակ չի լուծվել պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների ծառայողների կարգավիճակը: Պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների ծառայողների հետ կապված աշխատանքային հարաբերությունները ներկայումս կարգավորվում են աշխատանքային օրենսդրությամբ: Հարկ է նշել, որ պետական և համայնքային կազմակերպությունները և հիմնարկները ստեղծվում են ոչ առևտրային նպատակներով և լուծում են մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության ոլորտի խնդիրները, որոնք ծառայում են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների առջև: Այսինքն՝ ինչպես հանրային ծառայողներն ու հանրային պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձինք, այնպես էլ պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների ծառայողներն կոչված են իրականացնելու վերը նշված բնագավառներում պետության խնդիրներն ու գործառույթները, ուստի գտնում ենք, որ պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների ծառայողներն նույնպես պետք է համարվեն հանրային ծառայողներ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք սահմանել, որ պետական և համայնքային կազմակերպությունների, հիմնարկների ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայողներ և նրանց վրա տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված իրավական կարգավորումները:

Այսպիսով՝ հետազոտության արդյունքների հիման վրա կարող ենք արձանագրել, որ ներկայումս Հայաստանում գործող հանրային ծառայությունը ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: Հայաստանում հանրային ծառայության իրավական համակարգը ներդրման պահից սկսած երկար ճանապարհ է անցել, դիմագրավելով ժամանակի մարտահրավերներին և պահանջներին, ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, հանրային ծառայության ոլորտում բարեփոխումների ռազմավարությունը հիմնականում նպատակաուղղված է հանրային ծառայության համակարգի շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը, միջազգային լավագույն փորձին համապատասխանեցմանը, ինչպես նաև համակարգում առաջացած հիմնախնդիրների իրավական լուծմանն ու թերությունների վերացմանը:



ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱԼ

իրավաբանական գիտությունների թեկնածու

ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ ԵՎ ԴՐԱ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՈՒՄԸ

